16-22 ՀՈՒՆԻՍ 2023 ՈՒՐԲԱԹ 23(5758)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Քյոլնի քաղխորհուրդը սատարում է՝ «Նուռ» հուշարձանն (առայժմ) իր տեղում կմնա

Վերնագրում փոխանցել ենք այն, ինչ հունիսի 15-ին «Ցեղասպանությունը հիշելով» նախաձեռնության անդամներն են ծանուցել մամլո հաղորդագրությամբ: «Բունդեսթագի 2016-ի հունիսի 2-ի Հայոց ցեղասպանության եւ Գերմանիայի համապատասխանատվության բանաձեւից 7 տարի անց, Քյոլնի քաղխորհուրդն ընդունեց «Այս ցավը բոլորինս է» հուշարձանը՝ որպես հիշողության մշակույթի կարեւոր՝ քննադատական բաղադրիչ»: 2018-ի ապրիլին նախաձեռնության անդամների ջանքերով առաջին անգամ հուշարձանը դրվեց Հոհենցոլլերնբրյուքեում, Վիլհելմ 2-րդի ձիարձանի «թիկունքում», 5 տարի դրվեց ու հանվեց, եւ միայն Քյոլնի հանրային ակտիվ բանավեճի, պայքարի շնորհիվ, երեկ քաղխորհուրդը միաձայն որոշեց՝ հուշարձանն այլեւս Քյոլնի համայնապատկերի մաս է կազմում: Հուսանք՝ ընդմիշտ:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Դեպի ոստիկանապետություն

Չեմ կարծում, որ փաստաբանների պալատը ամենաճիշտ որոշումն է կայացրել բողոքի երթ կազմակերպելով դեպի Եվրոմիության ներկայացուցչության գրասենյակ: Դա հիշեցնում է Սովետի ժամանակները, երբ քաղաքացին, ճարահատ, բողոքի նամակներ էր ուղարկում, այն էլ՝ պատվիրված փոստով, Մոսկվա, ակնկալելով վերադաս օրգանների միջամտությունը իր նկատմամբ կատարված անարդար վերաբերմունքը սրբագրելու ակնկալությամբ: Մոսկվան, կարծում եմ, հաճույքով էր ընդունում նման նամակ-բողոքները, քանզի դրանով վերահաստատվում-ամրապնդվում էր սովետական երկրի ուղղաձիգ կառավարման պարտադիր սկզբունքը: Այլ հարց է, թե, ինչպես այն ժամանակ Մոսկվան, այժմ Եվրոմիությունը, ինչպես կընդունի, ավելի շուտ՝ ընդառաջ քայլ կկատարի՞ դեպի նման բողոքները:

Այժմ բոլորովին այլ հարաբերություններ են, ու Եվրոմիության անդամ երկրները բնավ պիտի չուզենային իրենց քաղաքացիական հասարակություններին Հայաստանը ներկայացնել որպես մի երկիր, որը արագ քայլերով գնում է դեպի ոստիկանապետություն՝ ոչ թե իր քաղաքացիների անդորրը եւ կարգուկանոնը պահպանելու, այլ՝ գործող միահեծան իշխանությունը բռնի ուժով պաշտպանելու նպատակով: Չէ՞ որ այդ իշխանության գոյատեւումը, գեթ առժամանակ, կարեւոր է Եվրոմիության, եւ ոչ միայն, բոսերի համար տարածաշրջանային եւ նույնիսկ աշխարհաքաղաքական իրենց շահագրգռությունները գոհացնելու տեսակետից:

Իրականում նրանք կույր չեն, ամենեւին: Կույր են ձեւանում պարզապես: Հաճույքով են ընդունում «ժողովրդավարության բաստիոնի» բերդապահի կուրծքծեծոցները «խաղաղության դարաշրջան» բացելու վերաբերյալ: Մինչդեռ մանրամասն գիտեն, օրինակ, թե ինչպես են ծախսվել դեռեւս 2020 թվականի ապրիլի 23-ից ի վեր իրենց տրամադրած, Մ. Նահանգների հետ համագործակցաբար, միլիոնավոր դոլարները ի խնդիր Հայաստանում ոստիկանության համակարգի բարեփոխումների, Օպերատիվ կառավարման կենտրոնի եւ պարեկային ծառայության ստեղծման: Նրանք չե՞ն տեսել, որ 2018 թ. մայիսից ի վեր, ամբողջ հինգ տարի, Հայաստանում ներքին օրակարգերի գլխավոր թեման աղմկահարույց թե անաղմուկ ձերբակալություններն են ու քաղաքական հետապնդումները, դատարաններում կայացող կամայական որոշումները, անարդար վճիռները, չպատճառաբանված պատիժներն ու պատժաչափերը՝ ընդդեմ քաղաքական նախկին առաջնորդների, ընդդիմադիր գործիչների, ակտիվիստների, անգամ՝ պատերազմի ընթացքում որդեկորույս դարձած մայրերի...

Մի՞թե օտարերկրյա դեսպանների ամենատես աչքերը չեն տեսնում, նրանց գործակալները չեն նկատում այն խժդժությունները, որոնց հեղինակը ներկա իշխանության ձեռքին ճնշող գործիքի վերածված ոստիկանությունն է, իր տարբեր՝ գունավոր եւ անգույն, երբեմն էլ՝ անտեսանելի ստորաբաժանումներով, Սովետից մնացած իր սովորույթներով: Այլ պարագաներում այդ ամբողջը կդառնար մեր երկիրը պատժամիջոցների տակ խեղդելու «համոզիչ» պատրվակ: Իսկ այժմ, երբ փաստաբաններն անգամ պահպանված չեն ծեծուջարդից, էլ ո՞ւր մնաց՝ նրանց պաշտպանյալները: Լուռ են բոլորը: Լուռ է՝ նման հարցերում գերզգայո՞ւն Մ. Նահանգների դեսպանությունը, լուռ են ազդեցիկ մյուս երկրների դեսպանատները, նաեւ, բնականաբար, Ռուսաստանի դեսպանատունը: Եվ այդ համընդհանուր լռության մեջ հարցը հնչում է ինքնըստինքյան. այդ ամենը, թեկուզ հակադիր կողմերից համադրված դավադրություն չէ՞ մեր երկրի, մեր ժողովրդի դեմ:

Հետագայում ես առիթ կունենամ բացատրելու «ոստիկանապետություն» հասկացության էությունը՝ համապատասխան պատմական ու միջազգային օրինակներով: Մինչ այդ կուզենայի բոլորովս հասկանայինք, որ այս ատելի ու մերժելի կառավարման ձեւը շատ է ձեռնտու թե՛ մեր թշնամիների եւ թե՛ «բարեկամների» համար: Ոստիկանապետությունը, ըստ ձեւի եւ ըստ բովանդակության, խոցելի է դարձնում մեր երկիրը, պետությունը: Որեւէ հարմար պահի, մանավանդ երբ ի կատար ածվեն դավադիր բոլոր առաջադրանքները, կարելի է իբր «բացահայտել» ոստիկանապետության գոյությունը եւ ծնկի բերել մեր երկիրն ու պետությունը մեր իսկ ձեռքով, սակայն արդեն ուշացած:

Առայժմ ընթանում ենք դեպի ամբողջական ոստիկանապետություն, մեր իսկ հանդուրժողականությամբ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Բյուջեից մինչեւ ներքաղաքական մարտեր

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

### Տպավորված բյուջեի կատարողականից

Ըստ խորհրդարանում այս շաբաթ ներկայացվող 2022 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության՝ Հայաստանն այլեւս աղքատ երկիր չէ, ու անգամ աշխարհի դոնոր համայնքի անդամ է դարձել (բա՜), կառավարությունն ապահովել է 12,6 տոկոս տնտեսական աճ, մեկ միլիարդ դոլարի ներդրումներ, բյուջեի՝ համարյա հարյուր տոկոսին հասնող կատարում: Բոլոր նախատեսված ծրագրերը կատարվել են, միջին աշխատավարձը բարձրացել է, կենսաթոշակները՝ երեք անգամ են ավելացել, արտաքին պարտք- ՀՆԱ հարաբերության տոկոսի զգալի իջեցում է եղել եւ զարմանահրաշ այլ հաջողություններ են արձանագրվել: Որոշ առումով ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված ռուսական կապիտալի ներհոսքով էլ խթանվել են շատ ոլորտներ, թեկուզ դա ժամանակավոր է, բայց դրական դերակատարում է ունեցել անցած տարվա բյուջեի կատարողականի վրա:




Իհարկե՝ ընդդիմադիր կորպուսի ներկայացուցիչները կատարողականի շատ ցուցանիշներ վիճարկում էին՝ 55 հազար նոր բնակարանների՝ վարկային միջոցների ներգրավմամբ կառուցումը հետագայում անշարժ գույքի շուկան պայթեցնելու պատճառ դիտարկելով, կամ մատնանշելով իրական կյանքի բարելավման թեականութունը՝ դրա նշան համարելով անցած տարում 28 հազար միակողմանի մեկնումները Հայաստանից, կամ ծնելիության նվազումը: Սակայն կառավարութան ներկայացուցիչները գոհ էին գիտատեխնիկական եւ արտադրական ոլորտների հետագա զարգացման հեռանկարից՝ ներդրումները նշելով եւ մի շարք այլ նոր մոտեցումներ տարբեր ոլորտներում:

Բյուջեի կատարողականից տպավորված՝ ասացի մի կողմ դնեմ ամենաշաբաթյա վերլուծականներիս ֆորմատն ու մտնեմ միջին թոշակառուի մաշկի մեջ՝ կյանքի բարելավումը փորձ անելով նկատել կենսաթոշակառուի պատուհանից, այն, ինչ շատերը չեն անում չուզողաբար (միգուցե, իրոք, լրագրողի սեւ ակնոցը մի կողմ դնելով՝ լուսավորը նկատեմ, չէ՞ որ լավատեսութունն ավելացնում է կյանքի տեւողութունը):

Ահա, ուրեմն, ամրապնդվելով տարեկան մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի միջին գումար 5-6 հազար դոլարի ջերմացնող մտքից, իշխանական տնտեսագետ **Գեւորգ Պապոյանի** նշած՝ նոր իշխանությունների օրոք թոշակի արդեն երեք անգամ բարձրացված լինելու իրողութունից, լրիվ լավատեսորեն տրամադրված, ասացի նոր ձեւով վերահաշվարկեմ 500 հազարից ավելի թոշակառուների կենսազամբյուղի անհատական բացվածքը, հասկապես նրանցը, որոնք լրիվ մենակ են մնացել իրենց բարձրացված թոշակներով՝ կոմունալ վճարների, կենսական գնումների եւ մի շարք այլ ամենաանհրաժեշտ ծախսերի առումով:

⇨4

## Էրդողանը Շուշիում հյուպատոսարան բացելու խոսք է տվել Ալիեւին, իսկ ադրբեջանցի կանանց՝ «առնվազն 5 երեխա» բերելու խորհուրդ

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Թուրքագետ

Մայիսի 28-ինշ ընտրությունների երկրորդ փուլում վերստին նախագահ ընտրվելուց հետո **Ռեջեփ Թայիփ Էրդողանը**, ըստ սովորության, արտերկրյա առաջին այցը կատարեց «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետություն», իսկ երկրորդը՝ Ադրբեջան: Երկուսն էլ բնույթով շատ «եղբայրական» են եւ հունիսի 13-ի նույն օրն են կատարվել: Պարզապես Կիպրոսում ընդդիմությունը, ինչպես նաեւ ընդդիմադիր լրագրողները զայրացել են, որոնցից մեկին՝ ձախակողմյան «Ենի Դյուզեն» թերթի հեղինակ **Ինջիլիին**, անկախ հավատարմագրված լինելու հագամանքից, անվտանգության աշխատակիցները դուրս են վռնդել դահլիճից, թե իր ներկայությունն այնտեղ արգելված է: Այնուհետեւ, ինչպես «Arti Gercek»-ն է վկայում, պարզվել է, որ վտարումը կատարվել է «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետություն»-ում Թուրքիայի դեսպանի հրահանգով:

Ավելին՝ Էրդողանի անվտանգության նկատառումներով Կղզու թուրքական հատվածում գտնվող Նիկոսիայի «Էրջան» օդակայանը, որ ինքնակոչ այս հանրապետությանն արտաքին աշխարհին կապող օդային միակ օղակն է, ավելի քան 4 ժամ փակվել է բոլոր տեսակի թռիչքների համար, պատճառելով բուռն դժգոհություն ուղեւորներին եւ ընդդիմադիր քաղաքական ուժերին: Այսինքն Էրդողանի այցն ընթացել է տհաճ անակնկալներով:

Հակառակ դրան, նրա երկրորդ՝ Ադրբեջան կատարած այցը եղել է ավելի քան բարեհաջող: Բաքու ուղեւորվելիս Էրդողանին, բացի իր տիկնոջ՝ **Էմինեից**, ուղեկցել են արտգործնախարար Հաքան Ֆիդանը, պաշտպանության նախարար **Յաշար Գյուլերը**, Ազգային հետախուզության կազմակերպության ղեկավար **Իբրահիմ Քալընը** եւ ուրիշներ, բոլորն էլ նորաթուխ:

⇨5

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Առաջնութիւնը մերն է

Բոլոր ասպարէզներու մէջ ալ մրցակիցներ ունինք՝ մեր քոնեաքը հիանալի է, սակայն ֆրանսականը նուազ հիանալի չէ: Մեր հանքային ջուրը լաւորակ է, սակայն աշխարհի ամենալաւը չէ: Վերնիսաժի ձեռային աշխատանքները իսկապէս բարձրորակ են, սակայն ուիշ ազգեր ալ ունին ժողովրդային ձեռարուեստի հիանալի գործեր: Ու կը մտածեմ՝ ի՞նչ ունինք, որ ուրիշները չունին, կամ ունին, սակայն մեր ունեցածին հետ չեն կրնար մրցիլ: Գուցէ մեր փոքրիկ երգիչները իրենց հիանալի կատարումներով, գուցէ, սակայն տեսած եմ նմանատիպ օտար երգչախումբեր, որոնց կատարումներն ալ հիանալի են:

Ու այսպէս երկար մտորելէ ու պրպտելէ ետք վերջապէս գտայ բան մը, որ թէեւ ուրիշներն ալ ունին, սակայն մերը աւելի ստեղծագործական է, աւելի պատկերաւոր, նոյնիսկ՝ հումորով: Կռահեցի՞ք, թէ՞ տակաւին կը մտածէք: Լաւ, ըսեմ.

Ես կ՚առաջարկեմ զիրար քննադատելու, զիրար խայտառակելու, զիրար մերկացնելու, իրարու տակ փորելու, մեր աղտոտ լաթերը հրապարակաւ ցուցադրելու, եւ այդ ընթացքին յատուկ փողոցային բառապաշար օգտագործելու, նողկալի հայհոյանքներ, անէծքներ, սպառնալիքներ տեղացնելու մրցում կազմակերպենք, ուր անխուսափելիօրէն առաջնութիւնը մերը կ՚ըլլայ անկասկած: Ո՛չ ծախս, ո՛չ բան, ձրի՛... Զազրախօսութեան ու վատաբանութեան ամբարուած այնքան պաշար ունինք, որ զանոնք դուրս թափելու առիթի կը սպասենք:

Իսկապէս, շատ կը մտահոգուիմ եւ կը բարկանամ, երբ դիմատետրը (Ֆէյսպուքը) բեռնաւորուած կ՚ըլլայ այսօրինակ «աղբով»... Գիտեմ որ կան գիտակից, լուրջ եւ յարգարժան անձնաւորութիւններ ու մտաւորականներ, սակայն անոնք չեն մտներ այս ցեխոտ ու կեղտոտ տետրին մէջ: Հայրենիքն ու անոր ժողովուրդը սփիւռքահայուն համար միշտ իտեալական, անարատ, մաքրամաքուր նկատուած են չափազանցեալ կերպով, սակայն երբ կը մօտենաս ու կը տեսնես, որ տետրը պղծող տեղացիներ կան իրենց սանձարձակ գզուըռտոցային գրութիւններով՝ **«Այ էշից ընկած, այ չաթլախ...քֆեմ քո նամուսին...դեբիլ...անգրագէտ ժեխ** (Գրագէտ ժէխը ո՞րն է), **ունիտազ...վեժուածք... պոռնիկ...բոզի տղայ...)»,** կը բարկանաս, կ՚ուզես պատասխանել առ որ անկ է, սակայն կը վախնաս, որ այս անգամ դուն ըլլաս թիրախը անոնց ցեխարձակումներուն ու հայհոյալից յարձակումներուն:

Իմ սրտակից, բարի հայեր, վերադարձուցէք Հայաստանի վարկը, այսօրինակ տականքները վանեցէք ձեր մէջէն, ամօթ է, մենք պիտի պայքարինք նաեւ մեր բարոյականով, մեր գիտակցական մակարդակով, մասնաւորաբար այս օրերուն, երբ մեր երկրի ապագան այնքան աղօտ է, այնքան վտանգալից: Զիրար բզկտելու փոխարէն իրարու ձեռք բռնենք, իրարմով գօտեպնդուինք եւ ճակատ կազմենք թշնամիին դէմ, ո՛չ իրարու դէմ:

Ազատ էք քննադատելու, այդ ձեր իրաւունքն է, սակայն՝ լրջօրէն, առանց հայհոյելու, հայուն չի վայլեր այս լեզուն: Այսպիսի մատնանշումներ երբ կ՚ընեմ, անպայման նկատի կ՚ունենամ մէյ մը սփիւռքի մեր հայրենակիցները, որոնք պիտի ափսոսան այս վիճակին համար, մէյ մըն ալ մեր թշնամիները, ու կը պատկերացնեմ թէ անոնք որքան գոհացումով եւ ուրախութեամբ պիտի ընկալեն մեր ներքին անհաշտ, անհամերաշխ, նոյնիսկ՝ իրարու դէմ թշնամական վարքագիծը, երկրի մը մէջ, որ պատերազմի մէջ է, որ բաւական լուրջ լինել-չլինելու կացութեան մէջ է, ուր կը քարկոծուին երկրի երկու կարեւորագոյն իշխանութիւնները՝ քաղաքական եւ կրօնական: Երբ երկրին ներքին վիճակը անկայուն է, ամբողջ երկիրը վտանգուած կ՚ըլլայ եւ զայն քանդելը՝ շատ դիւրին: Մենք չենք անդրադառնար, որ մեր այս անհաշտ, անհամերաշխ վիճակը ուղղակի պատուհաս է, մենք մեր ձեռքով կը սղոցենք այն ճիւղը, որուն վրայ նստած ենք, մենք մեր աթոռները, որոնց վրայ հանգիստ կը բազմինք, վառօդի տակառներու կը վերածենք մեր անմիտ, ամօթալի վարքով:

Քննադատելի բաներ շատ կան, դէմ չենք կառուցողական, խելացի քննադատութեանց, ոչ թէ ամենագռեհիկ լեզուով ու բառամթերքով կռիւի:

Աւելի մտահոգիչը այն է, որ կարգ մը կուսակցութեանց ու կազմակերպութեանց անդամներ , իրենց անզգոյշ վարքագիծով, իրենց սուր եւ անբարեհունչ քննադատութիւններով անուղղակիօրէն քաջալեր կը հանդիսանան ֆէյսպուքի այս «հերոսներուն», փոխանակ զանոնք հրաւիրելու, որ զգոյշ ըլլան իրենց որակումներուն մէջ, բարոյականութեան սահմանները չանցնին ու չխայտառակեն իրենց ետեւ կանգնած կազմակերպութիւնները:

Լուրջ, մտածուած, օգտակար դիտողութիւններով բեռնաւորուած որեւէ քննադատութիւն կրնայ աւելի ազդեցիկ ըլլալ, քան ցեխարձակումները:

Պահպանենք հայուն աւանդական վարկը:

# Միջնորդավորված երկխոսություն Թեհրանի ու Վաշինգտոնի միջեւ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**Իրանում ՀՀ նախկին դեսպան**

Վաշինգտոնի հետ Թեհրանի միջնորդավորված երկխոսության մասին շրջանառվող իրարամերժ խոսակցություններին վերջ տրվեց ԻԻՀ ԱԳՆ խոսնակ **Նասեր Քանանիի**՝ հունիսի 12-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ: Նա հանրությանը տեղեկացրեց, որ մոտ ապագայում սպասվում է ԻԻՀ եւ ԱՄՆ քաղաքացիություն ունեցող բանտարկյալների փոխանակում: Բացի այդ, Քանանին հայտարարեց, որ Իրանի միջուկային թղթածրարը նույնպես շարունակում է մնալ ԻԻՀ ԱԳՆ եւ բանակցող թիմի ուշադրության կենտրոնում:




Միջնորդավորված երկխոսության փաստը հաստատվեց նաեւ ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ **Մեթյու Միլլերի**՝ հունիսի 13-ի մամուլի ասուլիսի ժամանակ: Նա պաշտոնապես հայտարարեց, որ Թեհրանի, Վաշինգտոնի ու Բաղդադի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, վերադարձվել է ԱՄՆ-ում սառեցված Իրանին պատկանող գումարներից 3 մլրդ դոլարը: Ըստ նույն հաղորդագրության, ապասառեցված գումարը կարող է օգտագործվել բացառապես մարդասիրական նպատակների եւ պատժամիջոցների հետ առնչություն չունեցող միջբանկային փոխանցումների համար:

Մինչ Քանանիի կողմից ԱՄՆ-ի հետ շփումների բացահայտումը, միջազգային հանրության ուշադրությունը կենտրոնացած էր Օմանի սուլթան **Հեյսամ բին Թարիքի**՝ մայիսի 28-ի Թեհրան այցելության արդյունքների վրա: Սակայն, զանգվածային լրատվամիջոցների տրամադրության տակ եղած սուղ տեղեկատվության պատճառով, Օմանի սուլթանի Թեհրան այցելության ընթացքում մամուլն ավելի շատ անդրադառնում էր այցի խորհրդանշական նրբություններին, փորձելով «գաղտնազերծել» դրանցում թաքնված ուղերձները:

Ամերիկյան Axios լրատվական կայքը, հաստատելով Թեհրանի ու Վաշինգտոնի միջեւ ուղիղ շփումների երկուստեք ցանկությունը, նշեց, որ ԱՄՆ նախագահ **Բայդենի** կառավարության ավագ ներկայացուցիչը, Իրանի հետ միջուկային ծրագրին վերաբերող հարցի շուրջ համաձայնության գալու նպատակով, մինչեւ Իրանի ու Օմանի բարձր ղեկավարության միջեւ կայացած հանդիպումը, գաղտնաբար այցելել էր Մասկատ:

Axios-ը վկայակոչելով ԱՄՆ-ի, Իսրայելի ու Մեծ Բրիտանիայի հինգ պաշտոնատար անձանց ասածները նշել է, որ Բայդենի մերձավորարեւելյան հարցերով ավագ խորհրդական **Burt McGurk**-ը, Իրանի հետ ՀԳՀԾ-ի շուրջ դիվանագիտական շփումներ ունենալու նպատակով այցելել է Օման:

Սակայն հայտնի է, որ Ջո Բայդենը բազմիցս բացառել էր Իրանի հետ դիվանագիտական շփումների հարցը Սպիտակ տան օրակարգ ներառելու հավանականությունը: Նույնիսկ, Իրանում ընթացող ներքաղաքական խմորումների ժամանակ Բայդենն ասել էր, որ ՀԳՀԾ-ը (Համատեղ գործողությունների համապարփակ ծրագիր) «մահացել» է, սակայն Սպիտակ տունն այդ լուրը բարձրաձայնելու մտադրություն չունի:

Հակառակ Սպիտակ տան պաշտոնական տեսակետի, արեւմտյան մամուլը համառորեն լուրեր էր տարածում, որ Բայդենի կառավարությունը ՀԳՀԾ-ի շուրջ Սպիտակ տան համար ընդունելի տարբերակով Իրանի հետ համաձայնության գալու նպատակով, անդրկուլիսյան քայլեր է ձեռնարկում:

Վերը նշված տեղեկատվությանը կարելի է ավելացնել նաեւ Axios-ի՝ ապրիլի 3-ի հրապարակած լուրն այն մասին, որ Իրանը մերժել է ՀԳՀԾ-ի շուրջ ժամանակավորապես համաձայնության գալու վերաբերյալ Բայդենի կառավարության առաջարկությունը:

Նշված հաղորդագրության մեջ Axios-ը տեղեկացրել էր, որ Վաշինգտոնի առաջարկությունը նախատեսում էր ուրանի 60 տոկոսը գերազանցող հարստացման գործընթացը Թեհրանի կողմից կասեցնելու դեպքում չեղարկել Իրանի նկատմամբ գործադրվող ԱՄՆ որոշ պատժամիջոցներ: Նույն հաղորդագրության մեջ նաեւ նշված է, որ տվյալ առաջարկությունը նման է 2013 թվականին նախագահ **Բարաք Օբամայի** կառավարության ներկայացրած առաջարկությանը, որն ի վերջո հանգեցրեց Ժնեւյան հայտնի համաձայնագրի ստորագրմանը:

Ամերիկյան մամուլի հրապարակած հաղորդագրություններից տեղեկանում ենք նաեւ, որ ավագ խորհրդական Burt McGurk-ը Մասկատ է այցելել մայիսի 8-ին, որին հաջորդել էր նաեւ Սպիտակ տան ազգային անվտանգության գծով խորհրդական **Ջեյք Սալիվանի** այցը Սաուդյան Արաբիա եւ Իսրայել:

Ուշագրավ է, որ ԱՄՆ պաշտոնյաի Մասկատ կատարած այցի մասին պաշտոնական տեղեկատվություն չէր տարածվել: Սակայն, Axios-ի վկայաբերած աղբյուրների համաձայն, Burt McGurk-ի այցի նպատակը Օմանի միջնորդությամբ ՀԳՀԾ-ի շուրջ Իրանի հետ խորհրդակցություն անցկացնելն էր:

Axios կայքին տված հարցազրույցի ժամանակ իսրայելցի մի պաշտոնյա նշել է, որ Օմանն զբաղված է Իրանի ու ԱՄՆ-ի միջեւ միջնորդավորված բանակցություններ անցկացնելու աշխատանքով, հավելելով, որ «միջնորդավորված բանակցություններ» ասելով նկատի է առնվում բանակցություններ՝ առանց շահագրգիռ պետությունների՝ ԱՄՆ-ի ու Իրանի մասնակցության:

Այսպիսով, Իրանի ԱԳՆ եւ ԱՄՆ պետքարտուղարության խոսնակների մեկը մյուսին հաջորդած հայտարարությունները փաստում են, որ Թեհրանի ու Վաշինգտոնի միջեւ, այնուամենայնիվ, թեեւ միջնորդավորված՝ բայց բանակցություններ ընթանում են:

Դոկտ. ԱՐՇԱՎԻՐ ԳՅՈՒՆՋՅԱՆ

Մոնրեալ, Կանադա

# Փաշինյանն ու իր վարչակազմը ընթանում են ինքնախաբեության եւ կործանման ճանապարհով, բացի եթե...



***Ստորեւ անգլերենից թարգմանաբար լույս տեսնող հոդվածի հեղինակը հայրենի գիտական շրջանակներին ու նախկին պետական վերնախավին քաջածանոթ գիտնական է, լազերային գիտության վաստակաշատ մասնագետ, Ռամկավար Ազատական կուսակցության եւ Հայկական Բարեգործական ընդհանուր միության նախկին ղեկավարներից, այժմ Թեքեյան մշակութային միության ատենապետ: Նա Կանադայի պետական իշխանությունների կողմից բարձրորեն գնահատված հասարակական գործիչ է: Ուսանելի շատ բան կա նրա ներկա վերլուծականի մեջ:***

*ԽՄԲ.*

Արդեն մոտ մեկ տարի է, ինչ **Փաշինյանի** վարչակազմը առանձին սկսել է իրականացնել մաքոքային դիվանագիտության եւ հանդիպումների միջազգային իրենց իսկ բնութագրմամբ բազմավեկտոր քաղաքականություն:

Չնայած նման հանկարծակի փոփոխության ենթարկված վարքագիծը մարտադաշտում պարտության մատնված պետության համար քննադատելի երեւույթ է, այդուհանդերձ աշխարհասփյուռ հայության գիտակից մեծամասնությունը Հայաստանում, Արցախում թե Սփյուռքում, սկզբնական շրջանում հետաքրքրված էր կատարված շրջադարձով: Նրանք ողջունեցին հայկական ավանդական, հիմնականում արեւելյան կողմնորոշման, պասիվ, գործնականում միակողմանի ձեւաչափով ընթացող արտաքին քաղաքականություն վարելուց հրաժարվելու գաղափարը: Կերպարանափոխությունը կատարվում էր հետեւյալ պայմաններում: Մի կողմից մեր անառարկելի դաշնակից Ռուսաստանը բացահայտորեն ցույց էր տալիս իր խորապես հուսահատեցնող թուրքամետ եւ ազերիամետ կողմնորոշումը, իսկ մյուս կողմից տեղի էր ունենում ԱՄՆ կոնգրեսի խոսնակ **Նենսի Փելոսիի** այցելությունը Հայաստան: Վերջինս փաստորեն բացում էր հաճախ ցանկալի թվացող, բայց երբեք չիրականացված ճանապարհը դեպի խոստումնալից արեւմտյան աշխարհը:

Սա, անշուշտ, անցյալում էր: Այժմ, մոտ մեկ տարի անց, առավել խորը դիտարկելով ընթացիկ իրադարձությունները, Փաշինյանից եւ իր թիմակիցներից սկսած մինչեւ վերջին սփյուռքահայը պարտավոր է աչալրջորեն գնահատել իրականությունը: Մենք բոլորս պետք է դասեր քաղենք: Դասեր, որ պարտավոր էինք վաղուց քաղած լինել: Խոսքը, որն ի դեպ, իրեն հարգող ու պատասխանատվության զգացում ունեցող որեւէ երկրին է վերաբերում, քաղաքականության մեջ բարեկամներին եւ դաշնակիցներին արժեւորելու, գնահատելու մասին է, չմոռանալով միաժամանակ գերակայել երկրի շահերը, սեփական ռազմական ու ինքնապաշտպանական կարողությունները: Հայաստանը, դժբախտաբար, այս առումով պախարակելի վիճակում է, ուստի որոշ ուղղիչ միջոցներին, շտկումներին անհրաժեշտ է առաջնահերթություն տալ:

Թռուցիկ մի հայացք վերջին ամիսների Հայաստանի դիվանագիտական ջանքերին, ցույց է տալիս, որ Փելոսիի աղմկահարույց այցին հետեւեցին եւ մինչ օրս շարունակվում են իրարահաջորդ, անհամոզիչ մաքոքային հանդիպումներ, որոնք տեղի են ունենում պետությունների բարձրաստիճան ղեկավարների հետ հեղինակավոր ոստաններում, ինչպես օրինակ՝ Վաշինգտոնում, Փարիզում, Պրահայում, Բրյուսելում, Անքարայում, Սոչիում, Մոսկվայում եւ այլ վայրերում: Այս բոլոր հանդիպումների մասնակիցներին նախկինում անհավանական էր տեսնել միասին, մեկ սեղանի շուրջ հավաքված: Նրանց թվում են **Փաշինյանը, Վլադիմիր Պուտինը, Իլհամ Ալիեւը, Էմանուել Մակրոնը, Շառլ Միշելը** եւ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը**: Նրանց երբեմն փոխարինել են իրենց համապատասխան երկրների արտգործնախարարները: Նրանց հանդիպումներն այնքան հաճախակի են դարձել, որ հազիվ թե այլեւս կարեւոր իրադարձություններ համարվեն:

Բնականաբար, ո՛չ այդ երկրների բնակչությունը, ո՛չ էլ մասնավորապես աշխարհասփյուռ հայությունը տեղյակ չեն հանդիպումների մանրամասնություններին: Սակայն արդարացի է ակնկալել, որ ներկա ճգնաժամային պայմաններում հատկապես հայերը իրավունք ունենան լրջորեն տեղեկացված լինելու դրանց ամենայն մանրամասնությամբ: Ակնկալվում է տեսնել, որ Փաշինյանն ու իր թիմակիցները կարողացել են առնվազն փոքրագույն առաջխաղացում արձանագրել Հայաստանի եւ Արցախի պատմական եւ մարդասիրական իրավունքների պաշտպանման բնագավառում:

Սակայն, դժբախտաբար, երբ դիտարկում ենք աշխարհի տարբեր վայրերում իրականացվող մեր արտաքին գերատեսչության դիվանագիտական աշխուժությունը, ականատես ենք լինում, որ Հայաստանն ու Արցախը ներկայիս շատ ավելի վատ իրավիճակում են, քան 2020 թվի 44-օրյա պատերազմի ավարտին էին: Երբ հրադադարը կնքվեց նոյեմբերի 8-ին, Արցախից մնացած փոքր տարածքն ու մայրաքաղաք Ստեփանակերտը Լաչինի ազատ միջանցքով դեռեւս ամուր կապված էին Մայր Հայաստանի հետ: Այսօր այն խլված է մեզանից: Նույնիսկ բուն ինքնավար Հայաստանի որոշ տարածքներ ամբարտավան ձեւով բռնազավթված են Ադրբեջանի կողմից: Ավելին, Ալիեւը շատ ավելի ագրեսիվ է դարձել, քան երբեւէ եւ հայկական բոլոր տարածքները, ներառյալ Երեւանն ու Սեւանը, հանդգնում է անվանել այսպես կոչված «Արեւմտյան Ադրբեջանի» բաղկացուցիչ մասեր:

Նման զարհուրելի պատկերի պայմաններում շատերը հավանաբար հույսի եւ սփոփանքի նշույլներ են գտնում՝ տեսնելով բարյացակամ ժպիտներն ու լսելով քաղցր հաճոյախոսությունները, որ Փաշինյանին եւ հայրենի ներկայացուցիչներին են շռայլում արեւմտյան երկրների հայտնի գործիչները, ինչպիսիք են Էնթոնի Բլինքենը, Շառլ Միշելը եւ հատկապես մեր մեծագույն բարեկամը՝ Էմանուել Մակրոնը: Դժբախտաբար նույնիսկ այդ սիրալիր արտահայտությունների ամոքիչ ջերմությունն է անհետացել վերջին շաբաթների «սառուցյալ ջրերում», երբ ցավալիորեն պարզ դարձավ, որ ինչպես արեւելքի, այնպես էլ արեւմուտքի «ռեալպոլիտիկում» ոչինչ չէ փոխել: Ներկայիս, նրանք բոլորն էլ շահագրգռված են Ադրբեջանի նավթով, որպես այլընտրանքային տարբերակ միջազգային էներգառեսուրսներ ձեռք բերելու բարդ գոյամարտում:

Տարօրինակն այն է, որ ադրբեջանական նավթը ի շահ իրենց օգտագործելու տեսակետից նույնքան մերձենայություններ բանեցնելու հնարավորություններ է տալիս Արեւմուտքին, որքան Ռուսաստանը ուկրաինական աղետալի պատերազմի առթիվ սահմանված պատժամիջոցների «ակրոբատիկայում»:

Աշխարհով մեկ սփռված հայերը շշմեցին տեսնելով, թե ինչպես են մեր «արեւմտյան բարեկամները», խորապես տարված ազերի նավթապաշարներով, ողջունում Արցախի հանձնումը Ադրբեջանի բռնատիրական եւ ցեղասպան պետության: Ամեն տեսակի մտահոգություն՝ կապված հայության պատմական եւ մարդասիրական կարիքների հետ անտեսվեց, մի կողմ թողնվեց: Դրանով մի անգամ եւս ապացուցվեց, որ միջազգային դիվանագիտությունը զուրկ է նմանատիպ «պարզամիտ» եւ մշտապես «ձանձրալի» հասկացություններից:

Սակայն, նույնիսկ այսպիսի ձախողումից հետո, Փաշինյանը սրտառուչ կերպով շարունակում է հետապնդել Ադրբեջանի հետ «ամենափրկիչ խաղաղության պայմանագիրը» կնքելու իր նախասիրած նպատակը: Իրականում, թվում է, թե նա այժմ գտել է Հայաստանի սահմանները անձեռնմխելի դարձնելու եւ պահպանելու պատճառաբանությունը: Նա ձգտում է հարեւան Ադրբեջանի մաֆիոզ իշխանությունների հետ կազմել «կադաստրային մի քարտեզ», ենթադրաբար հար եւ նման իր սեփական տան կադաստրային քարտեզին, որ քաղաքային իշխանություններն են տրամադրել իրեն:

Փաշինյանն ու իր թիմակիցները լավ կանեն գիտակցեն, որ նման փաստաթղթերի կույտերը ոչնչով չեն կարողանալու պաշտպանել մեր պետությունը, որը կարիք ունի ռազմական ուժեղ համակարգի առկայությանը, մի ոլորտ, որն ամբողջովին աչքաթող են արել նրանք:

Երբ Ալիեւը իր ետին հարատեւորեն եւ բացահայտորեն պաշտպան կանգնած մեծ եղբոր Թուրքիայի աջակցությունը վայելելով որոշում է քմահաճորեն ոչնչացնել իրենց պատմական հայրենիքում Արցախի 120 հազար հայերին եւ հանդգնում է նաեւ պահանջել մի փոքր կամ մեծ տարածք բուն Հայաստանից, հնարավո՞ր է, որ Փաշինյանը կարողանա նրա ագրեսիվ, տանկերով եւ ԱԹՍ-երով ներբեռնված կրքերը զսպել կնքված խաղաղության պայմանագրի եւ կադաստրային քարտեզի փաստաթղթերով:

Եթե Փաշինյանը կամ նրա թիմակիցներից որեւէ մեկը ակնկալում է, որ ազերի նավթով կաշառված վերոհիշյալ երկրներից որեւէ մեկը կամ մի քանիսը իրենց բանակները կուղարկեն Հայաստանը փրկելու համար, ավելի լավ է պատրաստ լինեն խորը հիասթափություն ապրելու:

Թանկագին հայրենակիցներ, մենք ներկայիս ապրում ենք մեր արդի պատմության ամենաճակատագրական ժամանակները: Մենք բոլորս, որպես հավաքական մի ամբողջություն, պատասխանատվություն ենք զգում մեր պետության ապագայի նկատմամբ:

Հետագա սերունդները կա՛մ գովաբանելու, կա՛մ էլ անիծելու են մեզ՝ կախված այն քայլերից, որ մենք այսօր ենք կատարելու խափանելու համար հնարավոր ամբողջական վերացումը մեր հայկական պետականության:

Փաշինյանն ու նրա վարչակազմը ներկայիս ընթանում են ինքնախաբեության եւ ամբողջական կապիտուլյացիայի ենթարկվելու աղետալի ճանապարհով: Միայն համայն ազգաբնակչությունը եթե ոտքի կանգնի, կկարողանա բացառել սպասվող ողբերգությունը:

Դիվանագիտական բազմավեկտոր ջանքերն ու հանդիպումները, անշուշտ, պետք է շարունակվեն, պայմանով, որ հիմնված լինեն ինքնահարգանքի պատվարժան սկզբունքների վրա: Սակայն այդ ջանքերը պետք է սոսկ բաղադրիչ մասը հանդիսանան բազմակողմանիորեն եւ բծախնդրորեն լավ մշակված ազգային ռազմավարության:

Փաշինյանի պարտվողական եւ մաֆիոզներին հաճոյանալու կեցվածքը, որ նա ցուցաբերում է Էրդողանի եւ Ալիեւի առաջ, բնավ չի բնորոշում պատվարժան ինքնահարգանքի վերոնշյալ սկզբունքները: Ընդհակառակը, նրա ներկա վարքագիծը վստահաբար է՛լ ավելի է խրախուսում նման բռնակալներին, որպեսզի առավել ստորացուցիչ զիջումներ ձեռք բերեն մեզանից, փոխարենը ոչինչ չտալով հայերին:

Երբ Թուրքիան փակեց իր օդային սահմանը հայկական ինքնաթիռների առաջ՝ պահանջելով, որ Երեւանում ապամոնտաժեն «Նեմեսիս» հուշարձանը, Փաշինյանն անմիջապես իր լուռ համաձայնությունը տվեց դրան՝ ասելով, որ հուշարձանի տեղադրումը «սխալ» էր, իսկ սփյուռքի գործերի հանձնակատար **Զարեհ Սինանյանը** ավելի առաջ գնալով՝ վերջերս ԱԺ-ում հայտարարեց, որ Ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերը արդեն «ժամանակավրեպ» են եւ «պետք է դադարեցվեն»:

Ամբարտավան Սինանյանը պարզվում է ոչինչ չի հասկանում հայկական ազգային սրբազան արժեքներից: Նա գաղափար չունի անգամ սփյուռքի գործերի մասին:

Փաշինյանը նաեւ շտապեց Անկարա մեկնել, շնորհավորելու համար նորընտիր նախագահ Էրդողանին, արդարացնելով իր արարքը նրանով, որ այնտեղ մի քանի րոպե «կխորհրդակցի» նրա հետ: Անշուշտ դա սոսկ պատրանք էր եւ պատրանք էլ մնաց: Նման վարքագիծը հարգարժան լինելուց շատ հեռու է: Իրականում դա շփոթեցնող է եւ անարդյունավետ՝ հայերիս համար:

⇨6

# Բյուջեից մինչեւ ներքաղաքական մարտեր

⇨1 Չէ, հայտարարված տարեկան 5-6 հազար դոլար միջին ՀՆԱ ցուցանիշը մեկ շնչի հաշվով արտաբերելն իրոք ներշնչող է, բայց չգիտես ինչու՝այդ թվի միայն արտաբերումը չի օգնում, քանի որ միջինացված կենսաթոշակը տարեկան (տարեկան՝ կրկնում եմ) կազմում է հազարից մի փոքր ավելի դոլարին համարժեք դրամ, ոնց ուզում ես շուռումուռ տուր հաշվարկդ: Այդ մտքից ջերմանալ չստացվեց:

Իսկ որ հիշում ես ակցիզային դրույքաչափերի նոր սահմանումը, որով ծխախոտի ու ոգելից խմիչքների գները շուտով շատ զգալի կբարձրանան՝ ապա ստացվում է, որ պետք է հրաժարվես նաեւ գոնե ամիսը մի անգամ մի օղի գնելու, կամ գոնե դարդերդ ծխախոտին տալու վատ սովորույթներից եւս, քանի որ երեք անգամ բարձրացված կենսաթոշակով անգամ ընտրություն չունես՝ օրը մի տուփ ծխախոտը կարող է մի չորս օրվա հաց արժենալ քեզ: Այդ մտքին էլ հրաժեշտ տուր, չէ՞ որ հայրենի կառավարությունը ծխախոտը թանկացնող օրենքներ ընդունելով՝ միայն ու միայն քո առողջության մասին է մտածում: Հիշեցի **Գորբաչովին** ու նրա չոր օրենքը, որի ժամանակ ամբողջ Ռուսաստանը «սամագոն» էր խմում:

Կոմունալ վճարներդ եւ որքան հնարավոր է սահմանափակիր, չնայած որքան կուզես քիչ օգտվիր հոսանքից, գազից, ջրից՝ այդ վճարներն ամռանը տասնհինգ հազարից պակաս չեն լինում, իսկ ձմռանը ողբալի-հուսահատական պատկեր արձանագրում: Ինտերնետից էլ էս լուսավոր դարում չես կարող հրաժարվել՝ բա հայրենի կառավարության լավ աշխատանքի, ջուրը թանկացնելով ՝ տնտեսել սովորեցնելու, խելացի գյուղատնտեսություն կազմակերպելու մոտեցումների մասին ո՞րտեղից պիտի իմանաս, ինտերնետ կապի մեր ծառայությունների տերերին էլ Աստված խիղճ չի տվել՝ հոր գներով են ինտերնետ տրամադրում: Բայց դե ուրիշ ոնց ե՞ս **Անահիտ Ավանեսյանի** պատկերը տեսնելու, որը հայտնում է ուրախ լուր, թե ամսական 10 հազար դրամ ընդամենը եթե մուծես որպես առողջապահության ապահովագրություն՝ վերջ, 4-5 միլիոն դրամանոց վիրահատությունները քեզ համար ապահովագրված են: Մնում է գտնել այդ 10 հազար դրամը քո քառասունհինգհազարանոց թոշակի ահռելի թվի մեջ:

Լավ, վերադառնանք կոմունալ վճարներին՝ միջին թոշակառուի մաշկի միջից փորձելով վճարել. ամռան նվազագույն հաշվարկով եւ վերը նշված մյուս ծախսերը ներառելով՝ դա անում է մոտ 30 հազար դրամ: Քսանհինգ-երեսուն հաց ամսական գոնե պիտի՞ գնել՝ սա մի 7-8 հազար դրամ, ճնշման դեղերի գինն էլ ավելացրու, ահա եւ թոշակը սպառվեց, այն երեք անգամ բարձրացվածը, որ մի տասը տոկոս էլ անկանխիկ գնման վերադարձով է մի քիչ ավելանում (ողջույններս Գեւորգ Պապոյանին, ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարներին): Բա, լավ, միջին թոշակառուն ոչ մի ուրիշ բան ուտելու ցանկություն (իրավունքից էլ չեմ խոսում) չպե՞տք է ունենա, գոնե էս ամառվա մրգից-բանից, մի կտոր կարագ, մի կտոր պանիր չպե՞տք է գնի, մսից էլ չեմ խոսում: Էլ չասած, որ հանկարծ ու մարդ ես՝ մտքովդ անցնի մի երկու անգամ գոնե անկյունում կանգնած հին մեքենան քշել, հանկարծ այդպիսի «աննախադեպ» բան համարձակվես մտածել:

Չէ, չի ստացվում թոշակառուի մաշկի մեջ մտնել, թոշակառուին եւ անցած տարվա բուջեի «աննախադեպ» կատարողականը, այդպիսով, հանգիստ թողնենք, ավելի լավ է վերադառնանք վերլուծականի ամենաշաբաթյա ֆորմատ:

### Պարտադրանքի պարտադրանքը

Շաբաթվա սկզբին, պատասխանելով մեր հարցին, թե բանակցային այս փուլում հնարավո՞ր են Հայաստանի հանդեպ արտաքին կոշտ պարտադրանքները, ԱԺ նախագահ **Ալեն Սիմոնյանը** բացասական պատասխան տվեց՝ նշելով, թե օրինական ընտրված, լեգիտիմ իշխանությանը արտաքին պարտադրանքներ լինել չեն կարող, դա աշխարհում կգնահատեն որպես հարձակում ժողովրդավարության վրա: Ասեմ, որ պատասխանը քննադատության չի դիմանում, քանի որ պատերազմի պահին իշխանությունն ավելի լեգիտիմ էր, քան հիմա, ու դա չխանգարեց պատերազմ պարտադրել մեզ, պարտություն պարտադրել, նոյեմբերիննյան թուղթ պարտադրել: Եւ հիմա, երբ երկրորդ ընտրությունից եւ մի շարք հրաժարականներից հետո իշխանությունն ավելի նվազ լեգիտիմություն ունի՝ ի՞նչն է խանգարելու արտաքին պարտադրանքին: Ինչ ժողովրդավարութուն, երբ անսահմանափակ ախորժակով հարեւանդ **Էրդողանի** հետ նստած՝ ասում է, որ ողջ աշխարհում ուժն է հիմա գործոն: Կամ մի՞թե պարտադրանքի ձեւ չեն Երասխում մետալուրգիական գործարանը գնդակոծելով՝ դրա աշխատանքի խափանման փորձը, Երասխում կրակոցները, Տեղ գյուղում հենց հիմա ադրբեջանական զինուժի կուտակումներն ու վերջին լարվածությո՞ւնը, ԱԱԾ սահմանապահ զորքի ծառայողին նախորդ օրը վիրավորելը: Պարտադրանքը հո պոզով- պոչով չի՞ լինում, անգամ հիբրիդային եղանակով պարտադրանքն է հիմա սողում, օրինակ՝ երբ մեծ խաղացողները միջազգային մեդիահարթակներում տեղեկատվություն են փոխպատվիրում, թե՝ ԱՄՆ-ը հարկադրում է Արցախին հանդիպել Բաքվի հետ, այլապես «հակաահաբեկչական» գրոհ կլինի Ադրբեջանի կողմից: Ռուսական կողմից էլ մատնացույց են անում այդ արտահոսքը, թե Արեւմուտքն այդպիսի միջոցներով փորձում է դուրս մղել Ռուսաստանին Ադրբեջանից: Կամ որ Էրդողանը, դիտավորյալ կամ իրական, ստելով, թե իրական՝ ասում է «Զանգեզուրի միջանցքը» բացելու անհամաձայնությունը ոչ թե Հայաստանի կողմից է , այլ Իրանի: Ալիեւի հոխորտանքն էլ մեջ չբերենք՝ նա պատրաստ է եւ այդ «հակաահաբեկչական» գործողությանը, եւ բոլոր մյուս պատվերներին՝ լինի դա **Էրդողանից**, թե **Պուտինից**:

Ահա այս կարգի ծայրահեղ վտանգավոր իրադրության մեջ անգամ մեր խորհրդարանում բյուջեի կատարողականի քննարկումներին ծավալվեց նույն ուղղվածության ու բովանդակության փոխհրաձգութուն, ինչ ծավալվում է արդեն հինգ տարի, ու դրա գլխավոր նյութը ոչ թե այս իրավիճակում Հայաստանի գործողությունները կամ Արցախի պահվածքն է, այլ թե ո՞վ է ավելի մեղավոր Արցախը հանձնելու եւ Հայաստանը վտանգելու մեջ՝ նախկինները, թե՞ ներկաները: Մեկն ասում է՝ հանձնում եք Արցախն ու Հայաստանը, մյուսն ասում է դուք եք հանձնել: Համաձայնենք ԱԺ փոխնախագահ **Հակոբ Արշակյանի** հետ՝ 900-ից ավելի ձեռնարկություն է փոշիացվել ընդամենը 2000-ական թվականներին, բայց հիմա առաջ նայենք, ու հենց բյուջեում նկատելի են առաջ նայելու որոշ տարրեր՝ ռազմական քաղաքացիական ենթակառուցվածքներում ներդրումներ, գիտատեխնիկական ոլորտի նախագծեր, որոնք վաղը դեռ արդյունք չեն տալու, բայց մի հինգ-տասը տարի հետո, եթե երկիրը լինի իհարկե, լավ տարր են լինելու: Բայց մինչ այդ պիտի երկիրը լինի, իրար հանդեպ ատելություն բուծելու փոխարեն՝ պետք է մի կողմ դնել անբարիշտ, անկազմակերպ, անիրազեկ գործելակերպը, ու դրանից էլ առաջ՝ սխալական մոտեցումներից պետք է հրաժարվել արտաքին շփումներում:

Ժողովուրդ, այնպիսի իրավիճակ է, որ մոտակայում բոլորի, անգամ ամենաանկարեւոր մարդկանց ներուժը պետք է լինելու, վերջացրեք: **Գեղամ Նազարյան** ջան, ոնց եմ համաձայն խորհրդարանի ամբիոնից ելույթիդ հետ՝ ելք փնտրելու փոխարեն՝ խորհրդարանի հակամարտ խմբակցությունները ընկել- ատելություն են բուծում: Ու էլի համաձայն եմ՝ ի՞նչ կարիք կար այս պահին **Արմեն Աշոտյանին** ձերբակալել, դա ի՞նչ օգուտ է բերելու երկրին:

### Զինանշան եւ օրհներգ

Բյուջեի կատարողականի ամփոփիչ ելույթում վարչապետ **Փաշինյանը**, արձագանքելով ընդդիմության մի շարք ելույթների՝ ինքնահայեցման անհրաժեշտության մասին խոսեց, անմիջապես անցնելով երկրի զինանշանին, որի վրայի Նոյյան տապանը Արարատ սարի վրա եւ Հայաստանի չորս հարստությունների խորհրդանիշները հարցեր են առաջացրել նրա մոտ: Նրա կարծիքով անկախացումից հետո ընդունված զինանշանը բովանդակությամբ կապ չուներ ստեղծված հանրապետության հետ: Նա հարցադրոմ հնչեցրեց, թե արդյոք իրական Հայաստանը պե՞տք է ծառայի պատմական Հայաստանին, թե՞ հակառակը, այս հարցի պատասխանն ըստ նրա պետք է տրվի: Ի՞նչ է սա, նաեւ գերբով պատմությունը վերատեսության ենթարկելու մտադրությո՞ւն, որը կարող է անհամաձայնություն առաջացնել շատ հայերի մոտ:

Երկրի խորհրդանիշների մասով՝ նա նաեւ Հայաստանի օրհներգին անդրադարձավ: Նրան դուր չի գալիս, որ հիմնի պաշտոնական բառերը զոհվելով են ավարտվում, չնայած գաղափարախոսությանը դեմ չէր: Ու հենց տեղում հիմնի ավարտի իր տարբերակն առաջարկեց՝ դրոշների շողշողումով եւ առանց զոհվելու:

Ճիշտ է՝ նա խոսում էր ուղղակի իր զգացողությունները կիսելու հարթությունից, բայց, եթե հաշվի առնենք երկրի խորհրդանիշները հարգելու անհրաժեշտության մասին մեր օրենսդրությունը՝ ապա այդպիսի մտքերը հընթացս, ոտքի վրա անդրադարձով, մեղմ ասած, անհասկանալի են: Կան մասնագետներ, կան ստեղծագործողներ, կա օրենսդրությունը, եւ նման հարցերը պետք է քննարկել այդ հարթույթում, իսկ գերբի վրա եղած հայկական ինքնության խորհրդանիշների խոսակցությունն այս պահին, երբ մեզ վրա կա թուրք-ադրբեջանական ճնշում, նրա մոտեցումը կարող է դիտվել թուրքական ճնշման համատեքստում, որը հայ հանրության մեջ բնական հակազդեցություն կարող է ծնել:

# ՌԱԿ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ոչ ոքի համար գաղտնիք է, որ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը՝ ե՛ւ որպէս միասնական կառոյց, ե՛ւ որպէս կեդրոնական ու շրջանային ղեկավար կազմեր, ե՛ւ որպէս շարքային անդամներ ու համակիր շրջանակներ՝ տեւական ժամանակէ ի վեր կ ալեկոծի բազմաբնոյթ տագնապներու շարունակական տարափներով, որոնց պատճառահետեւանքային կապերը, առաւել եւս՝ առկայ իրողութիւնները յառաջացնող ու զանոնք սնող հանգամանքները ունին քանի մը տասնամեակի պատմութիւն:

Յամեցող ճգնաժամը կը սպառնայ ո՛չ միայն վերջնականապէս խարխլել կուսակցութեան գոյութեան հիմքերը, մթագնել անոր փառապանծ պատմութեան լուսաւոր էջերը եւ ստուերել անոր անուրանալի աւանդի կենսագործ ընթացքը, այլեւ՝ մէկդարեայ մեր կուսակցութիւնը անխուսափելիօրէն առաջնորդել դէպի անդունդ՝ զայն դուրս մղելով հայոց քաղաքական թատերաբեմի վրայ գործօն եւ արդիւնաւէտ դերակատարում ունենալու հնարաւորութենէն:

Գոյութենական այս ճգնաժամի խորքային պատճառներու համապարփակ գիտակցումը ունեցող որեւէ կուսակցականի՝ թէ՛ պատասխանատու դիրք զբաղեցնողի եւ թէ՛ շարքային անդամի համար, պարտադիր առաջնահերթութիւն պէտք էր ըլլար՝ գաղափարախօսական դրոյթներու վերաթարմացումով, քաղաքական տեսլականի ու նպատակներու վերասահմանումով ու կազմակերպչական աշխատաձեւի վերանորոգումով ու արդիականացումով՝ կուսակցութեան միասնականութեան իրագործումը եւ միացեալ շարքերով ու վերանորոգ վճռակամութեամբ նոր երթի մը նախաձեռնումը:

Սակայն, դժբախտաբար, վերջերս քաղաքամայր Երեւանի մէջ կուսակցութեան անուան տակ հաւաքուածներու մօտ գերիշխեցին՝ այլատեսակ «առաջնահերթութիւններ» ու «նկատառումներ»:

Անոնք ո՛չ ունեցան՝ տուեալ ժամանակահատուածին Հայաստանի եւ Հայ ժողովուրդի դիմագրաւած բազմատեսակ սպառնալիքներու եւ մարտահրաւէրներու լիարժէք ընկալման կարողութիւնը, ո՛չ ալ՝ կուսակցութիւնը տագնապեցնող խնդիրներու դիմագրաւման ու յաղթահարման միտուած պատասխանատուութեան գիտակցումն ու նախանձախնդրութիւնը:

Գձուձ աթոռամոլութիւնը ու ճղճիմ փառամոլութիւնը, ունայն մտածելակերպը եւ դասարկ ցուցամոլութիւնը դարձան ուղենիշները անոնց հաւաքին, եւ ցաւ ի սիրտ պէտք է արձանագրենք, որ կուսակցութիւնը անգամ մը եւս կորսնցուց անյապաղ վերանորոգման առիթը, մասնաւորապէս՝ միասնականութեան վերականգնման հնարաւորութիւնը:

Մենք՝ Ռամկավար Ազատական կուսակցութեան Լիբանանի Շրջանային վարչութիւնս, մնալով հաւատարիմ կուսակցութեան հիմնարար սկզբունքներուն եւ արժէքներուն, անվարան հետապնդելով կուսակցութեան միասնականութեան հրամայականի իրագործումը եւ անոր ազգանուէր գործունէութեան վերահունաւորումը, խորապէս գիտակցելով ազգային եւ կուսակցական առումով տուեալ ժամանակահատուածի հրամայականներուն եւ առաջնահերթութիւններուն, մեր ձեռքը կ երկարենք անխտիր բոլոր հաւատաւոր ընկերներուն եւ համակիրներուն, որպէսզի՝ միասնական կամքով վերակառուցենք մեր նախորդներու կողմէ մեզի թողուած աւանդին արժանի, եւ մեր յետնորդներու համար պանծալի՝ հայրենանուիրութեան եւ հայակերտումի յառաջամարտիկ կուսակցական ժառանգութիւն մը:

**Ռամկավար Ազատական կուսակցութիւն**
**Լիբանանի Շրջանային վարչութիւն**
**11 Յունիս 2023, Պէյրութ**

# Էրդողանը Շուշիում հյուպատոսարան բացելու խոստում է տվել Ալիեւին, իսկ ադրբեջանցի կանանց՝ «առնվազն 5 երեխա» բերելու խորհուրդ

⇨1 Նշյալ երկու այցելությունն էլ Էրդողանը կատարել է հունիսի 13-ին եւ Անկարա է վերադարձել հունիսի 14-ին: **Իլհամ Ալիեւի** հետ առանձնազրույցից հետո Էրդողանը համատեղ ասուլիս է հրավիրել, որտեղ սրտաց ընդունելության համար երախտագիտություն է հայտնել Ալիեւին, ապա անդրադարձել է դեռեւս 2021 հունիսի 15-ին հենց Շուշիում ստորագրված «Շուշիի հռչակագրին», որ նախատեսում է նաեւ ռազմական ոլորտում երկու երկրների համագործակցությունը եւ ռազմավարական դաշինքի մակարդակի է բարձրացնում, ինչպես Թուրքիայի նախագահն էր ասել ժամանակին, թուրք-ադրբեջանական եղբայրությունը:

Այնուհետեւ նա շարունակել է. «Մենք պատրաստ ենք Շուշիում բացել մեր գլխավոր հյուպատոսարանը, երբ դուք ցանկանաք: Պարոն **Հաքան** (դիմել է նորաթուխ արտգործնախարար **Հաքան Ֆիդանին**, որ տարիներ շարունակ գլխավորում էր Ազգային հետախուզության կազմակերպությունը), այս հարցում, առանց ուշացնելու, արեք այն, ինչ անհրաժեշտ է... Դա կլինի յուրատեսակ ազդանշան Հայաստանի գլխավորությամբ ողջ աշխարհին: Ես իմ եղբոր հետ առանձնազրույցի ընթացքում քննարկեցի Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու շինարարության հարցը եւ մենք եկանք դրա շինարարությունը շուտափույթ ձեռնարկելու եզրակացության»:



Ի դեպ՝ նշենք, որ «Շուշիում հյուպատոսարան բացելու» Էրդողանի խոսքերը քաղել ենք թուրքական հանրային հեռուստատեսության՝ TRT-ի կայքէջից, որին երկրում ընդդիմությունը, ոչ թե հանրությանը, այլ պետական իշխանություններին, հետեւաբար Էրդողանին ծառայելու պատճառով համարում է պետական հեռուստատեսություն, ինչպես նաեւ կիսապաշտոնական համարվող «Անադոլու» գործակալությունը:

Թեեւ TRT-ն շրջանցում է, սակայն Էրդողանը Ալիեւի հետ առանձնազրույցում քննարկել է նաեւ «Զանգեզուրի» միջանցքի բացման հարցը եւ դրա առնչությամբ, Euronews -ի վկայությամբ, նա նշել է. «Մենք պետք է անհապաղ լուծենք Զանգեզուրի միջանցքի հարցը: Դրա լուծումը մեզ առավելության է տալու երկու հարցում: Կառուցումը նախատեսվող մայրուղին եւ երկաթուղին աշխուժացնելու է Իգդիր-Նախիջեւան հաղորդակցությունը, դա իր հերթին ամրապնդելու է Թուրքիայի անմիջական կապը Նախիջեւանի հետ, ինչը լուրջ խթան է հանդիսանալու Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների հետագա զարգացման համար»: Ի դեպ՝ Euronews -ին հստատում է նաեւ թուրքական Arti Gercek կայքէջը:

Քանի որ այս երկու կայքէջերը, որպես սկզբնաղբյուր, օգտվել են «Անադոլու» գործակալության հաղորդագրությունից, ուստի «Զանգեզուրի» միջանցքի առումով փաստորեն իրար կրկնում են: Թուրքական կայքէջը պարզապես մասնացույց է անում Էրդողանի «առնվազն 5 երեխա ունենալու» առաջարկը, որը նա արել է մամուլի համատեղ ասուլիսում, նշելով. «Մեր առջեւ կան մի քանի քայլեր, որոնց կատարումն անհրաժեշտ է: Եթե դրանք կատարվելու լինեն, ապա Ադրբեջանի բնակչությունը արագ կաճի: Առաջ ասում էի 3 երեխա, սակայն հիմա կարծում եմ, որ Ադրբեջանում կանայք առնվազն 5 երեխա պետք է բերեն: Երբ հարցրեցի Ալիեւին, ասաց, որ բնակչության թիվը 10 միլիոնից բարձր է, բայց 11-ի չի հասնում: Պետք է հասցնել, որովհետեւ բնակչությունն է երկրի իրական ուժը»:

# Ավինյանի ոչ պաշտոնական քարոզարշավի ֆոնին՝ Աժ ընդդիմությունը խարխափում է թմբիրում

Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավը դեռ պաշտոնապես չմեկնարկած՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը մեծ թափով լծվել է մայրաքաղաքի իշխանությունը նույնպես իր ձեռքում պահելու գործին: Փոխքաղաքապետ **Տիգրան Ավինյանը** ջանք ու եռանդ չի խնայում այդ աթոռը զբաղեցնելու համար: Փողքաղաքապետի թիկնոցն ուսերին՝ մեծ խանդավառությամբ մասնակցում է Երեւանի հետ անգամ չնչին աղերս ունեցող որեւէ միջոցառման՝ ծառ ու ծաղիկ տնկելուց մինչեւ մշակութային իրադարձության: Նախորդ շաբաթ, օրինակ, Արամ Խարատյանի 120-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին էր մասնակցում՝ շահելով դասական երաժշտության սիրահարների սիրտը, այս շաբաթ էլ կինոյից էր խոսում՝ «Ոսկե Ծիրան» կինոփառատոնի մամուլի ասուլիսի ժամանակ:

Դե ֆակտո քաղաքապետը, որ քաղաքի ղեկավարումը նաեւ դե յուրե է ցանկանում ստանձնել, չի բացառվում, որ բնավ էլ մշակութային միջոցառումների սիրահար չլինի (գուցե՝ հակառակը), ակնհայտ է սակայն, որ նա պահը չի կորցնում ու հանում վաղվա լուսավոր ապագայի հնարավոր ու անհնար բոլոր մեթոդները գործի է դնում: Ի դեպ, «Ոսկե Ծիրանի» ասուլիսից հետո լրագրողներիս հարցին ի պատասխան՝ ինչպե՞ս է գնահատում իր շանսերը, բավական վստահ տոնով հայտարարեց. «Գնահատական տալիս են երեւանցիները, ու նրանք այդ գնահատականը կտան սեպտեմբերի 17-ին՝ ընտրությունների ժամանակ»:

Ավագանու ընտրություններին մասնակցելու հայտ են ներկայացրել նաեւ **Ռուբեն Վարդանյանի** «Ապրելու երկիր» ու իշխանությունների հետ քուրիկ-մերիկ խաղացող «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները: Արտախորհրդարանական դաշտի մյուս ուժերը, որոնց անունները, հավանական մասնակցության առումով, շոշափվում էին, առ այս պահը չեն հստակեցել, թե մտքներին ինչ կա:

Այլ է պատկերը խորհրդարանական ընդդիմության՝ «Հայաստան» ու «Պատիվ ունեմ» խմբակցությունների մոտ. խորը թմբիրի մեջ են: ՀՀ 2-րդ ու 3-րդ նախագահները, որ պատերազմից հետո իշխանափոխություն անելու երկու փորձ արեցին, այժմ ձայն-ծպտուն չեն հանում: Եթե երկու-երեք ամիս առաջ մի քանի անձի անուն շոշափվեց՝ **Արթուր Վանեցյան**, **Տարոն Մարգարյան**, այժմ սակայն՝ ձայն բարբառո հանապատի: Ենթադրել կարելի է, որ Ազգային ժողովի մանդատները պինդ գրկած-նստած ընդդիմադիրները միասնական թեկնածուի հարցում կա՛մ իրար հետ լեզու չեն գտնում, կա՛մ էլ՝ հավես չունեն: Համենայնդեպս, ո՛ր տարբերակն էլ լինի՝ լռությամբ ու ոչինչ չանելով՝ Ավինյանին ու իշխող ՔՊ-ին մե՜ծ նվեր են մատուցում. փոխքաղաքապետն օր օրի ավելի է ամրապնդում իր դիրքերը: Իհարկե, բացառված չէ, որ մասնակցության դեպքում (հատկապես եթե ռեբրենդինգ չարած ցուցակով ու հին դեմքերով ներկայանան) էլ ավելի կօգնեն **Փաշինյանի** իշխանությանը:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Անգլերեն ժողովածու Աղվանքի վերաբերյալ

«Դե գրույտեր» հրատարակչությունը (Բեռլին-Բոսթոն) օրերս լույս է ընծայել մի անգլերեն ժողովածու Աղվանքի (Կովկասյան Ալբանիա) մասին՝ «Կովկասյան Ալբանիա. միջազգային ձեռնարկ» վերնագրով (խմբագիրներ՝ **Յոսթ Գիփերթ, Յասմին Դում-Թրագութ**): Ինչպես նշված է հատորի ծանուցման մեջ. «2020-ի ղարաբաղյան պատերազմի եւ տարածաշրջանի պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ ադրբեջանական ռեւիզիոնիզմի հետեւանքով վերսկսվել են քննարկումները կովկասյան «Ալբանիայի» մասին, որը քիչ է հայտնի Արեւմուտքի գիտական եւ հասարակական շրջանակներում: Ձեռնարկն առարկայական, գիտական հիմնավորմամբ ներկայացնում է կովկասյան «ալբանացիների» վերաբերյալ հետազոտությունների ներկա վիճակը: Աշխատությունները պարտադիր կերպով չեն հավակնում գիտական նոր բացահայտումների, այլ ավելի շուտ ամփոփում են հաստատված գիտելիքները: Հատորը համախմբում է տարբեր ոլորտների միջազգայնորեն ճանաչված գիտնականների եւ հետազոտողների ուսումնասիրություններ, որոնք ներկայացնում եւ վերանայում են կովկասյան «ալբանացիների», նրանց պատմության եւ հնագիտության, լեզվի եւ գրավոր հուշարձանների, կրոնի, եկեղեցու պատմության եւ արվեստի վերաբերյալ հետազոտությունների վիճակը, ներառյալ նրանց առնչություններն այսօրվա ուդի ժողովրդի հետ»:




Ժողովածուն բովանդակում է հետեւյալ հոդված-ուսումնասիրությունները՝ «Աղվանքը հունական եւ լատինական աղբյուրներում» (Մարկո Բաիս), «Աղվանքը միջնադարյան հայկական աղբյուրներում (V-XIII դդ.)» (Յասմին Դում-Թրագութ եւ Յոսթ Գիփերթ), «Աղվանների գրավոր ժառանգությունը» (Յոսթ Գիփերթ), «Աղվանների լեզուն» (Յոսթ Գիփերթ եւ Վոլֆգանգ Շուլցեն), «Աղվաներենը եւ ժամանակակից ուդիերենը» (Վոլֆգանգ Շուլցեն եւ Յոսթ Գիփերթ), «Ուդիների խնդրանքը Պետրոս ցարին» (Իգոր Դորֆման-Լազարեւ), «Աղվաններ, հայեր եւ վրացիներ. ընդհանուր պատարագ» (Շառլզ Ռենու), «Մե՞կ, թե՞ երկու. քրիստոսաբանական եւ հիերարխիկ վեճերի եւ «Աղվանքի եկեղեցու» զարգացման մասին (IV-VIII դդ.)» (Յասմին Դում-Թրագութ), «Սուրբ Ուխտ» (Արմենուհի Դրոսթ-Աբգարյան), «Աղվանները սուրբ հողում. հնագիտական ապացույցների բացակայություն, թե՞ բացակայության ապացույց» (Յանա Չեխանովեց), «Աղվանքի քաղաքաշինությունը եւ ճարտարապետությունը. հիմնական հուշարձանները եւ զարգացման միտումները» (Արմեն Ղազարյան), «Յոթ եկեղեցիների» անսամբլը. մի էկումենիկ վանք ժամանակից առա՞ջ» (Պատրիկ Տոնապետյան), «Արցախի Տիգրանակերտը» (Համլետ Պետրոսյան), «Էթնիկ իրավիճակը հին եւ միջնադարյան Աղվանքում» (Ալեքսան Հակոբյան), «Վաղ Աբբասյան Աղվանքի ապստամբները» (Էլիսոն Մ. Վակկա), «Դուք ասում եք աղվան, ես ասում եմ՝ հայ: Էթնիկ պատկանելության եւ իշխանության մասին խոսակցությունները Հայաստանի աղվան թագավորի շուրջ» (Սերջո Լա Պորտա), «Հարթավայրերի եւ լեռների միջեւ. աղվան-հայկական երթերը 12-րդ դարում եւ Դավիթ Գանձակեցին (մոտ 1065-1140)» (Իգոր Դորֆման-Լազարեւ), «Գյանջայի դարպասը» (Յոստ Գիփերթ) եւ «Հակառակ նախագծում. պետության կողմից ստեղծված «Աղվանական առաքելական եկեղեցին» (Հրաչ Չիլինգիրյան):

Հատորն օժտված է առաջաբանով եւ ցանկերով:

Ա. Բ.

# «Մենք բոլորս հայեր ենք. ձայներ Սփյուռքից»

***Վերջերս Թեքսասի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել հայկական ինքնության եւ սփյուռքին պատկանելության մասին «Մենք բոլորս հայեր ենք. ձայներ Սփյուռքից» ակնարկների ժողովածուն: Այն խմբագրել է «Շիքագո ռեւյու օֆ բուքզ» («Չիքագոյի գրքերի տեսություն») ամսագրի խմբագիր-խորհրդական, Guernica-ի գեղարվեստական գրականության խմբագրի օգնական եւ 2022 թվականի Creative Armenia-ՀԲԸՄ կրթաթոշակառու Արամ Մրջոյանը: Ներկայացնում ենք գրքի մասին տեղեկություններ՝ վերցված https://www.degruyter.com/ կայքէջից:***

«Մենք բոլորս հայեր ենք» ժողովածուն միավորում է կայացած եւ սկսնակ հայ հեղինակների, որոնք մտորում են ներկայումս հայկական էթնիկ ինքնության բարդությունների մասին: Այս անհատական ակնարկները վերհանում են սփյուռքի այն ձայները, որոնք պատմականորեն լռության են մատնվել իրենց համայնքների ներսում եւ դրանցից դուրս, ներառյալ քվիր, բազմառասա եւ բազմաէթնիկ հեղինակները: Այս ժամանակակից անթոլոգիայի տասնութ մասնակիցները ուսումնասիրում են տեղահանման, ձուլման, ժառանգության եւ տան ավելի լայն սահմանումների խնդիրները: Գրավիչ ստեղծարար գիտական գրականության միջոցով նրանցից շատերն իրենց հարց են տալիս, թե ի՞նչ է բավականաչափ հայ լինելը հաճախ չճանաչված համայնքում:

Հատորի բովանդակությունը հետեւյալն է՝ «Ինչպես հայկական թաղման հալվան օգնեց իմ ընտանիքին տուն գտնել Ամերիկայում» (**Լիանա Աղաջանյան**), «Հավա Նագիլա» (**Նաիրա Կուզմիչ**), «Որտեղից ես: Չէ՛, իրականում որտեղի՞ց ես» (**Սոֆիա Արմեն**), «Միջ/ռասսայական սիրո պատմություն» (**Գոհար Ավագյան**), «Լեզվի դասեր» (**Նենսի Գրիգորյան**), «Լավ, ծանրակշիռ անուն» (**Օլիվիա Քաթրանջյան**), «Իմ Հայաստանը. պատկերացում եւ տեսլական» (**Քրիս Մաքքորմիք**), «Պատերի ներքո. մտորումներ հայ հեղափոխականների մասին» (**Նենսի Ագաբյան**), «Վերադառնալով տուն» (**Քրիս Բոհջալյան**), «Կորած եւ գտնված» (**Ալին Օհանեսյան**), «Նամակ ծոռանս» (**Րաֆֆի Ջո Վարդանյան**), «Բաց վերքեր» (**Աննա Գազմարյան**), «Բառերը-the Words» (**Ջ. Պ. Տեր-Պողոսյան**), «Ճանապարհ դեպի պատկանելություն» (**Րաֆֆի Բուջիկանյան**), «Իմ մարմնի պատմությունը» (**Հրակ Վարդանյան**), «Հայացք դաշտավայրին. հայ սփյուռքի մասին հաշվետվություն Գլենդեյլի բիենալեի տեսության փոխարեն» (**Մաշինկա Ֆիրունց Հակոբյան**), «Սեւամորթ հայուհին Անջելենոյի հայացքն Արցախին» (**Քարեն Ռոուզ Մկրտիչյան**), «Մենք բոլորս հայեր ենք» (**Սքաութ Թուֆանքջյան**):

Այս անթոլոգիայի վերաբերյալ արդեն կան դրական կարծիքներ. «Այս արտասովոր ակնարկներից յուրաքանչյուրը դարավոր ցեղասպանությամբ փոխված կյանք է, որոնք լուսաբանում են ոչ միայն քաղաքական բռնության ճանաչելի կողմերը, այլեւ թաքնված, դաժան նրբությունները, թե ինչպես են դրանք շարունակվում տարբեր կերպ: Հանքաքարի պես ծանր է ու շլացուցիչ» (**Պատրիկ Նաթան**):

«Հատորի ամենամեծ առավելությունը հեղինակների բազմազանությունն է: Միմյանց կողքին բազմառասա, քվիր եւ բազմասի»ության կողմնակից հայկական ձայների առկայությունը համարձակ հարստություն է բերում, որը դուրս է գալիս պարզապես նորույթի սահմաններից: Այս պատմությունները, որոնք շատ ընթերցողներ գուցե նախկինում երբեք չեն լսել, նաեւ պատշաճ կերպով վերացնում են կանխակալ պատկերացումներն այն մասին, թե ով եւ ինչն է կազմում հայ Սփյուռքը: Գրողները, որոնք խորապես հասկանում են, թե ինչ է նշանակում ջնջել կամ ժխտել որեւէ մեկի պատմությունը, այդպիսով ցույց են տալիս, որ ջնջման այլ տեսակները դիմագրավելի եւ խուսափելի են» (**Լեյլա Էմերի**):




«Այս ժողովածուի 18 ակնարկները հայկական ինքնության, պատկանելության եւ վերաբնակության հարցերում խորամուխ են լինում մի համայնքի տեսանկյունից, որի անցյալը հաճախ աննկատ է մնում» («**Նյու Յորք թայմս**»):

«Ընտրյալ հեղինակների այս հմայիչ խմբի յուրաքանչյուր ակնարկ ներկայացնում է յուրահատուկ եւ հզոր տեսակետներ այն մասին, թե ինչ է նշանակում փնտրել սեփական ինքնությունը՝ կտրված լինելով հայրենիքից, լեզվից եւ ժառանգությունից: Ձեւվածք եւ զգացմունքային հնչեղություն ունեցող այս գործերը հարցադրում են կատարում, թե ի՞նչ է նշանակում լինել «բավականաչափ հայ»: Ընդհանուր առմամբ անթոլոգիան տուրք է տալիս է Հայոց ցեղասպանության եւ դրա հետեւանքով առաջացած Սփյուռքի կորսված եւ ընդմիշտ փոխված կյանքերի պատմությունը եւ նախանշում է ուղղությունը դեպի առաջ՝ պատմելով ու վերապատմելով կարեւոր պատմություններ: Դա ե՛ւ շշմեցուցիչ ձեռքբերում է, ե՛ւ ողջունելի լրացում մեր գրական գրանցամատյաններում» («**Շիքագո ռեւյու օֆ բուքզ**»):

«Մասամբ՝ զվարճանքի միջոցառում ու մասամբ՝ օպերա, միաժամանակ՝ հիասքանչ ու տանջող, ընդհանուր առմամբ՝ ցնծալից... Յուրաքանչյուր ակնարկ հենվում է նախորդի վրա՝ խորացնելով ընթերցողի ըմբռնումն ընտանիքների վրա ցեղասպանության՝ սերնդեսերունդ ազդեցության վերաբերյալ եւ մղելով էթնիկ պատկանելության մասին խորհրդածությունների: Ակնարկները չեն երկնչում երբեմն սարսափելի իրադարձությունների առջեւ, բայց դրանցից յուրաքանչյուրն առաջարկում է նաեւ քաղցրություն, գրավչություն եւ վճռականություն՝ առերեսվելու այս ճշմարտությունների եւ առաջ շարժվելու հույսով ու կարեկցությամբ: Սա ակնարկների նրբաճաշակ հավաքածու է» («**Թրիքուարթըրլի**»):

**Անգլերենից թարգմանեց**
**ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ**

# Փաշինյանն ու իր վարչակազմը ընթանում են ինքնախաբեության եւ կործանման ճանապարհով, բացի եթե...

⇨3 Հաջող եւ արժանապատիվ դիվանագիտական բանակցություններ վարելու համար հայրենի իշխանությունները, Փաշինյանի կամ նրան ժողովրդավարական ձեւով փոխարինող մեկ այլ, ավելի ձեռնհաս առաջնորդի ղեկավարությամբ, պարտավոր են անհապաղ երկու անհրաժեշտ բաղադրիչներ ավելացնել իրենց ներկայի սխալական ռազմավարությանը:

Առաջին, Հայաստանը պետք է անմիջապես ստեղծի արդյունավետ միջազգային լրատվության մի գործակալություն, որը հարատեւ պարբերականությամբ եւ ազդեցիկ կերպով պետք է ձեւավորի միջազգային հասարակական կարծիքը թարմ հեռասփռումներով հայկական վիճարկումների, տեսակետների, պատմության, ինչպես նաեւ առօրյա անցուդարձերի վերաբերյալ:

Ներկայիս այս բացթողման գլխավոր զոհը Արցախն է:

Արցախի՝ որպես հայկական անկախ հանրապետության օրինական իրավունքը ձեռք էր բերվել դեռեւս 1990-ին, երբ դեկտեմբերի 10-ին հաջողությամբ անցկացվեց համընդհանուր հանրաքվե, որի արդյունքում նա դուրս եկավ Խորհրդային Միության կազմից: Լրատվության արդյունավետ միջոցների բացակայության պայմաններում այդ անառարկելի փաստը այսօր ամբողջովին մոռացության է տրված:

Բացի այդ, հաշվի առնելով հայերի նկատմամբ Ադրբեջանի ակնհայտ ցեղասպանական դիրքորոշումը, Արցախի աներկբայելի իրավունքը պահանջելու Կոսովոյի մոդելի կիրառումը Ադրբեջանից անջատվելու հարցում, երբեք ուժգնորեն չի բարձրաձայնվել կամ առաջադրվել միջազգային հարթակներում:

Երկրորդ եւ իրականում ամենալուրջ բացթողումը Հայաստանի դիվանագիտության մեջ անդուլ ջանքերի պակասն է կազմավորելու մի հզոր բանակ, որն ամենաարդիական զենքերով կկարողանար ետ մղել երկրի սահմաններից ներս որեւէ ներխուժման փորձ: Այսօր էլ սա պետք է լինի Հայաստանի ամենահրատապ առաջնահերթությունը: Ներկա, ինչպես նաեւ նախորդ բոլոր իշխանությունները հավասարապես լրջորեն պատասխանատու են եւ մեղավոր, որ համապատասխան պատրաստվածության եւ 24-ժամյա զգոնության վրա չեն պահել մեր բանակը: Այս խնդրի առնչությամբ բոլոր պատճառաբանություններն ու փաստարկները պարզապես զուրկ են հիմնավորվածությունից եւ դրա համար էլ անընդունելի են:

Հայաստանը ի զորու էր եւ հիմա էլ կարող է ե՛ւ ստեղծել իր սեփական ռազմաարդյունաբերությունը, ե՛ւ ճանապարհներ գտնել ձեռք բերելու դրանք այլ երկրներից: Երբ կամքը կա, ուղիներ կգտնվեն: Առանց իրազեկված լինելու որեւէ առանձնաշնորհյալ լրատվության տվյալներին կարող եմ անվերապահորեն հաստատել իմ վերոնշյալ պնդումները: Հարցը, որ պատասխան է պահանջում ներկայիս, այն է, թե ի՞նչն է խանգարում Հայաստանի ներկա իշխանություններին անմիջապես իրականացնելու մատնանշված բացթողումները շտկելու լրջորեն մշակված արտակարգ միջոցառումների մի ծրագիր:

Հասկանալի է, որ անշուշտ կան որոշ դժվարություններ: Բայց ամենակարեւոր եւ ամենաակնհայտ պատճառը, մեր կարծիքով, ներկա իշխանությունների ձախողումն է ստեղծելու ինչպես բարոյական, այնպես էլ կառուցվածքային, ինստիտուցիոնալ, իրական եւ համակարգված գործակցություն հայկական պետության երեք անբաժանելի բաղադրիչների՝ Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի միջեւ:

Վերադառնալով անցյալ, դեպի Հայաստանի, ապա նաեւ Արցախի անկախության հռչակմանը եւ 1990-ականների հաղթական պատերազմի տարիները, նշենք, որ Արցախը անբաժանելի մասն էր Հայաստանի, եւ Սփյուռքն էլ խանդավառորեն լծված էր աջակցելու իր երկու հայրենիքներին: Այդ կապն է, որ խզված է այժմ: Այն դժբախտաբար զրոյական աստիճանի հուսահատ վիճակում է: Բաղադրիչ երեք մասերից յուրաքանչյուրն այժմ զգայական մեկուսացման մեջ է գտնվում:

Երեւանում գործող հայկական կառավարությունը միակ կառույցն է, որ հնարավորություն ունի եւ բարոյական պարտականություն այդ երեք բաղադրամասերը դարձյալ միավորելու...:

Բայց հարկավոր է գործել անմիջապես, համարելով, որ դա ազգային արտակարգ կարեւորության խնդիր է: Այն պետք է իրականացվի իրար հետ հանգիստ եւ լրջագույն մթնոլորտում աշխատող մասնակիցների կողմից:

Խոհեմ ծրագրերն ու ճիշտ թիրախականացված կոնկրետ նպատակները պետք է գերակայեն ցուցամոլական դատարկաբանություններին եւ շոուի վերածված գործողություններին: Հաջողությամբ պսակվելու համար ներդրված ջանքերը՝ պետք է լինեն շրջահայաց եւ հարատեւ: Երբ Հայաստանի իշխանությունները ցույց տան, որ կարող են դիմակայել ազգային չափանիշով նման մի մարտահրավեր, ապա հավատած ենք, որ անհրաժեշտ մարդկային եւ ֆինանսական միջոցները կամ աղբյուրները կգտնվեն, հասանելի կլինեն, եւ Հայաստանի պետությունը իրապես պատրաստ կլինի վարելու արժանապատիվ դիվանագիտական միջազգային բանակցություններ: Դրանք անպայման հաջողությամբ կընթանան, քանի որ պաշտպանված կլինեն, նաեւ արդյունավետորեն եւ հարատեւորեն աշխատող միջազգային կարծիքը ձեւավորող լրատվամիջոցների ստույգ հաղորդումներով եւ արդիականացված ու անխոցելի պաշտպանական համակարգով, որ կբացառի որեւէ ներխուժման հնարավորությունը հայկական տարածքներում:

Մենք պարտավոր ենք ցույց տալ մեր համազգային, համապետական կամքի ուժը:

Միայն այդ դեպքում Ալիեւը արագորեն կվերադառնա իր մասնավոր գործունեությանը՝ բիզնեսին եւ կմոռանա Արցախի եւ դրա արեւմուտքում գտնվող տարածքների ձեռքբերման չիրականացված երազների մասին:

**Անգլ. բնագրից թարգմանեց՝**
**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 23(5758)
16-22 ՀՈՒՆԻՍ
2023

# Հայաստանն առաջին անգամ արժանացավ Պրահայի Քվադրինալեի մրցանակին

## *Նելլի Բարսեղյան. «Թատրոնի միջոցով ցույց տվեցի ոչ միայն առաջնագիծը, այլեւ թիկունքը»*

### *Հարցազրույց հայկական տաղավարի հեղինակ եւ համադրող Նելլի Բարսեղյանի հետ*

**ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ**

Պրահա

**Նելլի Բարսեղյանն ավարտել է թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտը, մասնագիտությամբ բեմական նկարիչ է, նաեւ՝ զգեստների նկարիչ: Երեւանում աշխատել է գրեթե բոլոր թատրոնների հետ, այժմ էլ համագործակցում է Գյումրիի դրամատիկական, Ռուսական դրամատիկական, Համազգային եւ այլ թատրոնների հետ: Նրա մասնակցությամբ ներկայացումները բազմաթիվ մրցանակների են արժանացել, այդ թվում՝ միջազգային փառատոններում:**

**Նելլին ղեկավարում է նաեւ Սինոլաբ արվեստների լաբորատորիան, որը հնարավորություն է տալիս երիտասարդներին իրականացնել իրենց գաղափարները: Վերջին նման նախագիծը «Առավոտ» օրաթերթի հետ արվեց: «Կյանք սահմանի եզրին» կոմիքսների նախագիծը, որը նվիրված էր սահմանամերձ գոտու երեխաներին, Լավագույն ԶԼՄ նախագիծ մրցանակին արժանացավ Հայկական PR ասոցիացիայի կողմից: Սինոլաբը քանիցս մասնակցել է Թբիլիսիի բեմանկարչական բիենալեին՝ ներկայացնելով նաեւ այլ հայ արվեստագետների:**

**Հունիսի 13-ին տեղի ունեցավ բեմանկարչական արվեստի Պրահայի 15-րդ միազգային Քվադրինալեի հանդիսավոր մրցանակաբաշխությունը , որի ընթացքում Հայաստանի տաղավարի համադրող Նելլի Բարսեղյանի «Ես տեսնում եմ, ես չեմ տեսնում» աշխատանքն արժանացավ ժյուրիի պատվավոր մրցանակին: Սա Հայաստանի չորրորդ, իսկ Նելլիի երրորդ մասնակցությունն էր Պրահայի Քվադրինալեին եւ առաջին հաղթանակը: Գլխավոր «Ոսկե Տրիգա» մրցանակը տրվեց Կիպրոսին՝ «Հանդիսատեսներ ուրվական քաղաքում» աշխատանքի համար, որը նվիրված էր Կիպրոսում Թուրքիայի զավթած եւ մինչ օրս անմարդաբնակ Ֆամագուստա քաղաքին, իսկ ուսանողական լավագույն աշխատանքի մրցանակին արժանացավ Լիբանանի ուսանողների թիմը: Տարբեր մրցանակների արժանացան եւս 17 երկիր, այդ թվում՝ Չեխիան:**

**Հայաստանի տաղավարի համադրող Նելլի Բարսեղյանին մրցանակը տրվեց «Հրատապ իրավիճակներին արձագանքում՝ Երկրների և տարածաշրջանների ցուցահանդես» անվանակարգում: Հանձնելով մրցանակը, ժյուրիի անդամ, Նորվեգիայի գեղարվեստի ակադեմիայի բեմական ձեւավորման ֆակուլտետի տնօրեն, պրոֆեսոր Սերժ վոն Արխը մասնավորապես նշեց, որ «այս հանդարտ ու հզոր ցուցադրությունը ցույց է տալիս մեզ, թե ինչ է հնարավոր, երբ թատրոնի դերասանները միասին աշխատում են»:**

Մրցանակների հանձնումից հետո, Նելլին սիրով պատասխանեց մեր հարցերին:

**- Անակնկա՞լ էր, թե՞ սպասելի էր նման մրցանակը ձեզ համար:**

- Անկեղծ, մտածում էի, որ կհետաքրքրի իմ աշխատանքը, քանի որ բոլորովին այլ կողմից էի ներկայացնում թատրոնը, տարածությունը, գործողությունը, բայց որ մրցանակ կստանամ՝ չէի սպասում: Կարծում էի, թե Ուկրաինային կտան»:



**- Ինչպե՞ս ընտրեցիր ցուցադրության թեման:**

- Թեման ընտրել էինք նկատի ունենալով փառատոնի հիմնական կարգախոսը՝ «Եզակին»: Կազմակերպիչների պահանջն էր՝ ցույց տալ համավարակի ժամանակ եւ հետո թատրոնների կյանքը, դրանք կապելով նաեւ այդ երկրներում տեղի ունեցած եզակի դեպքերի հետ: 2020ին, երբ ողջ աշխարհը պայքարում էր համավարակի դեմ, փորձում էին ինչ-որ կերպ ապրել ու լուծումներ գտնել, սկսվեց Արցախյան պատերազմը, որը եւս արհավիրք էր: Եվ իմ խնդիրն էր պարզել, թե նման աղետների դեպքում, լինի դա համավարակ, ջրհեղեղ, թե պատերազմ, ո՞րն է թատրոնների դերը: Ես հասկացա, որ թատրոնները շատ մոտ են մարդուն, ինչի ականատեսը դարձա այդ օրերին: Կարեւոր էր պարզել նաեւ, թե թատրոնները որքան ճկուն գտնվեցին այդ օրերին եւ ինչպես օգտագործեցին իրենց տարածքները: Մենք տեսանք օպերայի բեմը, ուր գործում էին պաշտպանական ցանցերը: Գյումրիի թատրոնի փորձասենյակներում առավոտյան գլխարկներ էին կարում առաջնագծի զինվորների համար, իսկ երեկոյան ներկայացումից հետո, նորից վերադառնում էին սենյակ եւ շարունակում էին կարել: Կամերային թատրոնը դարձել էր սննդի ու դեղորայքի, անհրաժեշտ այլ պարագաների հավաքագրման կենտրոն կամ զբաղվում էին Արցախից տեղափոխված երեխաների հետ: Այս ցուցադրությամբ նաեւ ցանկանում էի խոսել պատերազմի մասին, բայց թատրոնի, արվեստի միջոցով եւ ցույց տալ ոչ միայն առաջնագիծը, այլեւ՝ թիկունքը: Ուստի պատմում եւ ներկայացնում եմ թատրոնները՝ այդպիսով խոսելով նաեւ պատերազմի մասին, որպեսզի Եվրոպան, որն այսօր խոսում է միայն մեկ՝ ռուս-ուկրաինական պատերազմի մասին, խոսի նաեւ մեր մասին: Քանի որ ինչպես աշխարհի տարբեր ծայրերում, այնպես էլ մեզ մոտ, չնայած զինադադարին, պատերազմը շարունակվում է: Ինձ համար կարեւոր էր պատերազմի թեման, նկատի ունենալով, որ արտասահմանյան շատ երկրներից այցելուներ կլինեն, եւ մենք կներկայացնենք Արցախի խնդիրը»:



**- Իսկ ցուցադրությունից որքանո՞վ է հասկանալի Արցախի խնդիրը:**

- Չեմ կարող ասել, բայց ամեն ինչ ներկայացված է փաստագրական հիմքով, այսինքն նշված QR կոդերով հնարավոր է մտնել մամուլի միջոցների կայքեր, եւ ընթերցել այդ թեմայով հոդվածը: Օրինակ, aravot.am-ում ներկայացվել էր օպերայի բեմում կատարված աշխատանքը, գործելու ընթացքը: Առաջին դրվագը բուն պատերազմի սկիզբն է, որը նույնպես ներկայացվում է համապատասխան հոդվածով՝ ցույց տալով պատերազմի ընթացքն իր փուլերով, եւ իբրեւ հանգուցալուծում՝ ի հակադրություն «Ես տեսնում եմ, թե ես չեմ տեսնում»ին, վերջում հարց եմ տալիս՝ «Մենք տեսնում ենք, թե չենք տեսնում»: Եվ վերջին դատարկ էջերով գրքույկը դրա համար է, որպեսզի մարդիկ արտահայտվեն, տեսնենք՝ տեսան, թե՞ չտեսան: Մի այլ թեմա է մարդկային պատմությունը, որը ցույց եմ տալիս Գյումրու թատրոնի ռեժիսոր **Արտուշ Միքայելյանի** օրինակով: Երբ պատերազմը սկսվել է, նա ծառայության մեջ է եղել ամենաթեժ կետերում: Պատերազմը սկսվել է նրա ծննդյան օրը՝ սեպտեմբերի 27-ին, եւ ինքը պատմում էր իր զգացողությունները, որ կյանքի եւ մահվան շեմին է եղել, եւ թվում էր նորից է ծնվել: Դա նաեւ թատրոնի մարդու ներքին պայքարն է, զգացողությունները, որը համադրում ենք իրականության հետ: Այդպիսով, փորձել եմ ցույց տալ ոչ միայն թատրոնի մարդուն, այլեւ պատերազմի սկիզբը: Ցուցադրությունը սկսվում է հողով, եւ վերջանում կանաչ խոտով, ինչը լավատեսական ավարտ է, եւ ընդգծում է, որ այդ խոտի աճելը կախված է մեզանից: Այսինքն այլեւս ԵՍ-ը չէ, այլ ՄԵՆՔ-ն է: Մենք լավատես չլինելու իրավունք չունենք, եւ միայն լավատեսությունը կարող է փրկել մեզ:

**- Իսկ այս ընթացքում Քվադրինալեի այցելուները ինչպե՞ս ընդունեցին ձեր աշխատանքը, հասկանալի՞ էր այն պատգամը, որ ցանկացել եք ցուցադրության միջոցով հանրությանը հասցնել:**

- Ի զարմանս ինձ՝ այո՛: Բավական է կարդալ տպավորությունների գրքում թողած գրությունները, եւ պարզ կլինի, թե ինչպիսին են արձագանքները: Ու քանի որ խորագիրն էր՝ «Ես տեսնում եմ, ես չեմ տեսնում», շատերը գրել են՝ «Հիմա արդեն տեսնում ենք»: Շատերը շնորհակալություն էին հայտնում, որ շոշափել ենք այս թեման, քանի որ չգիտեին եւ նոր էին տեղեկանում: Օրինակ, մի իսպանացի երիտասարդ մոտեցավ եւ ասաց, որ ինքը գիտի Արցախի ու Ադրբեջանի հակամարտության մասին եւ շատ զայրացած է, որ բոլորը խոսում են Ուկրաինայի մասին, իսկ Արցախի մասին լռում են: Իմ գլխավոր նպատակն այդ էր, որ մարդկանց ասենք, որ ուրիշ պատերազմ էլ կա, բացի ուկրաինականից: Ու նաեւ մի այլ կարեւոր թեմա էի արծածում՝ թե որն է թատրոնի դերը պատերազմական իրավիճակում: Եվ պատահական չէ, որ շատերն իրենց գրառումներում նշել էին, որ միայն արվեստը կբերի իսկական խաղաղության: Իրականում արվեստը հզոր զենք է:

**- Դուք արդեն երրորդ անգամ եք մասնակցում Պրահայի Քվադրինալեին: Ձեր կարծիքով, ի՞նչ են տալիս այս փառատոնները ձեզ՝ իբրեւ անհատի, եւ նաեւ մեր երկրին: Զգացե՞լ եք ազդեցությունը:**

- Այո, զգացել եմ: Անհնար է, որ լինես այս ամենի մեջ ու որեւէ բան չքաղես ՝ սկսած դասախոսություններից, վարպետաց դասերից եւ վերջացրած շփումներով: Իհարկե, ամենակարեւորն է նաեւ, որ նման հարթակները բացում են քո մտահորիզոնը, սահմանները մի տեսակ ջնջվում են եւ դու ավելի ազատ ես սկսում ստեղծագործել ու մտածել: Բնականաբար, երբ իմ նման նկարիչը ազատ է մտածում, տեղյակ է համաշխարհային թատերական ոլորտի նորություններին, ինքնըստինքյան, սկսում է համահունչ քայլել աշխարհի նորությունների հետ: Բնականաբար դա բերում է նաեւ իմ ոլորտի՝ երկրի թատերական արվեստի զարգացմանը:

**- Եթե համեմատելու լինենք ձեր առաջին մասնակցությունը Պրահայի Քվադրինալեին եւ հիմա, ինչ - որ զարգացում տեսնո՞ւմ եք: Իհարկե, չեմ կարող չնշել, որ դրանցից յուրաքանչյուրն իր ուրույն տեղն է ունեցել:**

- Այո , ուրույն տեղն են ունեցել, եւ թեմաներն են տարբեր եղել, եւ այցելուներն են տարբեր, եւ տարբեր ձեւով էլ արձագանքում են: Սխալ կլինի մեկը մյուսի հետ համեմատելը: Բայց այս վերջինը ես կառանձնացնեմ, քանի որ թեման Արցախյան պատերազմն էր: Ես հնարավորինս արեցի, որ այն իրականություն դառնա: 2015 թվականին նույնպես կարեւոր թեմայով էինք ներկայացել՝ նվիրված էր Ցեղասպանությանը, բայց ցեղասպանության մասին շատ է խոսվել, իսկ Արցախյան պատերազմի մասին ավելի քիչ է խոսվել, հատկապես՝ արվեստի բնագավառում:

⇨ Բ

# «Անասնաֆերման»՝ ըստ «Գոյ» թատրոնի

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Գոյ» թատրոնը (գեղարվեստական ղեկավար՝ **Արթուր Սահակյան**) Հայաստանում առաջինը ներկայացրեց բրիտանացի գրող **Ջորջ Օրուելի** «Անասնաֆերման»՝ **Սարգիս Արզումանյանի** բեմադրությամբ: Առաջնախաղը տեղի ունեցավ 2017 թ.՝ դեռ մինչեւ «թավշյա» իշխանափոխությունը, սակայն այս տարվա հունիսի 4-ի ներկայացումն առանձնահատուկ էր նրանով, որ իր ստեղծման 35-ամյակը տոնող, ու, ցավոք, փակման վտանգի առջեւ կանգնած թատրոնի մի քանի այլ ներկայացումների շարքում «Անասնաֆերմայի» մուտքն էլ ազատ էր հանդիսատեսի համար: Երբ հանդիսականները բեմից անցնելով դահլիճ՝ զբաղեցնում են իրենց տեղերը, ներկայացման որոշ գործող անձինք արդեն բեմում են, ֆերմեր Ջոնզը (**Լեւոն Անտոնյան**) կերակրում է կենդանիներին, հնչում են բնության ձայները: Ի սկզբանե տպավորություն է ստեղծվում, որ հանդիսատեսն էլ հրավիրված ճաշավորներին հավասարազոր գործող անձ է կամ պատգա իրադարձությունների զոհ:

Բեմն էլ **Գարիկ Մանուկյանի** մտահղացմամբ ձեւավորված է որպես գոմի՝ դեպի հանդեսատեսը բացված ներքնամաս, որի հետ դահլիճը մեկ ընդհանուր «Մենոր ֆերմա» է կազմում: Ներկայացման սկզբում գործող անձինք էլ են դեպի բեմը անցնում հանդիսասրահի միջով: Հենց սկզբից Գնդապետ մականունով խոզի նամակն ընթերցելիս գործողությանը հատուկ փայլ է հաղորդում **Էդգար Անդրեասյանի** (Ջոան) խաղը, որը թե՛ իր շարժուձեւով, թե՛ շեշտադրումներով յուրովի տեղայնացրել է այս դերը, ավելի մոտեցրել մեր իրողություններին: Զարմանալի է, թե 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման եւ ստալինյան բռնաճնշումների մոտիվներով գրված այս վիպակն այսօր էլ որքան արդիական է հետխորհրդային շատ երկրների, այդ թվում՝ Հայաստանի համար: Ինչպե՞ս չվերաձեւակերպել **Վահրիճ Բախչանյանի** խոսքերը՝ մենք ծնվել ենք, որ Օրուելին իրականություն դարձնենք: Զուգահեռները ակամա են ծագում գլխումդ. մի պահ նույնիսկ մոռանում ես ծանոթ սյուժեն ու ցանկանում, որ ամեն ինչ բարեհաջող ավարտվի, անասունները վերջապես ազատվեն: Սակայն, թերեւս, հեղափոխությունների ընդհանուր սկզբունքն է, որ գաղափարական առաջնորդներին անխուսափելիորեն փոխարինում են հերթական բռնապետները, ըմբոստացած ժողովուրդը հայտնվում է ավելի ծանր պայմաններում, քան նախկինում էր, իսկ հեղափոխության կարգախոսներն էլ աստիճանաբար անճանաչելիորեն ձեւախեղվում են:

Անթաքույց հումորով է բեմադրված ֆերմայում անասունների քվեարկությունը իրական ընտրության բացակայության պայմաններում, երբ միախառնվում են «կողմն» ու «դեմը»:






Հայտնի է, թե ինչ պաստառազմ էր ակնարկում Գոմի ճակատամարտով Օրուելը, սակայն չես կարող ձերբազատվել նմանություններից. մեծաթիվ զոհերը, որեւէ առաջխաղացման բացակայությունը նորահայտ առաջնորդի՝ Նապոլեոն խոզի սպասարկուները ներկայացնում են իբրեւ հաղթանակ: Անասունների կյանքի պայմանների աստիճանական վատթարացման համար էլ նրանք մեղադրում են վաղուց արտաքսված Ձնագնդի խոզին, որի փոխարեն քավության նոխազ են դարձնում նրա կողմնակից անասուններին:

Բեմադրությանը կենդանություն են հաղորդում զոնգ-երգերը (հեղինակներ՝ **Արթուր Մանուկյան, Սերգո Սարգսյան**) եւ երաժշտական ձեւավորումը (**Արման Սահակյան, Սերգո Սարգսյան**), որում օգտագործված գերժամանակակից ռիթմերը, ազդանշանները եւ աղմուկները հիշեցնում են, որ (**Ֆոլքների** բառերով) անցյալը «դեռ չի անցել»:

Ուզում եմ հատուկ նշել դերասանների անկաշկանդ, օրգանական խաղը, երբ հաճախ առանց լրացուցիչ արտաքին միջոցների իսկույն պարզ է դառնում, թե ինչ կենդանի է բեմում՝ խոզ, ոչխար, ձի, այծ, էշ, ագռավ, հավ թե շուն: Կին դերակատարները հաջողությամբ հավասարակշռում են տղամարդկանց կոպիտ խաղը՝ որոշ մեղմություն հաղորդելով ներկայացման ծանր տեսարաններին: **Սարգիս Չոլոյանը** (Նապոլեոն) իր զգացական, էքսպրեսիվ խաղով եւ **Տրդատ Մակարյանը** (Ձնագնդի) իր դաստիարակված իդեալիզմով ու անմիջականությամբ, մեծ վարպետությամբ ներկայացնում են երկու հակոտնյա կերպարների՝ պահպանելով ներկայացման ձգողականությունը եւ տեմպը:

Բռնապետ Նապոլեոնը կամաց-կամաց ձեւափոխում է, իրեն հարմարեցնում, նենգափոխում հեղափոխության սկզբունքները. «Ոչ մի անասուն երբեւէ չպետք է սպանի մի ուրիշ անասունի» (եթե պատճառ կա՝ կարելի է), «Անասունը երբեք անկողին չի մտնի» (ինչո՞ւ ոչ), «Բոլոր անասունները հավասար են» (բայց որոշ անասուններ ավելի հավասար են), եւ այլն: Ի վերջո, Նապոլեոնը պիտի որդեգրի հակահեղափոխական գաղափարներ, մերժի հեղափոխության տարածումը ու գոռգոռա, որ «ինչպես նախկինում, այնպես էլ հիմա մեր միակ նպատակն է եղել հարեւանների հետ բարիդրացիական հարաբերությունների ստեղծումը»: Երբ նա վերադարձնում է ֆերմայի մինչհեղափոխական անվանումը, չես կարող չմտաբերել ներկայիս «հեղափոխականների» վերադարձը խորհրդային՝ վաղուց մերժված սահմաններին եւ իրողություններին...

Դատելով այս աշխատանքից՝ երիտասարդ ռեժիսոր Սարգիս Արզումանյանը դեռ հաճելիորեն կզարմացնի հանդիսատեսին. նա վարպետությամբ է մշակում միզանսցենները եւ պատկերները, դրանք հագեցած են, խոսուն, նա կարողանում է ասկետիկ միջոցներով հասնել բարձր արտահայտչականության, բեմադրել զուգահեռ գործողություններ:

Բեմադրությունը՝ ի տարբերություն հականտոպիստական վիպակի, լավատեսորեն է ավարտվում, դրանում հասկանալի են ողջ մնացած էշի (**Հայկ Կլեկչյան**) վերջին բառերը. «մենք կվերակառուցենք ֆերման եւ վերջապես կլինենք ազատ»:

Հուսանք, որ վերջ կդրվի մեր թատրոնների հաջորդական գլխատմանը եւ «Գոյ» թատրոնը կվերապրի, քանզի հաստատապես ասելիք ունի...

# Հայաստանն առաջին անգամ արժանացավ Պրահայի Քվադրիենալեի մրցանակին

**Ա - Իսկ ինչո՞ւ Հայաստանում նման բիենալե կամ Քվադրինալե չի անցկացվում:**

- Առանձին չունենք: Բայց ՀայՖեստում մի ժամանակ իմ առաջարկած նախագծով անցկացվեց բեմանկարչության զարգացման մի ծրագիր, որին մասնակցեցին արտասահմանից ժամանած հեղինակավոր մասնագետներ ու դասախոսներ, նաեւ աշխատաժողովներ անցկացրեցինք:

**- Այստեղ ներկայացված են նաեւ բեմական ձեւավորման բազմաթիվ օրինակներ՝ մանրակերտեր: Եթե համեմատելու լինենք, Հայաստանը շա՞տ է հետ մնում այդ համաշխարհային զարգացումներից:**

- Բարդ հարց է: Որպեսզի հետ չմնա, նախ մտածելակերպը պետք է փոխվի, եւ դա միայն նկարչից կախված չէ: Թատրոնը փոխկապակցված ախտանք է նախ ռեժիսորի հետ: Բայց ես շատ լավ զարգացումներ եմ նկատում Հայաստանում՝ հատկապես երիտասարդների շրջանում: Այսօր երիտասարդները շատ ազատ են մտածում: Մի քիչ դանդաղ, բայց եկող սերունդը բոլոր կարծրատիպերը կկոտրի: Իմ կարծիքով ե՛ւ դասական թատրոնը պետք է մնա, ե՛ւ փորձարարականը, ե՛ւ պետք է լինի ցանկացած գա-




ղափարով ներկայացում, քանի որ այդ բազմազանությունից են ծնվելու ամենալավ նախագծերը: Մարդիկ պետք է ազատ լինեն իրենց գաղափարները իրականացնելու հարցում:

**Վերջում հավելենք նաեւ, որ Նելլի Բարսեղյանին ցուցադրությանն իրենց աջակցությունն են բերել պոետ, երգահան Նարեկ Կոստոսը, ռեժիսորներ Գոռ Մարգարյանն ու Արտուշ Միքայելյանը, լուսանկարիչներ Վաղինակ Ղազարյանը, Գուրգեն Գինոսյանը, Գայանե Հարությունյանը, Ստեփան Պողոսյանը: Նրանց լուսանկարները տպագրված են գրքույկում:**

**Հայկական տաղավարի գաղափարը լավագույնս փոխանցում էր մեր մտածմունքներն ու հույզերը, մեր ցավը, բայց նաեւ ապրելու ու արարելու մեր նպատակասլացությունը: Բնականաբար, եթե Նելլի Բարսեղյանն ունենար պետական աջակցություն, կարելի կլիներ ավելի ընդարձակ ցուցադրություն ապահովել: Ուստի, շնորհավորելով մեր հայրենակցուհուն իր իրոք համեստ, բայց խորը ասելիք ունեցող ցուցադրության համար, հույս հայտնենք, որ Հայաստանի մշակույթի պատասխանատուները գոնե այսուհետ կաջակցեն նման նախագծերին, որպեսզի հեղինակն իր անձնական միջոցներով չհասնի Պրահա ու միայնակ երկիր ներկայացնի, այլ զգա, որ իր թիկունքում պետություն կա:**



# Պատրիկ Ռադըլե. Ֆրանսիացի երաժիշտը հանուն Հայաստանի եւ Արցախի

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

***ԵՐԵՎԱՆ-ՌԵՄՍ, Ֆրանսիա - Պատրիկ Ռադըլեն*** *ֆրանսիացի երգիչ (բարիտոն), դաշնակահար եւ կոմպոզիտոր է: Վոկալ արվեստ է ուսանել Փարիզի կոնսերվատորիայում, որտեղ արժանացել է առաջին մրցանակի: 1991 թվականից եղել է Փարիզի «Ռադիո Ֆրանս» երգչախմբի մենակատար, հանդես եկել մի շարք անվանի դիրիժորների ղեկավարությամբ: Մասնակցել է բազմաթիվ համերգների՝ որպես մեներգիչ եւ դաշնակահար (երգիչների եւ կամերային նվագախմբերի նվագակցությամբ): Պարբերաբար համագործակցում է գերմանական «Բերենռայթեր» հրատարակչության հետ՝ օպերաների նվագախմբային պարտիտուրների դաշնամուրային-երգային մշակումներ կատարելիս:*



**-Հարգելի՛ Պատրիկ, անցած ապրիլի 25-ին Երեւանի Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի ունեցած ձեր եւ ձեր դստեր՝ թավջութակահարուհի Մաթիլդ Ռադըլեի համատեղ համերգը՝ «Քեզ համար, Արցախ» վերնագրով, ավելի քան հիշարժան էր: Ոչ միայն այն պատճառով, որ դուք ներկայացրիք միմիայն հայկական երգ-երաժշտություն, այլ քանի որ մենք ի դեմս ձեզ հայտնաբերեցինք տաղանդավոր երաժիշտների: Ցանկանում եմ կրկին շնորհակալություն հայտնել Հայաստանին եւ Արցախին ցուցաբերած բարոյական աջակցության եւ ձեր բարձրորակ արվեստի համար: Ինչպե՞ս կբնութագրեք այդ համերգը:**

-Թող համերգին ներկա գտնվածները խոսեն իրենց լսածի մասին: Ես միայն կարող եմ ասել, թե ինձ համար ինչ նշանակություն ունեին Երեւանում եւ Կապանում կայացած մեր երկու համերգները: Հայ երաժշտություն կատարելով՝ ես իմ աջակցությունն ու համերաշխությունն եմ հայտնում ողջ հայ ժողովրդին: Այս համերգը նաեւ գագաթնակետն էր այն ամենի, ինչ ես ձեռնարկել եմ 2020 թվականի նոյեմբերից ի վեր եւ իմ սիրո բյուրեղացումն էր Հայաստանի, նրա ժողովրդի ու նրա մշակույթի հանդեպ:

**-Սահմանամերձ Կապանում սովորաբար հյուրախաղեր չեն լինում՝ չնայած քաղաքի գեղարվեստական ավանդույթներին: Ինչո՞ւ որոշեցիք գնալ այնտեղ: Եվ ինչպե՞ս մեկնեցիք, նոր օդային չվերթո՞վ:**

-Կապանում համերգով հանդես գալու երկու հիմնական պատճառ կար: Առաջինն իմ ցանկությունն էր՝ աջակցելու ողջ Սյունիքին, որն Արցախի պես լրջորեն վտանգված է: Կապանը Հայաստանի այս շրջանի ամենակարեւոր քաղաքն է, ուստի վճռական խորհրդանիշ է, իսկ Արցախին շատ մոտ լինելու նրա աշխարհագրական դիրքը հավելյալ նշանակություն ունի: 2022 թվականի օգոստոսին ընտանիքիս հետ Հայաստան կատարած իմ առաջին ճամփորդության ժամանակ մենք եղանք Կապանում, այցելեցինք մեր ընկերուհի Մերի Խաչատրյանի ընտանիքին: Այդ ժամանակ ես խոստացա նորից գալ այնտեղ եւ երգել: Համերգը մեծ ընդունելության արժանացավ, մոտ 400 հանդիսատես էր հավաքվել: Կապան գնացինք ավտոճանապարհով, փորձնական չվերթն ընդամենը երկու օր առաջ էր կայացել, ուստիեւ Երեւան-Կապան օդային կապը դեռ բաց չէր: Բայց հաճելի էր ճամփորդել ավտոճանապարհով, գյուղերի միջով եւ հիանալ Հայաստանի շատ բազմազան բնապատկերներով:

**-Պրոֆեսիոնալ երաժիշտների համար նորմալ է առանց պարտիտուրի նվագելը, բայց դուք նաեւ հայկական երգերը երգում էիք առանց կարդալու: Ինչպե՞ս կարողացաք անգիր սովորել հայերեն տեքստերը եւ երգել ճիշտ արտասանությամբ:**

-Ես շատ տքնաջան եմ աշխատել, նախ՝ ճանաչելու հայ երաժշտությունը, կլանելու նրա յուրահատուկ արտահայտությունը եւ հասկանալու նրա բուն էությունը: Հետո ընտրեցի երգացանկն ու սկսեցի աշխատել տեքստերի թարգմանության եւ արտասանության վրա: Այդ գործում ինձ սկզբում օգնեցին Մերի Խաչատրյանը եւ նրա մայրը՝ **Անահիտը,** այնուհետեւ մեր երեւանցի ընկերուհի **Աննա Գաբրիելյանը**, որն ինձ ահռելի օգնություն ցույց տվեց՝ առանց իր ժամանակը խնայելու: Այս ընկերների եւ անձնական քրտնաջան աշխատանքի շնորհիվ ես կարողացա հասնել այն ամենին, ինչին ձգտում էի՝ անգիր երգել հայերեն, հասկանալով յուրաքանչյուր բառի իմաստը եւ դաշնամուրով նվագակցել:

**-Շնորհակալ ենք նաեւ դաշնամուրի եւ թավջութակի համար գրած ձեր «Արցախ» գեղեցիկ ստեղծագործության համար: Մաղթեմ, որ այս գործը շատ երկրներում հնչի: Եվ ինչպե՞ս ոչ հայազգի ֆրանսիացի երաժիշտը կարողացավ գրել այս ստեղծագործությունը:**

-Շնորհակալ եմ այս գործի մասին խոսելու հնարավորության համար: Արցախի համար ինչ-որ բան գրելու գաղափարը վաղուց ունեի: Դրա համար ես ուզում էի արցախյան հայկական մեղեդիներ մասամբ օգտագործել: Անցյալ տարի Հայաստանում գտնվելու ընթացքում կարողացա գտնել այդ մեղեդիներից մոտ տասնհինգը: Դրանցից երեքը մշակելով եւ զարգացնելով՝ օգտագործեցի «Արցախը» կազմող երեք կտորներից յուրաքանչյուրի համար: Իհարկե, ես գրել եմ իմ սեփական մեղեդիները նույնպես եւ համադրել հայկական թեմաների հետ՝ նպատակ ունենալով ինչ-որ համահունչ բան կառուցել եւ փորձել մոտ մնալ հայկական հնչերանգին: 2020 թվականի օգոստոսին Հայաստան կատարած մեր ուղեւորության ընթացքում մենք ճանապարհորդեցինք երկրի բազմաթիվ վայրերով: Ինձ խորապես տպավորեցին հայկական բնապատկերները, լեռները, վանքերը... Հանդիպեցինք արցախցի փախստական ընտանիքների, որոնք կորցրել էին ամեն ինչ: Այս շատ ուժեղ տպավորությունների ու հույզերի շնորհիվ գրեցի այս երաժշտությունը՝ դրա մեջ արտահայտելով այն, ինչը կարծես թե հասկացել եմ՝ հայկական ոգին եւ այն, ինչն իմ մեջ հրահրում է այն:






**-Սա ձեր երկրորդ այցն էր Հայաստան: Ի՞նչ կարող են գտնել արեւմուտքցիներն այս երկրում:**

-Այս հարցը պահանջում է չափազանց ծավալուն պատասխան, քանի որ Հայաստանում այնքա՜ն շատ բաներ եմ գտնում, որոնք ամրապնդում են իմ կապվածությունը այս երկրին եւ նրա ժողովրդին: Փորձեմ համախմբել...

Առաջին հերթին՝ հանդիպումներ, որոնք միմիայն Հայաստանում են հնարավոր: Հայկական հյուրասիրությունն իսկապես դատարկ խոսք չէ. այն միանգամայն արտակարգ է: Մեզ միշտ ընդունել են չափազանց մեծահոգի եւ սիրառատ կերպով: Անձնական, մասնագիտական թե հանրային հանդիպումներիս ժամանակ, տաքսու վարորդի հետ սոսկ մի քանի րոպե տեւողությամբ զրույցի եւ կամ փողոցի անկյունում ինչ-որ անսպասելի հանդիպման ընթացքում բոլորը մշտապես եղել են շատ ջերմ, հաճելի եւ բարեհոգի: Այնուհետեւ՝ բուն երկիրը, նրա սքանչելի բնապատկերները, նրա սարերը՝ այնքա՜ն գեղեցիկ եւ բազմազան, ճարտարապետական գեղեցկությունը՝ խիստ բնորոշ վանքերին ու եկեղեցիներին, որոնք սփռված են նույնիսկ լեռների ամենահեռավոր վայրերում, լեզուն եւ նրա հոյակապ այբուբենը, որ մեծարում են մայրաքաղաքում եւ նրանից դուրս եւ որը հայկական ինքնության հիմնասյուներից է: Իսկ հայկական խոհանոցը եւ այն ներկայացնելու ձե՞ւը: Ամբողջ երկիրը շնչում է հայ մշակույթով: Եվ ընդհանուր մթնոլորտը՝ մարդկային ու ապահով: Քաղաքում թե լեռներում, հեղինակավոր վայրերում, թե առավել անապահով վայրերում՝ Հայաստանում ամենուր ես ինձ զգում եմ, ինչպես իմ տանը:

**-Դուք ցանկանում եք ստանալ հայկական անձնագիր, մինչդեռ որոշ ՀՀ քաղաքացիներ երազում են օտարերկրյա անձնագրեր ունենալ...**

-Ես ինձ չափազանց հարազատ եմ զգում Հայաստանին եւ հայությանը: Այս կապվածությունն օրեցօր աճում է եւ տասնապատիկ ավելանում Հայաստան կատարած իմ յուրաքանչյուր այցից հետո: Հայկական քաղաքացիության համար դիմումն իմ ցանկությունն է՝ որոշակի արտահայտելու այս խորը կապվածությունս: Դա հայ ժողովրդին պատկանելու իմ բուռն ցանկության արտահայտությունն է: Ինձ համար դա այն ճանապարհի տրամաբանական ու բնական շարունակությունն է, որն ինձ ավելի ու ավելի է տանում դեպի Հայաստան:

**-Կրկի՛ն շնորհակալություն, Պատրի՛կ, Մաթիլդին եւ ձեզ: Եվ ցանկանում եմ, որ դուք հայ երաժշտությունը ներկայացնեք աշխարհով մեկ եւ կրկին ու կրկին այցելեք Հայաստան՝ հայկական անձնագրով:**

-Երաժշտության միջոցով հայ մշակույթը տարածելն ու ճանաչելի դարձնելը, այդպիսով՝ Հայաստանի եւ Արցախի վրա ուշադրություն հրավիրելն այժմ իմ գլխավոր մտահոգությունն է եւ իմ ամենանվիրական ցանկությունը: Ես կշարունակեմ աշխատել այդ ուղղությամբ, իմ համեստ միջոցներով նպաստել, որ բոլոր հայերը վերջնականապես ապահով եւ հանգիստ կյանք ունենան իրենց հայրենիքում...

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Կորսված նկարների հետքերով

## *Չարեքթար գյուղից Փարիզ*

2020 թվականի ղարաբաղյան 2-րդ պատերազմի ավերիչ ազդեցությունը դեռ երկար կտեւի: Կյանքը շարունակվում է, բայց ծանր հիշողությունները ստվերի պես հետապնդում են մարդկանց, հետեւանքները օր օրի ավելի են խորանում:

Քառասունչորսօրյա պատերազմի օրերին աշխարհի ուշադրությունը դարձյալ մեր տարածաշրջանի վրա էր՝ թե՛ քաղաքական, հանրային շրջանակների, թե՛ մամուլի: Պատերազմի ավարտից շատ չանցած՝ Ղարաբաղ են այցելում ֆրանսիական LA CROIX (Լա Քրուա՝ «Խաչ») շաբաթաթերթի երկու թղթակիցներ՝ **Պիեռ Սոթրոյը** եւ **Թոմաս Գիշարը**:

Նրանք մոտից են տեսնում պատերազմի ավերակող դեմքը. քանդված հայկական բնակավայրեր, անտերացած տներ, լքված հող, մարդիկ չկան, արտաքսված են: Գյուղերից մեկով անցնելիս՝ կանգ են առնում լքված մի տան բակում. Շուրջն ամայություն էր, կենդանության որեւէ նշույլ չկար, հանկարծ գետնին նկատում են մատիտանկար էսքիզներ՝ դիմանկարների: Տան բնակիչները խուճապահար փախել, նկարները թափվել, մնացել էին գետնին: Գյուղը գտնվում է հայ-ադրբեջանական շփման գծի անմիջական հարեւանությամբ: Ֆրանսիացի թղթակիցները վերցնում են նկարները, նկատում են հեղինակային ստորագրություն դրանց անկյուններում: 2021 թվականի ապրիլի սկզբներին նույն թղթակիցները դարձյալ Հայաստան են այցելում, շրջում սահմանային բնակավայրերով, լինում են Տավուշում, հանդիպում մարդկանց, զրուցում, եւ որտեղից որտեղ նրանցից մեկին նմանեցնում են Չարեքթար գյուղի լքված տան բակում գտած տղայի դիմանկարին, ցույց են տալիս այն եւ հարցնում, թե արդյոք նա չէ՞ պատկերված: Տղան ասում է, որ ինքն է: Նկարները իրենց հետ դարձյալ տանում են Ֆրանսիա:



2023-ի մայիսյան դեպքերը՝ Լաչինի միջանցքի շրջափակումը ադրբեջանցիների կողմից, որը հումանիտար աղետի էր վերածվում, միջազգային հանրության եւ մամուլի ուշադրության կենտրոնում էր հայտնվել:

Այդ օրերին Պիեռ Սոթրոյը եւ Թոմաս Գիշարը վերստին անդրադառնում են ղարաբաղյան թեմային, իրենց նախորդ այցելությունների հետքերին, Չարեքթարի նկարներին եւ փորձում գտնել նկարչին: Բարեբախտաբար նկարներն անվնաս էին, ստորագրությունը հեղինակի՝ նույնպես. **Կարապետ Հաճի Ասլանյան**: Որոնումները հասնում են նպատակին, նկարիչը հաստատում է, որ այդ նկարների հեղինակն ինքն է, ասում, որ ներկա պահին Ֆրանսիայում է, սովորում է Մարսելի Արվեստի եւ դիզայնի բարձրագույն դպրոցում:

2017 18-ին Կարապետ Հաճի Ասլանյանը զինվորական ծառայության է եղել Ղարաբաղում՝ հիմնականում անցնելով այն Չարեքթար գյուղում: Տեղի բնակիչների շփումների մեջ Կարապետը մտերմանում է Ամիրյանների ընտանիքին, որոնց բարությանն ու հոգատարությանն իր հանդեպ հատուցում է նկարչական տաղանդով՝ նկարելով ընտանիքի անդամներին: Զինվորական ծառայությունը ավարտում, վերադառնում է Երեւան, ընդունվում Գեղարվեստի պետական ակադեմիա (մինչ այդ սովորել էր Թերլեմեզյանի անվան նկարչական պետական քոլեջում):



Գեղարվեստի պետական ակադեմիայի միջազգային կապերի բաժնի վարիչ **Մերի Պատվականյանը** պատմում է, որ Կարապետը 2-րդ կուրսի ավարտին դիմել է իրեն աջակցության խնդրանքով՝ փոխանակման ծրագրի շրջանակներում ուսումը շարունակելու Մարսելի Արվեստի եւ դիզայնի բարձրագույն դպրոցում: Փոխանակումը հաջողությամբ իրականացվում է: Նա այժմ սովորում է 3-րդ կուրսում եւ այս ընթացքում բավական հաջողություններ է ունեցել: Ֆրանսիացի թղթակիցները, ինտերնետային կապով տեղեկանալով այս մասին՝ մեկնում են Մարսել, հանդիպում Կարապետին: Զրույցի տպավորություններով գրվում է հոդված, որը տպագրվում է LA CROIX շաբաթաթերթում:



Այսպես, պատահականորեն, թե՞ նախախնամությամբ միմյանց են կապվում Չարեքթարը, Երեւանը, Գեղարվեստի պետական ակադեմիան ու Մարսելը, Փարիզն ու տեղի LA CROIX շաբաթաթերթը:

Բավականին ծավալուն հոդվածը լույս է տեսնում «Աքսորի մեջ գտնվող հայկական ընտանիքի հետքերով». «Ղարաբաղի կորսված նկարները» վերտառությամբ եւ, իհարկե , Չարեքթարի լքված տան բակում գտնված Կարապետ Հաճի Ասլանյանի մատիտանկար, ածխանկար դիմանկարներով, նաեւ Մարսելյան դպրոցում սովորելու ընթացքի նրա մի քանի նկարներով:

Հոդվածի վերնագիրն ինքնին խոսուն է. լրագրողները պատմում են ղարաբաղյան հետպատերազմյան ուղեւորության իրենց տպավորություններից, նկարագրում բնակավայրերը, պատմում այնտեղ հանդիպած մարդկանց ճակատագրերի, ապրելակերպի մասին: Հոդվածի մյուս հատվածի հերոսը Կարապետ Հաճի Ասլանյանն է՝ մեղմ ժպիտով, սեւահեր հայ երիտասարդը: Նա պատմում է Չարեքթար գյուղի, այնտեղ անցկացրած զինվորական ծառայության, Ամիրյանների ընտանիքի, իր կողմից արված դիմանկարների, Ֆրանսիայում ունեցած ուսումնական փորձի, թանգարանային մշակույթի, արվեստի հանդեպ ունեցած հետաքրքրությունների մասին:

- Իսկ դուք տեղյա՞կ եք այդ ընտանիքի ճակատագրից,- հարցնում են ֆրանսիացի թղթակիցները:

- Ոչ,- պատասխանում է երիտասարդը:

- Մենք տեղյակ ենք, կպատմենք,- շարունակում են զրույցը Պիեր Սոթրոյը եւ Թոմաս Գիշարը...

*Նկարները ֆրանսիական La Croix շաբաթաթերթից*

**ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ**

# Զապել Եսայանի գրությունների նոր հատորը անգլերեն թարգմանությամբ



Լոնդոնի «Կոմիտաս ինստիտուտը» վերջերս լույս է ընծայել դոկտ. **Նանոր Քըբրանյանի** «Zabel Yessayan. On the Threshold. Key Texts on Armenians and Turks as Ottoman Subjects» (**Զապել Եսայանը՝ նախաշեմին, Առանցքային տեքստեր, որոնք վերաբերում են հայերին եւ թուրքերին՝ որպես Օսմանյան հպատակների**) խորագրով, 144 էջանոց անգլերեն նկարազարդ գիրքը, որը նոր լույս է սփռում, ըստ «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի, մեծատաղանդ վիպասանի եւ հրապարակագրի արժեքավոր, բայց որոշ առումով համապատասխան ընդունելության չարժանացած գրական ժառանգության վրա:

Մանրակրկիտ արխիվային հետազոտությունների եւ խորաթափանց ընթերցանության արդյունքում գրքում ի մի են բերվել 11 առանցքային գրություններ, որոնք անմիջականորեն կապված են հայ-թուրքական հարաբերությունների պատմության հետ: Դրանք այսօր էլ խիստ այժմեական են: Գիրքն առաջին հատորն է ավելի մեծ մի ծրագրի, որը նախատեսում է հետագայում հրատարակել Եսայանի հայերեն գրությունները, ինչպես նաեւ Քըբրանյանի անգլերեն առաջաբանի հայերեն տարբերակը:




Գիրքն ընդգրկում է մոտ 25 տարիների ժամանակաշրջան՝ սկսած առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներից մինչեւ Թուրքիայի հանրապետության հռչակումը: Բացահայտվում են իմպերիալիզմին դիմակայելու, հայ-թուրքական հարաբերություններում կրոնական եւ միջցեղային դրսեւորումների հանդեպ Եսայանի ցնցող, երբեմն կանխագուշակումների մակարդակի հասնող նկատառումներն ու եզրահանգումները: Նրա գրությունները կրոնական վայրագությունների դեմ են բարձրաձայնում եւ շատ դեպքերում հակասում են Օսմանյան ժամանակաշրջանի մեզ ներկայացված պատմական փաստերին: Այդ գրություններում նաեւ կանանց ազատագրության, միջցեղային համերաշխության թեմաներն են շոշափվել: Նաեւ՝ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքը եւ սոցիալական անարդարությունները:

Դոկտ. Քըբրանյանի արժեքավոր առաջաբանը վկայում է Օսմանյան ժամանակաշրջանի հայերի պատմության եւ գրականության խորաթափանց գիտելիքների մասին:

Քըբրանյանն իր դոկտորականի գիտական աստիճանն ստացել է Օքսֆորդ համալսարանից: Նշանակվել է պրոֆեսորի օգնական Կոլումբիա համալսարանի միջին-արեւելյան, հարավ-ասիական եւ աֆրիկյան ուսումնասիրությունների ֆակուլտետում: Որպես հետազոտող գիտաշխատող պաշտոնավարել է Լոնդոնի «Քուին Մերի եւ Նանյանգի» (Սինգապուր) տեխնոլոգիական համալսարաններում: Բացի հրատարակված թարգմանություններից, նրա խմբագրությամբ լույս են ընծայվել հայոց գրականության բազմաթիվ գոհարներ: Նրա ամենաարժեքավոր աշխատությունը «Գերեվարված գիշերներ: Բոսֆորից Գալիպոլի Զապել Եսայանի հետ» (Captive Nights: From the Bosphorus to Gallipoli with Zabel Yessayan) հատորն է, որ Ֆրեզնոյի Կալիֆոռնիա համալսարանն է հրատարակել 2021 թվականին:

Պատրաստեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

# «Գործուն զղջալու» նախագծի ընդունումից հետո զղջալու ենք բոլորս. Ռուբեն Մելիքյան



Իրավապաշտպան, Արցախի մարդու իրավունքների նախկին պաշտպան Ռուբեն Մելիքյանը համոզված է՝ Քննչական կոմիտեի շրջանառած օրինագիծը՝ «Գործուն ղզջալու» մասին, լավ քողարկված ռումբ է, որ իշխանությունների համար որպես քաղաքական գործիք է ծառայելու: «**Ազգ**»-ի հետ զրույցում Մելիքյանը մեկնաբանում է՝ քրեական իրավունքի տեսության մեջ քրեական պատժից ու պատասխանատվությունից ազատվելու հիմքեր կան: Այսինքն՝ անձը, տարբեր պատճառներից ելնելով, քրեական պատասխանատվության չի ենթարկվում, պետությունը նրան կա՛մ հանցագործություն իրականացնելու մեջ մեղավոր չի ճանաչում, կա՛մ ճանաչում է, բայց պատիժ չի կիրառում: «Վերջինիս դասական դրսեւորումը վաղեմության ժամկետի հետ է կապված: Պետությունն ասում է՝ այո, դու հանցագործություն ես իրականացրել, բայց քանի որ դրանից հետո մինչեւ այս պահն այլ հանցանք չես գործել, հետեւաբար քո նկատմամբ պատիժ սահմանելն անիմաստ է ու ոչ նպատակահարմար: Կամ՝ պետությունը պատժից ու անգամ պատասխանատվությունից քաղաքացուն ազատում է համաներման մասին օրենքով, որտեղ ասվում է՝ այսինչ կատեգորիայի մարդկանց կա՛մ պատասխանատվությունից ազատել (այսինքն՝ անգամ մեղավոր չճանաչել), կա՛մ մեղավոր ճանաչելով՝ պատժից ազատել: Հատկապես վերջին՝ պատժից ազատելու ինստիտուտը գործում է ոչ մեծ ու միջին հանցագործությունների դեպքում, որովհետեւ խոսքն ավելի ցածր հանրային վտանգավորության արարքի մասին է: Հանցագործության չորս տեսակները երկու խմբի կարելի է բաժանել՝ ոչ մեծ ու միջին եւ ծանր ու առանձնապես ծանր: Դրանց բաժանումը պայմանավորված է բացառապես պատժաչափով. ոչ մեծը մինչեւ երկու տարի, միջինը՝ մինչեւ 5 տարի, ծանրը՝ մինչեւ 10 տարի, առանձնապես ծանրը՝ ընդհուպ ցմահ ազատազրկում:

Բնական է, որ երբ խոսում ենք պատժից ազատելու մասին, պետք է խոսենք ոչ մեծ ու միջին պատիժներից ազատելու մասին: Միայն այս երկու հանցագործությունների դեպքում է, որ սկզբունքից շեղումը կարող է ողջամիտ համարվել: Բայց անգամ այս դեպքում՝ կարծիքներ կան, որ շեղումները չափազանց շատ են: Նման կարծիքի արդարացիությունը գուցե պայմանավորված է նրանով, որ այսօր քրեական շատ գործընթացներ գաղտնի՝ ոչ հրապարակային են կատարվում: Եթե հրապարակային լիներ ամեն բան, մարդիկ կտեսնեին՝ գործը մտավ դատարան, մեղադրյալը մեղքն ընդունեց, դատարանն էլ որոշեց՝ եթե ընդունում է մեղքը, հետեւաբար պատժից ազատելու տարբեր մեթոդներ կարող է կիրառել: Այդ թվում, օրինակ, պատիժը պայմանական չկիրառելու որոշումը, ինչը բոլորիս աչքի առջեւ վերջերս տեղի ունեցավ (Նկատի ունի վարչապետի որդու՝ **Աշոտ Փաշինյանի** ու զոհված զինվորի մոր՝ **Գայանե Հակոբյանի** դատական գործընթացը- **Ս.Վ.**)»,- համակողմանիորեն բացատրում է մեր զրուցակիցը:

Դառնալով «Գործուն զղջալու» նախագծի բովանդակությանը՝ իրավապաշտպանն ընդգծում է՝ եթե «զղջումը» հրապարակային դատաքննության ընթացքում է կատարվում, ապա, ինչ-որ առումով, այն կարող է ընկալելի լինել: Ըստ Մելիքյանի՝ այս երեւույթի նկատմամբ մասնագիտական հանրույթի առարկությունը կապված է այն բանի հետ, որ ամեն բան քննիչի առանձնասենյակում է կատարվում. «Այսինքն՝ պաշտոնապես ինչ-որ մի անձ, որ ամեն ինչից զատ քաղաքական շատ ուղիղ ազդեցության տակ է գտնվում, առանց հանրային վերահսկողության կարող է որոշել, որ «իքս» մարդը պատասխանատվության չի ենթարկվելու:

«Գործուն զղջալու» ինստիտուտը խորհրդային է, ավելին՝ քրիստոնեական շրջանի արմատներ ունի. հատկապես հին դատաստանագրքերում զղջման ու ներման մասին շատ է գրվել: Խորհրդային տարիներին, սակայն, այդ ինստիտուտն աղճատվեց ու ձեւական բան դարձավ: Հատկապես ավագ սերնդի իմ գործընկերները կհիշեն, որ քննչական ապարատի համար այն կոռուպցիայի լայն դաշտ էր բացում: Կաբինետում, բոլորի աչքից հեռու հնարավոր էր հարցերը լուծել, ասել՝ հաջողություն: Հիմա առաջարկվում է, որ սրանց գումարվի նաեւ հանցագործության ծանր ու առանձնապես ծանր տեսակները: Այսինքն՝ գործում ներգրավված քննիչը կամ դատախազը ծանրացնող հանգամանքներում սպանություն կատարած անձին կարող են ասել՝ եթե զղջում ես, ապա՝ հաջողություն, ու գործն անգամ դատարան էլ չուղարկվի»:

Արցախի նախկին օմբուդսմենին համոզիչ չեն թվում օրենսդրական փաթեթում տեղ գտած փաստարկները, օրինակ՝ «Գործուն զղջումը» կիրառել քրեական հետապնդման մարմինների հետ համագործակցողների նկատմամբ: Սա, ըստ Մելիքյանի, ինչ-որ մեկի նկատմամբ ցուցմունք տալ է նշանակում. «Այսինքն՝ համագործակցիր մեզ հետ, ինչ-որ մեկի մասին սուտ ցուցմունք տուր, ու քեզ կազատենք պատասխանատվությունից: Հիմնավորումներից է նաեւ հետեւյալը՝ «վնաս պատճառելու դեպքում հատուցել, կամ, այլ կերպ ասած, հարթել է հանցագործության պատճառած վնասը: Բայց մոտ տասը տարի առաջ երկարատեւ քննարկումներից հետո սկզբունքը արմատացավ թե՛ պրակտիկայում, թե՛ օրենքի մեջ, որ որեւէ դեպքում՝ համաներում կլինի, թե այլ բան, անձը պատասխանատվությունից չի կարող ազատվել, եթե տուժողի վնասը չի հատուցել: Հիմնավորումներից մեկն էլ քննչական մարմինների ծանրաբեռնվածությունը թոթափելն է: Եթե անգամ այդպես է, ուրեմն առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց պետք է ասել՝ գնացեք տուն, հա՞:

Ամբողջ խնդիրը քրեական դատավարության մի շատ կարեւոր առավելություն մեջ է, որ իշխանություններին փաստի առաջ է կանգնեցրել: Տեսեք, ոչ մեծ, միջին, ծանր ու առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում մեղադրանք առաջադրելուց հետո համապատասխանաբար՝ 3, 5, 8, 10 ամիս անց պետք է որոշես՝ գործը կա՛մ դատարան ուղարկել, կա՛մ՝ կարճել: Եթե դատարան չուղարկեցին, ապա մարդն արդարացված է համարվում: Նախկինում մարդը հավերժ, օրինակ, տասը տարի կարող էր մեղադրյալ լինել, նրա նկատմամբ կարող էին «ստորագրությամբ չհեռանալու մասին» կարգավորումը կիրառել ու ասում էին՝ գնա: Գործն, այսպես ասած, քնում էր:

Հարց է առաջանում՝ խայտառակ այս նախագիծն ինչո՞ւ են հիմա ուզում կյանքի կոչել: Սա պատահական չէ: Կիշեք՝ մի քանի ամիս առաջ վարչապետի տիկին **Աննա Հակոբյանը** խոսում էր 11 հազար դասալիքի մասին, ու դա պատահական թիվ չէ: 44-օրյա պատերազմի դրվագներով՝ մոտավորապես այդքան մարդու նկատմամբ մեղադրանք կա առաջադրված, ու դրանք, որպես կանոն, ծանր ու առանձնապես ծանր հանցագործություններ են:

Մինչեւ օգոստոսի վերջ այս մարդկանց հարցը պետք է լուծել՝ կա՛մ այս կողմ, կա՛մ՝ այն: Նրանց արդարացնել չեն կարող, որովհետեւ կստացվի, որ Հակոբյանը սխալ ինֆորմացիա է ասել, բայց եթե «Գործուն զղջումով» անցնեն, ապա մեղքն ընդունվելով՝ մարդկանց կներեն ու կազատեն իրավական գործընթացներից: Կարճ ասած՝ պատերազմի մասնակիցներին ստիպում են, համոզում են կամ, գուցե, շահագրգռում են, թե՝ տղեք ջան, ընդունեք մեղքն ու գնացեք հանգիստ ապրեք: Բայց սրանից հետո Փաշինյանն ու նրա հետ փոխկապացված անձինք կբարձագոչեն, թե «խնդրեմ, սա էլ ապացույցը, 11 հազար մարդ ընդունել է, որ դասալքություն է արել»: Նախագծի քաղաքական բաղադրիչը հենց սա է»,- եզրափակում է մեր զրուցակիցն՝ ընդգծելով, որ սա հակապետական ու հակաիրավական նախագիծ է, իսկ ընդունվելու դեպքում՝ բոլորս ենք զղջալու:

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Դիլիջանի հիդրոէլեկտրակայան-120

Հայաստանում առաջին հիդրոէլեկտրակայանը կառուցվել է 1903 թվականին Դիլիջանում: Աղստեւ գետից առբերվող ջրով պտտվող անիվը աշխատեցնում էր փայտասղոցարանի շրջանաձեւ սղոցը: Աղստեւ գետը Կուրի աջակողմյան վտակներից է: Նրա երկարությունը 133 կմ է: Սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի Թեժլեռ գագաթի լանջերից: Վերին հոսանքում ունի լեռնային բնույթ, հոսում է նեղ կիրճով, ստորին հոսանքում՝ լայնահուն է: Խոշոր վտակներն են Բլդանը, Սառնաջուրը, Ոսկեպարը, Գետիկը, Աղդանը: Տարեկան միջին ծախսը 8,22 մ3/վ է, առավելագույնը՝ 158 մ3/վ, նվազագույնը՝ 0,02մ3/վ, տարեկան հոսքը՝ 256 մլն.մ3: Գետի ջուրն օգտագործվում է ոռոգման համար: Ափերին են գտնվում Դիլիջան եւ Իջեւան քաղաքները:

«Մշակ» թերթի 1912թ. մայիս ամսվա թիվ 120-ում տպագրված «Ուրախալի երեւույթներ» հոդվածում հեղինակը գրում է. «...Այդպիսի մի ձեռնարկություն պիտի համարել եւ Դիլիջանի կայանը, որ անհատական ուժերով ու միջոցներով հիմնել է տեղացի մի խրախուսելի անձ՝ **Հայկ Գրիգորյան**: Կայանն առայժմ լույս է ստանում մի մոտորով (ջրի ուժով)՝ 220 վոլտ, 32 եւ կես ամպեր: Գյուղում դրված են 360 լամպիկներ, լուսավորված են խճուղին, շուկան: Ամսավճարը մի լամպիկի համար՝ 1 ռուբլի: Ամռանը, երբ տեղս կգան ամառողներ, Հայկ Գրիգորյանը մի մոտոր եւս կբերի, որով եւ էլեկտրական ուժն ու լամպիկները կավելանան:



Մեր երկիրն էլեկտրականության անսպառ աղբյուր է,ըստ ամենայնի շահագործելի,բայց ցավ է նկատել,որ գավառական շատ կենտրոններ զուրկ են էլեկտրական ուժերի շահագործումից: Դիլիջանի այս կայանը հասարակական նշանակություն ունի եւ գավառական համայնքները օրնակելու են»:

Դիլիջանի հիդրոէլեկտրակայանը հետաքրքրեց շատերին ոչ միայն Հայաստանում, այլեւ նրա սահմաններից դուրս: Դիլիջան է ժամանում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի 5-րդ դասարանի սաների խումբը՝ նույն դպրոցի ուսուցիչ **Շահբազյանի** ղեկավարությամբ եւ ծանոթանում էլեկտրակայանի հետ:

Անիվի մեխանիկական էներգիան հաղորդելով 10կՎտ հզորություն եւ 230Վ լարման հաստատուն հոսանքի գեներատորին՝ ստեղծել են առաջին պարզունակ հիդրոէլեկտրակայանը: Կայանի օգտակար ճնշումը 2 մետր էր: Էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությունը կազմում էր մինչեւ 10 հազար կՎտժ եւ օգտագործվում էր նաեւ լուսավորության համար:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**
Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# «Արեւմտյան միջնորդները Ղարաբաղի ապագայի վերաբերյալ համոզիչ առաջարկով դեռ հանդես չեն եկել»

Անցյալ շաբաթ գերմանալեզու ԶԼՄ-ները չփարատեցին դյուրահավատ կամ խաղաղության կարոտ ընթերցողի այն հույսը, որ օրումեջ փորձում են հաստատել Վաշինգտոնից, Բրյուսելից, Մոսկվայից թելադրված. Անընդմեջ կարդում ես լրահոսում՝ կողմերը՝ Հայաստանն ու Ադրբեջանը, մոտ են խաղաղության հաստատման...բայց՝ վերնագրի տակ զետեղված տեքստի բովանդակությունը ցրում է խաբկանքը, թե խաղաղություն լինելու է, քանի որ «վերջապես Հայաստանն առաջին անգամ հրաժարվում է Արցախից...»

Ուշագրավն այն է, որ վերջին շրջանում գերմանագիր հեղինակները նախընտրում են Հայաստանի դիրքորոշման մասին ծանուցել ոչ թե իրենց երկրում կամ Մոսկվայի իրենց գրասենյակում գտնվելով, այլ նախընտրում են Հայաստանում լինել, տեսածն ու լսածը շարադրել: Գերմանական ռադիոն՝ Deutschlandfunk-ը, հունիսի 12-ին մոտավորապես 7 րոպեանոց ռեպորտաժ է պատրաստել Գորիսում՝ տարբեր մարդկանց հետ զրույցից պատառիկներ քաղելով: Հեղինակ **Թոմաս Ֆրանկեն** (Thomas Franke) Հայաստանի եւ Ադրբեջանի մերձեցման մասին ակնարկն այսպես է վերնագրել՝ «Մերձեցում՝ ԼՂ հայերի հաշվի՞ն»: Ռեպորտաժում գերիշխող է այն մտայնությունը, թե Հայաստանի՝ Արցախի երաշխավոր լինելու փաստից հրաժարվելը նոր հոգս է կուտակել 120 հազար բնակիչ ունեցող Արցախում, 20 հազարից ավելի բնակչություն ունեցող Գորիսում, Հայաստանում: Մալինցյանների հյուրանոցը դեկտեմբերի 12-ից՝ Բերձորի արգելափակումից հետո, դարձել է արցախցիների սպասակայան. այստեղ հանգրվանածները մի բան են երազում՝ բացվի ճանապարհը, տուն գնան: Իսկ տուն հասնել կարող են ԼՂ-ում միակ միջազգային կազմակերպության՝ Կարմիր խաչի միջոցով: Սպասարանում է **Միքայել Պողոսյանը**, որ Արցախի բանակի թոշակառու սպա է, ակնաբույժի կարիք ունի: «Փոխանցեք ձեր կառավարությանը, որ ճնշում գործադրի Ադրբեջանի վրա, որ ճանապարհը բացի, տաքսի նստենք, տուն գնանք, գերմանացի լրագրողին է դիմում Պողոսյանը: Իսկ նրա պահանջը վերացական չէ: Չէ՞ որ հունիսին կանցլեր **Շոլցն** էլ **Ալիեւ-Փաշինյանի** բանակցային միջնորդներից էր: Իսկ բանակցությունները արցախցու տեսանկյունի՞ց են, նրա՞ շահն արտահայտող: Անշուշտ՝ ոչ: ՀՀ փոխարտգործնախարար **Վահան Կոստանյանի** հետ զրույցից մի հատված է ներկայացնում ռադիոռեպորտաժի հեղինակը, որ վստահեցնում է, թե Ղարաբաղի հայերի իրավունքների եւ անվտանգության հարցը մտահոգում է Հայաստանին, միջազգային հանրությանը պատվիրակել են արծարծել դրա հրատապությունը: Բայց, Արցախի ԱԳՆ-ի ղեկավարի խոսքը փոխանցելով, Թոմաս Ֆրանկը նկատել է տալիս, որ չճանաչված հանրապետության համար հնարավորությունները մեղմ ասած շատ համեստ են: Իհարկե փորձում են բարձրաձայնել երկյուղների մասին, այն, որ ցեղասպանության վտանգն առկա է»: Արցախը պիտի հայկական մնա, ռազմագերիներին պիտի ազատի Ադրբեջանը, սկզբում Բերձորի ճանապարհը պիտի բացի, դրանից հետո՝ մյուս հարցերի մասին, առաջնահերթությունների մասին է հիշատակում Գորիսի հյուրանոցի տիրուհին՝ այսպես եզրափակելով՝ մեր իշխանությունները պիտի պաշտպանեն մեր երկիրը:



Շվեյցարական «Նոյե ցյուրխեր ցայթունգի» հունիսի 12-ի հրապարակումը Երեւանից է գրված: **Անդրեաս Ռյուշը** (**Andreas Ruesch**) ծավալուն վերլուծություն է մատուցել՝ չափազանց խոսուն վերնագրով՝ «Երբ աշխարհագրությունը մղձավանջ է. Հայաստանը պատերազմի եւ կապիտուլյացիայի՝ հանձնվելու ընտրանքի առջեւ»: Հոդվածագիրը Հայաստանի աշխարհագրական դիրքը համեմատում է Շվեյցարիայի հետ՝ երկու երկրներն էլ ելք չունեն դեպի ծով, հյուսիսից, հարավից, արեւմուտքից, արեւելքից շրջապատված են մեծ երկրներով...այստեղ համեմատականի զուգահեռը սպառվում է՝ «երկու երկրի հետ դրացի ենք քարտեզով միայն, ներսուդուրս անել չենք կարող» քաղաքագետ **Ալեքսանդր Իսկանդարյանի** խոսքն է փոխանցում շվեյցարացի լրագրողը: Հարավում Իրանը, հյուսիսում Վրաստանը մեծ նշանակություն են ստանում Հայաստանի համար, սակայն աշխարհաքաղաքականության դերը չի նվազում՝ իրանցի իսլամիստների հետ յուրաքանչյուր գործարք՝ էլեկտրաէներգիայի արտահանում, գազի ներմուծում, ԱՄՆ-ի խոժոռ հայացքին է արժանանում: Ռուսաստանը մատն է բարձրացնում, երբ Հայաստանը ձգտում է Վրաստանի հետ սերտացնել համագործակցությունը: Աշխարհի գերտերություններին ամեն անգամ պիտի քարտեզը ցույց տալ ու բացատրել, որ Հայաստանը դրացիներին ընտրել չի կարող», Իսկանդարյանի մեկնաբանությունն է փոխանցում «Նոյե ցյուրխեր ցայթունգը»՝ կրկնելով՝ Հայաստանի աշխարհագրական դիրքը մղձավանջի է նման:

«Հայաստանը վերջապես ուզում է մեկուսացումից ազատագրվել, սակայն դա հաջողվի, եթե ոխերիմ թշնամիների՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ բնականոն դարձնի հարաբերությունները, անհրաժեշտության դեպքում՝ ցավալի զիջումների միջոցով: Հայաստանի կառավարությունը պարտավորված է համարում զիջել ռազմական գերազանցություն ունեցող Ադրբեջանին: Սակայն ընդդիմությունը « հանձնվելու հանգեցնող խաղաղությանը դեմ է», ընդդիմանում է», գրում է հոդվածագիրը նախաբանում: Ծավալուն հոդվածում այնուհետ որեւէ տող չգտանք, որ ընդդիմադիրների գործողությունների, նրանց ծրագրի մասին կծանուցեր: Տեղին է հիշատակել, որ գերմանալեզու լրատվամիջոցներում անընդհատ ընդգծվում է, որ Հայաստանի՝ Արցախից հրապարակավ, պաշտոնապես հրաժարվելու կրկնվող տեսակետը հնչելուն պես ակնկալվում էր, որ հայ հանրության մեջ դժգոհության ալիք կստեղծվի, բողոքի ալիք կկուտակվի, փողոց դուրս կգան: Սակայն նույն հոդվածում էլ ճիշտ փոխանցվել է, թե Հայաստանի ընդդիմությունը թույլ է:

«Վերջին զարգացումները հույս են ներշնչում լավատեսներին: Փաշինյանն ու Ալիեւը հունիսի սկզբին արդեն երկրորդ անգամ են հանդիպել, Փաշինյանը Էրդողանի վերընտրությանը հաջորդած հանդիսավոր երդմնակալության արարողությանն է մասնակցել, սակայն Հարավային Կովկասում խաղաղության հաստատման գլխավոր խոչընդոտը ԼՂ-ն է, գրում է շվեյցարական լրատուն: Ղարաբաղը գայթաքար է: Ադրբեջանը կամենում է իր լիակատար գերիշխանությունը հաստատել, մայր Հայաստանը՝ չի կարող արդյունավետ պաշտպանություն առաջարկել, քանզի վտանգված է տեսնում ի՛ր գոյը: Ադրբեջանի՝ Հայաստանի ինքնիշխան տարածքի հանդեպ կանոնավոր ռազմական առաջխաղացումները ընդգծում են այդ վտանգը: Հետեւաբար վարչապետ Փաշինյանն ինքնիրեն պարտավորված է համարում ամբողջովին ընդունել Բաքվի՝ ԼՂ-ի հանդեպ տարածքային պահանջները: 2018-ին իշխանության եկած ժողովրդի տրիբունի համար, որ ընդամենը մի քանի տարի առաջ «Ղարաբաղը Հայաստան է» կարգախոսն էր ավետում, սա դրամատիկ շրջադարձ է, ամբողջացնում է շվեյցարացի հոդվածագիրը:

«Փաշինյանի միակ պայմանն այն է, որ Ղարաբաղի շուրջ 120 հազար բնակիչների համար անվտանգության, մարդու իրավունքների պահպանման երաշխիքներ լինեն: Սակայն այստեղ էլ Ալիեւը կոշտ դիրքորոշում ունի՝ ղարաբաղցի հայերը իրավունք չունեն պահանջելու հատուկ կարգավիճակ: Ընտրության հնարավորություն կա՝ կա՛մ ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը, կա՛մ՝ հեռանալ տարածքից: Վերջինը՝ զանգվածային արտագաղթը, անկլավի ամբողջական էթնիկ զտումը միանգամայն իրատեսական սցենար» է, գրում է «ՆՑՑ»-ի մեկնաբանը՝ ընդգծելով՝ Հայաստանում չես հանդիպի մեկին, որ կարող է Ալիեւի ղեկավարած բռնատիրական պետության մեջ իր կյանքը պատկերացնել: Անցյալի եղեռնագործության հիշողությունն անջնջելի է, նույնիսկ այսօր Ադրբեջանում էթնիկ հայերը պաշտպանված չեն բռնի հարձակումներից»:

Հայաստանի իշխանությունները դեռ հույս ունեն, որ օտարերկրյա միջնորդների սատարմամբ կստեղծվի Ղարաբաղի հայերին պաշտպանելու մեխանիզմ, գրում է թերթը: Դրա հնարավորությունները նվազ են թվում, քանզի Ադրբեջանը հրաժարվում է բանակցություններից, չի ընդունում որեւէ միջազգային միջնորդություն այս հարցում: Բաքվի համար բանակցությունների վերջին փուլը բոլորովին այլ ուղղվածություն ուներ՝ Ադրբեջանի և Նախիջևանի միջև հայկական տարածքով տրանսպորտային միջանցքի բացումը, նկատել է տալիս «Նոյե ցյուրխեր ցայթունգի» մեկնաբանը:

«Ինչ դեր կարող են ունենալ մեծ տերությունները: Ուկրաինական պատերազմն էլ ավելի է բարդացնում իրավիճակը՝ Արևմուտքն ու Ռուսաստանը տարբեր շահեր են հետապնդում: Ռուսաստանը, որի հետ Հայաստանը թղթով ռազմական դաշնակից է, կարող է խաղալ պաշտպանի իր ավանդական դերը՝ միայն սահմանափակ ձեւով: Ղարաբաղում տեղակայված ռուսական «խաղաղապահ զորքերը» ոչինչ չեն ձեռնարկել Ադրբեջանի կողմից կրկնվող ռազմական հարձակումներին հակազդելու համար, ինչպես նաև հանդուրժում են Ղարաբաղը Հայաստանին կապող միակ ճանապարհի արգելափակումը», գրում է շվեյցարական թերթը: «Հայաստանը ուկրաինացիներից հետո, ուկրաինական պատերազմի ամենամեծ զոհն է, քաղաքագետ **Նարեկ Սուքիասյանի** դիտարկումն է փոխանցում «ՆՑՑ»-ը: «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի ծրագրերի ղեկավար Սուքիասյանի ներկայացմամբ՝ «Ռուսաստանը ներկայիս տկարության պատճառով ստիպված է ավելի շատ ուշադրություն դարձնել Թուրքիայի և Ադրբեջանի շահերին՝ ի հաշիվ Հայաստանի, որը շատ ավելի քիչ բան ունի առաջարկելու Մոսկվային: Անկարան և Բաքուն, մյուս կողմից, մեծ օգնություն են ցուցաբերում Ռուսաստանին՝ շրջանցելու արևմտյան տնտեսական պատժամիջոցները: Բաքուն գնում է ռուսական գազը, ինչը թույլ է տալիս ավելի շատ սեփական գազ արտահանել Եվրոպա:

Վերլուծականն անդրադառնում է Ռուսաստանի և Արևմուտքի մրցակցությանը: Սուքիասյանի խոսքով, Ռուսաստանի վարկանիշը Հայաստանում առավել տուժել է ղարաբաղյան հարցում աջակցության բացակայության պատճառով: Հայաստանի կառավարությունը վերջերս բազմիցս սպառնացել է դուրս գալ ՀԱՊԿ-ից, չեղարկել է զորավարժությունը: Մոսկվայի զայրույթն է շարժում փետրվարից Հայաստանում հյուրընկալված ԵՄ քաղաքացիական դիտորդական առաքելությունը:

Այդուհանդերձ Հայաստանը տնտեսական և ռազմական առումով այնքան կախված է Մոսկվայից, որ չի կարող պարզապես արևմտյան ճամբար անցնել, այլ՝ պետք է ուշադիր հավասարակշռի հետագայում էլ: «ՆՑՑ»-ի հոդվածագիրը նկատել է տալիս, որ Փաշինյանը վերջերս նշել է, որ Հայաստանն Ուկրաինայի հարցում Ռուսաստանի դաշնակիցը չէ: Բայց, շարունակում է շվեյցարացի հեղինակը, Հայաստանը միշտ ձեռնպահ է քվեարկել ՄԱԿ-ի՝ Ուկրաինայի դեմ ագրեսիվ պատերազմը դատապարտող բանաձեւերին, ինչն Արեւմուտքը չի ողջունում: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ն և ԵՄ-ն վերջին շաբաթներին նկատելիորեն ուժեղացրել են իրենց միջնորդական ջանքերը Հարավային Կովկասում: Նրանք Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչներին սեղանի շուրջ են բերել Վաշինգտոնի արվարձաններից մեկում, Բրյուսելում, Մոլդովայում:

«Արևմուտքը կրկնակի հնարավորություն է տեսնում, ասում է քաղաքագետ Սուքիասյանը. մի կողմից՝ նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում, մյուս կողմից՝ որպես խաղաղ կարգավորման բաղադրիչ, ապաշրջափակել Հարավային Կովկասի տրանսպորտային ուղիները, որ տասնամյակներ ի վեր արգելափակված են եղել: Արեւմտյան միջնորդները Ղարաբաղի ապագայի վերաբերյալ համոզիչ առաջարկով դեռ հանդես չեն եկել: Չնայած Վաշինգտոնում, Բրյուսելում և նույնիսկ Մոսկվայում խաղաղության կոչերին, տարածաշրջանում բռնության էսկալացիայի վտանգը դեռ սուր է: Եւ վտանգ կա, որ Ղարաբաղի հայերի շահերն անտեսվելու են», եզրափակում է «Նոյե ցյուրխեր ցայթունգը»:

Իսկ մենք դա արտոնելո՞ւ ենք: Ո՞ր իրավունքով:

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
պրոֆեսոր

# Շախմատային կայսրություն Հայաստանի գոյությունը վտանգված է


Շախմատ

Վերջին չորս-հինգ տարիներին իրար հետեւից փաստորեն ծանր պարտություններ կրեցինք ու անդառնալի կորուստներ ունեցանք, սակայն հրապարակախոսների մեծ մասը փորձելով ժողովրդին «փափուկ բարձի» սինդրոմով հանգստացնել՝ իրար կրկնելով հայտարարում են, թե հայ ժողովուրդն ավելի դժվար ժամանակներ ու իրավիճակներ է հաղթահարել, սա էլ կհաղթահարի: Ինքս էլ լիահույս եմ, որ կհաղթահարի եւ ինձ հույս է ներշնչում այն իրողությունը, որ գրեթե բոլոր հայերը լավ շախմատ են խաղում: Որ նրանցից յուրաքանչյուրը ճակատագրի բերումով կռիվ ունի այս աշխարհում, իր կռիվը պարտելու, դիմակայելու եւ, ինչու չէ, նաեւ հաղթելու համար է, իսկ շախմատը տալիս է այդ հնարավորությունը: Հավանաբար հենց պատճառը, որ երեք միլիոնից էլ պակաս բնակչություն ունեցող Հայաստանը ոչ ավել ոչ պակաս շախմատային կայսրություն է համարվում:

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) գործող օրենդրության համապատասխան՝ երկրի տարածքի որեւէ փոփոխություն ենթադրում է հանրաքվե: Նույնիսկ սահմանագծի որեւէ, թեկուզ նվազ չափի փոփոխում, անհրաժեշտ է իրականացնել հանրաքվեի միջոցով: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական հանրապետությունը (ՀԽՍՀ)՝ որպես սուբյեկտ, 70 տարի գործել է՝ միշտ ունենալով իր որոշակի սահմանները եւ դրանք համարվել են կարեւոր բնագծեր: Իսկ երբ օրինակ Անգլիան Բրեքսիթի միջոցով բաժանվեց Եվրոմիությունից, սահմանային խնդիր չկար եւ ամեն ինչ հեշտ ու խաղաղ ընթացավ: Սակայն երբ ԽՍՀՄ-ը լուծարվեց եւ 15 հանրապետությունները անկախացան, այդպես անցավ չեղավ: Տարբերությունն այն էր, որ Եվրոմիությունում բոլոր երկրները թեեւ համախմբված են որոշ գաղափարների եւ գործառույթների շուրջ, սակայն հիմնականում շարունակում են գործել որպես լիարժեք ինքնուրույն իրավական սուբյեկտներ: Նրանք դեսպաններ ունեն տարբեր երկրներում եւ վերջիններիս դեսպանները՝ իրենց երկրում: Այնինչ, ԽՍՀՄ-ի կազմում գտնվող հանրապետությունները առանձին իրավական սուբյեկտներ չեն եղել: Բացառություն էին թերեւս Ուկրաինան եւ Բելոռուսը, որոնք 1945-ին դարձան ՄԱԿ-ի անդամներ, սակայն իրականում այդպես էլ ինքնուրույն սուբյեկտներ չդարձան:

Ի դեպ, ԽՍՀՄ-ի լուծարումն ու դրա հետեւանքները ցայսօր լավ ուսումնասիրված չեն: Դրա հետեւանքով առկա են մեծ թվով իրավական, քաղաքական, տնտեսական եւ այլ բնույթի հարցեր ու հարցականներ: Չեն պատասխանվել այնպիսի կարեւոր հարցերի, որպիսիք են ժառանգության հիմնախնդիրն ու դրան ածանցյալ այլ բազմազան հարցեր: Օրինակ՝ ինչպես եւ ինչ հիմքով Ռուսաստանը համարվեց ԽՍՀՄ-ի ժառանգորդը եւ տեր դարձավ կայսրության ունեցվածքին ու ռեսուրսներին: Որոշ չափով պարզություն կար թերեւս միայն Մերձբալթյան հանրապետությունների դեպքում: Համարվեց, որ դրանք 1939 թ. օկուպացվել էին եւ ԽՍՀՄ-ի փլուզմամբ վերականգնվեց պատմական արդարությունն ու նրանք վերաանկախացան: Մյուսների դեպքում իրավական հիմք կամ դրա պատրանք է ստեղծում Ալմա-Աթայի համաձայնագիրը, որտեղ պարզապես արձանագրվեց ԽՍՀՄ-ի փլուզումը եւ նախկին խորհրդային հանրապետությունների անկախության փաստը: Նույն խորհրդային օրենդրության տառին համապատասխան փաստորեն անկախացավ նաեւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը (ԼՂԻՄ): Սակայն այդ փաստը միանշանակ չընդունվեց եւ որոշվեց դրա հետ կապված բոլոր հիմնախնդիրները քննարկելու համար կազմակերպել Մինսկի կոնֆերանսը եւ նույնանուն հանձնաժողով ստեղծել:

Հստակ է մի կարեւոր հանգամանք. Արցախը, որ մաս էր կազմում ԽՍՀՄ-ին, ինքնորոշվեց եւ անկախացավ այդ նույն ԽՍՀՄ-ից: Կարճ ասած՝ ԽՍՀՄ-ից անկախացան եւ պետական սուբյեկտներ դարձան հայկական երկու պետություն: Այնինչ, մեր հակառակորդների ջանքերով եւ մեր կարճատես գործիչների մեղքով տարածված է այն թյուր տեսակետը, թե իբր Արցախն անկախացել է Ադրբեջանից: Այստեղից էլ այն մեծաքանակ թյուրըմբռնումները, որոնք այսօր էլ գոյություն ունեն այդ հարցում:

Հիշյալ՝ 1991 թ. դեկտեմբերի 21-ին կնքված Ալմա-Աթայի հռչակագրի (դրանով վերահաստատվել է Բելովեժյան համաձայնագիրը՝ ԱՊՀ կազմավորման եւ ԽՍՀՄ-ի գոյության դադարեցման մասին: Ի դեպ, իրավաբանորեն ստորագրվել է՝ հակասելով «ԽՍՀՄ օրենք 03.04.1990 1409-I»-ի եւ ԽՍՀՄ պահպանման մասին համամիութենական հանրաքվեի արդյունքներին) 10-րդ հոդվում արձանագրված էր, որ ԽՍՀՄ սուբյեկտները կարող են անկախանալ: Արցախն էլ այդ նպատակով հանրաքվե կազմակերպեց եւ անկախություն հռչակեց: Իսկ այսօրյա մեր իշխանությունները ավելի հաճախ վկայակոչում են մադրիդյան սկզբունքները եւ հայտարարում, որ դրանց հիման վրա եւ Ադրբեջանից է անկախացել Արցախը: Այնինչ, այդ սկզբունքներում որեւէ կերպ չի ասված, ուղղակի գրված չէ, որ Արցախը կարող է կամ չի կարող անկախանալ: Հստակ է, որ մեր իշխանությունները ուղղակի մանիպուլյացիայով են զբաղված:

Հայաստանի Հանրապետության կնքահայրերը որոշել եւ Անկախության հռչակագրում արձանագրել են, թե ապագայում ինչպիսի պետություն ենք ունենալու: Շատ լավ հասկանալով այդ հարցի գերկարեւորությունը, նրանք թղթին հանձնեցին այնպիսի հռչակագիր, որում արձանագրված են համամարդկային այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հումանիզմը, մարդու իրավունքները, ցեղասպանության ճանաչումն ու պահանջատիրությունը, Արցախի վերամիավորումը եւ այլն, ինչպես նաեւ գրված են այն սկզբունքները, որոնք պետք է բոլոր սահմանադրությունների հիմքը դառնային: Այլ կերպ ասած, Հռչակագիրն է մեր պետության հիմքը, ԴՆԹ-ն, դիմագիծը: Դրանում են արձանագրված հայ ժողովրդի համազգային նպատակներն ու ձգտումները: Հետեւաբար, եթե երբեւէ հռչակագիրը խախտվում է (ինչն արվում է գրեթե ամեն օր), ապա այն կատարողները պետք է օրենքի ամբողջ ուժով հետապնդվեն:

Անկախության տարիներին՝ մինչեւ 2018 թվականը, Հռչակագրի սկզբունքները հիմնականում պահպանվում եւ աստիճանաբար իրականացվում էին: Հատկապես մինչեւ 2020 թ. այսօրվա համեմատ բոլորովին այլ պատկեր ունեինք: Սակայն չարաբաստիկ «Թավշյա հեղափոխության» բերած փոփոխություններից հետո ամեն ինչ սկսեց գլխիվայր շրջվել: Միմյանց հաջորդող զանազան գործընթացներ տեղի ունեցան, որոնց արդյունքները արձանագրվեցին տարատեսակ գրավոր ու բանավոր պայմանավորվածություններում եւ, ցավոք, դրանց բոլոր դրվագներում Հայաստանը միշտ զիջողի դիրքում եղավ: Ուստի պատահական չէ, որ այդ ամենի հետեւանքով այսօր Արցախում նույնիսկ տեսանելի է ցեղասպանության նախապատրաստման գործընթաց:

Արցախի կորուստն ու այս ամենը կարծես քիչ է, հիմա էլ Ալիեւի հողորտանքների տիրույթում սկսվել է այսպես կոչված **անկլավների հարցը** բուռն քննարկվել: Առանց տարբերակելու, թե խոսքը որեւէ գյուղում ազերիների բնակվելու մասին, թե իրավական որոշակի կարգավիճակ ունեցող գյուղերի, խոսում են ութ անկլավների մասին, այնինչ ՀԽՍՀ-ի տարածքում եղել են ընդամենը երկու՝ Ոսկեպար եւ Տիգրանաշեն անկլավները, որոնց տարածքը երկու անգամ փոքր է Արծվաշենից: Իրականում խոսքը ԽՍՀՄ-ի վերջին տարիներին հայ-ադրբեջանական սահմանների արհեստական եւ խիստ կամայական վերաձեւումների հետեւանքով ՀԽՍՀ-ի սահմաններց ներս ձեւավորված բնակավայրերի մասին է (հայ-ադրբեջանական սահմանների հիմնախնդրի մասին ավելի մանրամասն տես «ԱԶԳ» 02 եւ 07 հունիսի, 2023): Ավելին, առանց որեւէ հստակ հիմնավորման, չգիտես ինչու, հայ-ադրբեջանական միջպետական սահմանների որոշման հարցում հիմք են վերցրել 1975 թ. գծված քարտեզները: Մի բան, որը բացառապես բխում է ազերիների շահերից, որովհետեւ հայերի բարեհոգության արդյունքում ազերի խաշնարածներին զիջված յայլաներին այդ շրջանում արդեն տրվել էին անկլավներ հիշեցնող կարգավիճակ:

Ստեղծվել է մի իրավիճակ, երբ մի կողմից Թուրքիայի, Իսրայելի, Պակիստանի եւ այլ հակահայ պետությունների ակնհայտ հովանավորությունից թեւավորված Ալիեւն է ամեն օր հոխորտում ու տարատեսակ սպառնալիքներով ահաբեկում, իսկ մյուս կողմից նրանցից ոչնչով հետ չմնացող մեր ներկա վարչակարգն է պատերազմի սպառնալիքով սարսռեցնում հայերին եւ օրնիբուն թմբկահարում՝ ինչ ուզում են, տանք, որ հանգիստ ապրենք: Սակայն դարերից եկող փորձված խոսք կա՝ ախորժակն ուտելուց է բացվում: Մի բան, որ միշտ, ու նաեւ այսօր, հատկապես շատ բնորոշ է թուրք-ազերիներին: Հետո էլ, գրեթե բոլորը համարում են, որ ԽՍՀՄ-ը բռնապետություն է եղել, որ այդ իշխանության տարիներին մեծաթիվ անօրինություններ են կատարվել, ապա ինչպե՞ս եղավ, որ այդ նույն համակարգի պայմաններում գծված քարտեզները հանկարծ բոլորի համար դարձան օրինական եւ ընդունելի:

Մարդկային հասարակության փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր պայմանագիր ի վերջո թղթի վրա լավ կամ վատ ձեւակերպումներով գրված նյութ է, որը որեւէ պահի կարող է նետվել աղբանոց: Այնպես որ, գիշեր-ցերեկ տարբեր հարթակներում գովազդվող հայ-ադրբեջանական խաղաղության պայմանագիրը եւս այդ տիրույթից է: Առավել եւս, որ միջազգային բոլոր իրավանորմերով չի կարող մեկի անվտանգությունն ապահովել մյուսի հաշվին: Հետեւաբար ճիշտ կլինի, որ ոչ թե մենք ջուր չտեսած բոբիկանանք ու խոսենք անկլավների փոխանակման մասին, այլ լուրջ ուսումնասիրություններ կատարենք, բացահայտենք անօրեն ԽՍՀՄ-ում կատարված ապօրինությունները եւ ուղիներ մասնանշենք դրանք շտկելու համար:

Ընդունված է համարել, որ մարդը չպետք է գործիք լինի, այլ լինի նպատակ ու դրան հասնելու հիմնական կատարողը: Անկախության երեսուն տարիներին եթե մեզանում չեն զբաղվել այդ նույն մարդկանց իրավունքների պաշտպանությամբ, ապա ինչու այսօր, երբ կանգնած ենք պետականությունը կորցնելու վտանգի առաջ, հանկարծ դա խիստ առօրեական դարձավ: Այն, որ մեր ներկա իշխանությունները փորձում են տեղի տալ թշնամու ապօրինի պահանջներին եւ բոլոր հարցերում զիջումների գնալ, ապագա չունի, քանի որ ուժի սպառնալիքի ներքո սահմանների ձեւավորումը միջազգային օրենքներով առոչինչ է: Հատկապես, որ այդ զիջումների հետեւանքով կարող են մեր երկիր ներթափանցել ոչ ցանկալի սուբյեկտներ, որոնց հետագայում, երբ արդարությունն էլ հաղթանակի, դուրս հանելը նոր պրոբլեմներ կառաջացնի:

Այսօր, եթե իսկապես մենք ունենայինք իշխանությունների շուրջօրյա թմբկահարվող արդարադատությունը, ապա գլխավոր դատախազը վաղուց պետք է գործ հարուցեր եւ դրա շրջանակներում ճշտվեր, թե ով է դավաճանել, ով է սխալներ թույլ տվել, որեւէ ապօրինի թուղթ ստորագրել եւ այլ նմանօրինակ հարցերը պարզաբաներ: Թե չէ մարդը օրինական կադաստրի վկայական ունի այս կամ այն հողատարածքի համար, տարիներ շարունակ մշակել է այն, հարկեր վճարել, իսկ այսօր հանկարծ ասում են, որ դա քոնը չի: Ինչ-որ մեկը պե՞տք է պատասխան տա դրա համար, թե՞ ոչ, այսինքն՝ իրավանորմերի խախտումներն ակնհայտ են, սակայն որեւէ պատասխանատու չկա:

⇨11

# Ինքնորոշումը Արցախի հայերի անօտարելի իրավունքն է. Միխայիլ Ալեքսանդրով

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության «Մեժդունարոդնայա ժիզն» («Միջազգային կյանք») ամենամսյա հանդեսում «Լեռնային Ղարաբաղ. ապագայի գինը» վերնագրով հոդված է հրապարակել նույն գերատեսչության պաշտոնաթող ավագ խորհրդական **Ալեքսանդր Անանեւը**:

«Ամբողջ մայիս ամսին,- գրում է նա,- միջազգային միջնորդները փորձում էին առաջընթացի հասնել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի պայմանների համաձայնեցման բանակցություններում»: Թվարկելով Արեւմուտքում եւ Մոսկվայում տեղի ունեցած տարբեր մակարդակի այդ բանակցությունները եւ վերլուծելով դրանք ու առկա իրողությունները, հեղինակը մասնավորապես եզրակացնում է հետեւյալը: Եթե Արեւմուտքը կարողանար լուծել Անդրկովկասում խաղաղության հարցն առանց Ռուսաստանի, նա իհարկե, դա կաներ: Քաղաքական մակարդակով խաղաղության պայմանագիր հնարավոր է կնքվի Արեւմուտքի միջնորդությամբ, բայց դրա իրագործումը, միեւնույն է, հնարավոր չէ առանց Ռուսաստանի: Նույնը նաեւ՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանագծման ու սահմանազատման պարագայում, կարծում է հեղինակը:

Ռազմաքաղաքական հարցերի ռուսաստանցի փորձագետ, պատմական գիտությունների դոկտոր **Միխայիլ Ալեքսանդրովը**, Ռուսաստան-Արցախ բարեկամության ընկերության կայքում (http://russia-artsakh.ru/) ծավալուն անդրադարձ կատարելով Անանեւի հոդվածի տարբեր դրույթներին ու հարցադրումներին, հոդվածի փաստն ինքնին ուշագրավ է համարում, քանի որ, ինչպես նշում է, Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման թեման ԱԳՆ-ցիները հրապարակային քննարկել չեն սիրում, անգամ եթե պաշտոնաթող են: Միակ բացառությունը պաշտոնաթող դեսպան **Վլադիմիր Կազիմիրովն** էր, որը ժամանակին ղարաբաղյան ճգնաժամի կարգավորման միջնորդն էր եւ վճռական դեր կատարեց Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միջեւ կրակի անժամկետ դադարեցման 1994 թվականի մայիսի 12-ի համաձայնագրին հասնելու գործում: Կազիմիրովն այդ հարցում ազնիվ ու սկզբունքային դիրքորոշում էր հանդես բերում:

Տվյալ հարցի այդ մակարդակի մասնագետներ ՌԴ ԱԳՆ-ում, փորձագետի պնդմամբ, պարզապես չկան: Եվ թեման ինքն էլ շատ նուրբ թեմա է ոչ միայն արտաքին-քաղաքական պատճառներով, այլ նաեւ՝ որովհետեւ ՌԴ ներսում ադրբեջանական լոբբին իրեն պահում է հետզհետե ավելի ագրեսիվ ու հարձակվում է ամեն մեկի վրա, ում դիրքորոշումը ԼՂ կարգավորման հարցում իրեն դուր չի գալիս: Ըստ վերլուծաբանի, խնդրո առարկա հոդվածը հեղինակը սկսում է բավական պարզունակ հնարքով. որպես բնաբան անում է Աստվածաշնչից մի մեջբերում՝ «Երկմիտ մարդն անհաստատ է իր բոլոր ճանապարհներում» (Հակոբոս, գլուխ 1, հատված 8), որն առաջին իսկ տողերից պետք է ընթերցողի մեջ ձեւավորի Հայաստանի վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** բացասական կերպարը: Ապա նա Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) վերաբերմամբ գործածում է «անկլավ» եզրույթը, այսինքն այն նշում է որպես որոշակի տարածք, որը ԽՍՀՄ-ի կազմում որեւէ հատուկ իրավունք չուներ: Ինչը չի համապատասխանում իրականությանը: «Անկլավը», ըստ ամենայնի, չի կարող հավակնել ոչ մի հատուկ կարգավիճակի՝ անգամ Ադրբեջանի սահմաններում, էլ չխոսելով ինքնորոշման իրավունքի մասին:

Ապա ԱԳՆ նախկին խորհրդականը, անցնելով «իրականության պարզ աղավաղմանն ու խեղաթյուրմանը», պնդել է, թե «Ռեյկյավիկում (մայիս 16-17, Եվրոպայի խորհրդի 4-րդ գագաթնաժողով - Գ. Մ.) Հայաստանի վարչապետը պատասխանել է բոլոր հարցերին՝ հայտարարելով, որ փաստորեն հրաժարվում է Լեռնային Ղարաբաղին աջակցությունից»: Եվ դա այն դեպքում, նկատում է փորձագետը, երբ Փաշինյանը բազմիցս ընդգծել է, որ ԼՂ հայության «անվտանգությունն ու իրավունքները» պետք է լինեն խաղաղ կարգավորման անքակտելի մասը եւ Բաքվի խնդիրն է ուղիղ երկխոսություն սկսել Ստեփանակերտի հետ՝ այդ հարցերի լուծման համար:



Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգության ու իրավունքների պաշտպանումը, հավաստում է Մ. Ալեքսանդրովը, հենց այն պայմանն է, ինչի դեպքում ԼՂ հանրապետությունը կարող է իրականացնել ինքնորոշման իր իրավունքը: Ուշագրավ է, որ քննարկվող հոդվածի հեղինակն ինքը, ինչպես նշվում է, անուղղակիորեն խոստովանում է դա, երբ ներկայացնելով Ադրբեջանի դիրքորոշումը, ասում է, թե **Իլհամ Ալիեւը** կարգավորման գործընթացում «սկսել է հակվել ավելի առավելապաշտական դիրքորոշման՝ Ղարաբաղի հայերի անվտանգության միջազգային երաշխիքների պահանջը համարելով միջամտություն Ադրբեջանի ներքին գործերին»: Այսինքն, ի տարբերություն Անանեւի, Ալիեւի վարչակարգը հիանալի հասկանում է, որ այդ միջազգային երաշխիքները Լեռնային Ղարաբաղի հայերի համար ինքնորոշման ճանապարհ են բացում:

Փորձագետը նշում է, որ ազգերի ինքնորոշման իրավունքն ամրագրված է ՄԱԿ կանոնադրությունում՝ որպես միջազգային հարաբերությունների հիմնարար սկզբունքներից մեկը: Ահա թե ինչու դա Ղարաբաղի հայերի անօտարելի իրավունքն է: Եվ Հայաստանի կամ այլ պետությունների կողմից այն ճանաչելը կամ չճանաչելը ոչ մի կերպ չի ազդում ԼՂՀ այդ իրավունքի առկայության վրա: Այդ սկզբունքը, վերլուծաբանի վկայությամբ, ամրագրվել է դեռ «Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին» 1933 թվականի Մոնտեվիդեոյի կոնվենցիայում: Այդ փաստաթղթի հոդված 3-ում ուղղակի ասվում է, որ «պետության քաղաքական գոյությունը կախված չէ այլ պետությունների կողմից ճանաչումից» եւ որ «դեռ մինչ ճանաչումը պետությունն ունի իր ամբողջականությունն ու անկախությունը պաշտպանելու իրավունք»: Միջազգային իրավակարգում նաեւ հաստատուն ամրագրված է իրեն ճնշող պետությունից անջատվելու ժողովրդի իրավունքի դրույթը:

Ճանաչված քաղաքագետը նաեւ մի շարք հետաքրքրական դիտարկումներ է արել՝ կապված արցախյան հարցում Հայաստանի իշխանության ներկա դիրքորոշման հետ: Նրա գնահատմամբ, Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչումը չի թուլացնում, այլ ուժեղացնում է Երեւանի դիվանագիտական դիրքերը Արցախի հայերի ինքնորոշման հարցում: Ժամանակին հայկական դիվանագիտությունը, ճիշտ նկատում է նա, լուրջ սխալ գործեց՝ սկսելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շահերը ներկայացնել միջազգային ասպարեզում: Մինչեւ 1998 թվականը ԼՂՀ-ն հակամարտության կարգավորման բանակցություններում գործում էր որպես ինքնուրույն կողմ: Երբ Երեւանն իր վրա վերցրեց ԼՂՀ շահերը ներկայացնելու պարտականությունը, դա գործեց հօգուտ Ադրբեջանի, որն իրավիճակը սկսեց ներկայացնել որպես «Ադրբեջանի դեմ Հայաստանի ագրեսիա» եւ «Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքի օկուպացում»: Իրավիճակը հետ շրջելու Երեւանի փորձերը արդեն չհաջողեցին, քանի որ ադրբեջանական կողմը, բնականաբար, չցանկացավ կորցնել այդքան հաղթական դիվանագիտական դիրքը: Ինչի տխուր հետեւանքները, անշուշտ, դեռ շարունակում ենք տեսնել:

«Այն պատկերացումը, թե ներկա հակամարտությունը կկարգավորվի ամենամոտ ժամանակում, շատ պարզունակ է,- գրում է Միխայիլ Ալեքսանդրովը:- Կողմերի համար ընդունելի «խաղաղության պայմանագրի» կնքումն ինքնին մեծապես խնդրահարույց է թվում: Բայց եթե նույնիսկ ստորագրվի ինչ-որ փաստաթուղթ, այն կդառնա անժամկետ հրադադարի 1994 թվականին ստորագրված եւ Ադրբեջանի կողմից խախտված համաձայնության նման մի բան»:

Հետեւությունը մեկն է՝ իրավիճակն անվերջ կկրկնվի, մինչեւ չգտնվի արդարացի կարգավորում: Ցավոք, ռուսաստանցի փորձագետը տեսանելի հեռանկարում դա հնարավոր չի համարում:

Պատրաստեց ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆԸ

Լուսանկարը՝ «ԻԱ Ռեալիս» լրատվական գործակալության կայքէջից

# «ԱՄՆ-ը Ղարաբաղից պահանջել է հանդիպում Ադրբեջանի հետ»

Երեկ այս վերնագրով մի տարօրինակ լուր են հրապարակել ռուսական որոշ լրատվամիջոցներ: Իսկ նրանցից «Ռամբլեր.ռու»-ի վերնախորագիրն, օրինակ, որն առաջինն է աչքի զարնում մինչ լուրը «բացելը», պարզապես ապշեցնող է. «ԱՄՆ-ը Ղարաբաղին սպառնացել է, որ կլինի հակաահաբեկչական գործողություն»:

Լուրի սկզբնաղբյուրն, ըստ ամենայնի. «ՌԻԱ Նովոստի» գործակալությունն է, որի վերնագիրը սկսվում է «ԱՄՆ-ը Ղարաբաղին հարկադրում է...» արտահայտությամբ:

«Վաշինգտոնը Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին վերջնագրի ձեւով ստիպում է հանդիպել Ադրբեջանի ներկայացուցիչների հետ՝ երրորդ երկրում, իսկ հրաժարվելու դեպքում սպառնում է, որ կիրականացվի ադրբեջանական հակաահաբեկչական գործողություն», - ասվում է հրապարակված տեքստում՝ վկայակոչելով Վաշինգտոնում ՌԻԱ-ի դիվանագիտական աղբյուրը:

«Վերջնագրի տեքով Վաշինգտոնը Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին պարտադրում է համաձայնել ամենամոտ ժամանակում հանդիպելու ադրբեջանական կողմի հետ «երրորդ երկրում»՝ ամերիկացի համակարգողի մասնակցությամբ: Նպատակը ԱՄՆ-ի ներբերումն է տարածաշրջան»,- հայտարարել է գործակալության զրուցակիցը:

«Ավելին, եթե Ղարաբաղի ղեկավարությունը հրաժարվի նման շփումից, ապա նրան սպառնում են տարածաշրջանում ադրբեջանական հակաահաբեկչական գործողություն անցկացնել»,- պարզաբանել է նա:

Գործակալության զրուցակցի խոսքերով, ինչպես ասվում է հրապարակման մեջ, ամերիկյան «խաղաղարար նախաձեռնության» լոբբիինգն է անում Լեռնային Ղարաբաղի արտաքին գործերի նախարար (սա չակերտների մեջ է առնված - Գ. Մ.) **Սերգեյ Ղազարյանը**, «որի շահերը լիովին համընկնում են ադրբեջանականի հետ»: Մի՞թե հնարավոր է...

Այս սկանդալային թվացող հրապարակումը բազմաթիվ հարցականներ ու անհանգստություններ է առաջացնում: Մի՞թե միջազգային հիմնարար իրավունքներից մեկը համարվող ինքնորոշումը եւ դրա դիմաց Ադրբեջան կոչվող պետության ոչ մեկանգամյա լայնածավալ ագրեսիայից ու դրա նոր հեռանկարից հայ Արցախի ինքնապաշտպանությունը ԱՄՆ-ի համար արդեն ահաբեկչություն են եւ նա այսօր ցեղասպանական իրական վտանգի առջեւ կանգնած 120 հազար արցախահայությանը դեռ սպառնում է ադրբեջանական նոր ագրեսիայով, նախապես նաեւ «լեգիտիմացնելով» եւ ըստ էության հովանավորելով այն: Թե՞ սա ռուսական խանդով թելադրված չափազանցված ու սադրիչ տեղեկատվություն է:

Թվում է՝ Երեւանի եւ Ստեփանակերտի համապատասխան պետական մարմինները գիտեն իրենց անելիքը եւ չպետք է հապաղեն այս հրապարակման հետ կապված բոլոր անհրաժեշտ հանգամանքները ժամ առաջ պարզելու ու հնարավոր պաշտոնական ուղիներով հրապարակայնացնելու առումով:

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

# Կապիտալի կուտակումը՝ նորովի

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Մերօրյա հայաստանյան միջավայրին տրվող իշխանական ու որոշ հանրային ներկայացուցիչների կարծիքներում ու մոտեցումներում առօրյա խոսքերով սար ու ձորի տարբերություն կա: Եթե առաջիններն առաջնորդվում են ինչ-որ տեղում ինչ-որ միջոցներով կազմավորված զուտ մաթեմատիկական թվերով, երկրորդները նշում են առօրյայի սովորական ու անգամ վատացող պատկերը, տարբերական գնաճն ու դրա հետեւանքով արձանագրվող աղքատությունը:

Աշխատատեղերի ավելացումը պաշտպանել փորձող տնտեսագետ ներկայացող բանախոսներն ընդամենը մեկ-երկուսն են, հիմնականում պետական ուսումնական հաստատությունների վարչական աշխատողներ ու նախարարությունների բարձրագույն պաշտոնյաներ, երբ նրանց հակադարձողները շատ հաճախ անվանի գիտնականներն են, ոչ վաղ տարիների կառավարիչներ:

Թե ինչու ենք այսչափ տարօրինակ, թերեւս անօգնականի վիճակում հայտնվել, կարծես որեւէ մեկը չի պատրաստվում բացատրել, ամեն ինչ հանգեցնելով 500 կիլոմետր կազմող ճանապարհաշինությանը, մանկապարտեզների ու դպրոցների թվաքանակի ավելացմանը: Կարծես մեզանում արտակարգ ոչինչ է համարվում այն, որ խաղողագործության խթանման պետական ծրագրերին զուգահեռ այգեգործները քանդում են խաղողի այգիները, մարզում անգամ մեկ սպանդանոց չլինելու պարագայում մարզի անասնապահներից սպանդանոցային մորթի փաստաթուղթ է պահանջվում, փոքր ու միջին գործարարության հաստատություններն են տասնյակներով փակվում, ապագա կա-ն է հիմնավորապես սասանվում, մարդկանց հուսալքությունն է ավելանում: Միայն ոչ՝ պետական հսկայական ապարատի, ովքեր իրենց անգործությամբ մեր մարդկանցից ոմանց ստիպում են հուսալքվել չկա-ի մոտեցմամբ առաջնորդվել, իրենց հարցերը ինքնուրույնաբար լուծել: Տեսնենք ինչ է արել նման մեկը:

Մեր հայրենակիցը քաղաքաբնակ է, տան կից ոչ մեծ այգի ունի, որի մի անկյունում որոշել է... ջերմոց հիմնել: Սակայն արի ու տես, որ այն պատրաստելու համար անհրաժեշտ նյութերի գնման ոչ մի միջոց չունի: Նպատակ է դարձնում մոտ 30 քառակուսի մետր ջերմոցի կողահատվածների ու տանիքի պատրաստում... հանքային ջրերի պլաստմասսայե շշերի միջոցով: Շուրջ երկու տարի է տեւում գործընթացը, որն իրականացնում է ամենատարբեր միջոցներով, ծանոթ-բարեկամներից սկսած մինչեւ այլեւայլ վայրեր այցելություններով: Օրեր են եղել, երբ զղջացել է իր որոշման համար, սակայն հիշելով ժողովրդական շատ ասացվածքներ, համառության նոր որակներ է դրսեւորել: Հիմա ջերմոցը կա, ուր ռեհաններ են աճում, թող որ նվազագույն եկամուտներ բերում: Ջերմոցատերն իրեն ուղղված հարցերին ի պատասխան ասում է. - գոհ եմ, անգամ շատ գոհ:



Ինչո՞ւ հարկ համարեցի հիշեցնել տարիներ առաջ կայացած սույն փաստը. ակնարկով կանխելու հին ու նոր կառավարիչների այն անգործությունն արդարացնելու փորձերը, որոնցում հիշեցվում է, ասենք, հարուստ ընդերք, բարենպաստ կլիմա, դեպի համաշխարհային ջրեր ելք չունենալու հանգամանքները: Մեր հայրենակիցն էլ չունենալու մի երկար ցուցակ է արձանագրել, դրանց պարզելու հարցն է սահմանել, իր վիճակը գոհացնելու ելքերն է նախանշել, քրտնել է ու պաղել, մրսել է ու ջերմել, ինքն իրենից հոգնել ու նեղսրտել: Ամենայն համեստությամբ ակնարկենք, որ ՀՀ պաշտոնյաների ու կառավարիչների մեծաթիվ բանակն այսօրինակ հարցեր չունի, լավից-վատից նվազագույնը պաշտպանված է, սոցիալական կարգավիճակով ապահովագրված... եւ անգործության մատնված: Նման գնահատականը կազմավորվել է ՀՀ շարքային քաղաքացու ու իր շրջապատի հարյուրավոր ներկայացուցիչների վիճակի անորոշության արդյունքում, որոնց շարքում է մեզանում երկրորդական հումք հանդիսացողի հանդեպ վերաբերմունքը: Երկիր մոլորակի հարյուրավոր պետություններում այն վերամշակելով նոր նյութեր են ստանում, այրելով էլեկտրաէներգիայի կիլովատժամեր են արտադրում, մեզանում ահռելի ֆինանսական միջոցներ են ծախսվում աղբ համարվողը կուտակելու, դրա այրումը վերացնելու ուղղությամբ: Տարիներ առաջ եմ եղել Ավստրիայի բնակչությամբ 2-րդ Գրաց քաղաքի աղբի վերամշակման արտադրությունում, ուր սովորական ճարտարագիտական լուծումներ են ներդրված, որոնք հասու են մերոնց մասնագիտական ներուժին, կնշեմ՝ անգամ մի բան էլ ավելիով: Ավա՜ղ, հերթական «ավաղ»-ն ենք արձանագրելու, քանզի պարզ հարցը խնդրի չվերածելու ոչ ցանկություն կա, ոչ պահանջ, որն էլ հաստատում է, որ աղբ համարվողի գործարար շրջանակներում այլ շարժեր են տեղի ունենում:

Ինչպես շատ ու շատ այլ ոլորտներում, գրեթե բոլոր բնագավառներում: Օրակարգ է մտցվել ծխախոտի ու թունդ ալկոհոլային խմիչքի ակցիզային հարկի բարձրացումը, երբ հացամթերք արտադրելու ցորեն չենք մշակում, իսկ թանկարժեք օդի թորում ենք, բնակարանաշինությունն է աննախադեպ աճում , իսկ տեղում օժանդակ պարագաների արտադրություն չի նշմարվում, սկսած պարզ սռնիներից մինչեւ բարդ փականներ, փոքր ծավալների էլեկտրոմոբիլների արտադրությունը հեռավոր ժամանակների երազ է համարվում, քանզի ուժերը հարկ է կենտրոնացնել նոր ատոմակայան ունենալու ուղղությամբ, երբ ամենուր գերակա է դիտարկվում վերականգնվող էլեկտրաէներգետիկան, հանձին քամու, արեւի, ստորգետնյա տաք ջրերի: Ցանկալի տնտեսամիջավայր ունեցող երկրներում իշխանություններն աշխատում են ավելացված արժեքի նոր աստիճանի ստեղծման ուղղությամբ, մեզանում իրականացվում է այլոց արտադրածը ներկրելու ու վերաարտահանելու գործընթաց: Գործարարության յուրովի դրսեւորում:

ՀՀ բարձրագույն ղեկավարությունը շուրջ երեք տարի առաջ ընդունեց, որ երկրում բարեփոխումների հիմնական խոչընդոտ է հանդիսանում պետական ապարատը: Եվ ի՞նչ... կարծես ոչինչ, քանզի զարգացման նկատելի ծրագրեր գրեթե չկան, անգամ ավանդական ոլորտներն են դիրքերը զիջում: Այս առումով ԱԺ-ում 2022-ի կատարողականի քննարկման ընթացքում մի տարօրինակից արտառոց միտք հնչեցվեց. Խոսելով ահագնացող պետական պարտքի առաջիկա տարիների սպասարկման խնդրից, փորձելով շրջանցել այն ասվեց, որ մեզանում, այո, ներքին պարտքը թանկ է, բայց այն գնում է ներքին ռեզիդենտների հասցեին: Թե ովքեր են նրանք, հանրությունը մասամբ է տեղեկացված, քանզի կապիտալի կուտակումը նոր ու նորովի է սկսում:

Անակնկալների սպասենք:

13.06.2023թ.

## ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

# Օբյեկտիվ իրականության հակառակ կողմը

Վերջապես կարողացել ենք պարզել, որ մեր առօրյա կյանքում օգտագործվող բառերն ու արտահայտությունները կարող են ունենալ նաեւ հակառակ իմաստը՝ այնպես, ինչպես ժամանակն է պահանջում:

Օրինակ, սկսել ենք հասկանալ, որ մածունը կարող է անգամ սեւ լինել, իսկ «կարմիր գիծը»՝ կաս-կանաչ:

Արդեն գիտենք, որ տիեզերական ձգողության Նյուտոնյան օրենքը հիմնազուրկ է, եւ մեր մոլորակին չի վերաբերում:

Այլեւս կասկած չունենք, որ Երկիր մոլորակը մեկ աստղային օրվա ընթացքում, իր առանցքից բացի, պտտվում է նաեւ մի անձի շուրջը, եւ այդ անձը դո՛ւ ես:

Պարզել ենք, որ բանակցություններում հաջողության հասնելու համար պետք է ցածր նշաձող վերցնել, իսկ պատերազմները կանխելու համար՝ թշնամուն զրկել պատրվակներից:

Արդեն գլխի ենք ընկել, որ հուսալի ապագան կարելի է կառուցել նաեւ հեղհեղուկ ներկայի վրա:

Հասկացել ենք, որ բանակցությունները զրոյական կետից սկսելը երաշխավորում է բանակցային գործընթացի հաջողությունը:

Ապացուցել ենք, որ թիվ մեկ պատասխանատուի ու թիվ մեկ մեղավորի միջեւ տարբերությունն այնքան խորն է, որքան նախկինների ու ներկաների միջեւ գոյացած բաժանարար վիհը:

Բացահայտել ենք «հավասարակշռված» դիվանագիտություն վարելու լարախաղացային արվեստի եւ աշխարհաքաղաքական վեկտորների ընտրության հարցում անորոշության մեջ լողալու ողջ հմայքը:

Մեր գիտակցական հասունությունը մեզ թույլ է տալիս պնդելու, որ պարտությունը բնավ էլ պարտված լինելու նշան չէ:

Դժվարությամբ, բայց հետեւողականորեն սկսել ենք պատկերացնել, որ Արարատ լեռան իմաստը գիտակցության մեջ արտացոլվում է ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ է մարդկանց՝ իրենց նպատակին հասնելու համար:

Հասկացել ենք, որ հոգեւորական լինելը չի արտոնում քաղաքացուն, առանց կուսակցության մեջ մտնելու, զբաղվել քաղաքականությամբ:

Սերտել ենք այն ճշմարտությունը, որ թշնամու շեղահար գնդակը կարող է որոշել նաեւ հերոսածին մոր ինքնությունը:

Եվ վերջապես, հասկացել ենք, որ թագավորի մերկ լինելու կոնցեպտը մեզ հետ կապ չունի:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Շախմատային կայսրություն Հայաստանի գոյությունը վտանգված է

⇨9

Կամ, ՀՀ ամբողջ օրենսդրական նորմերով սահմանված է, որ եթե թեկուզ մեկ թիզ հող է հանձնվել, ապա պետք վարույթ սկսվեր եւ մանրամասն քննվեր ու մեղավորները պատժվեին, այնինչ ամեն ինչ կատարվում է կամայական մակարդակում, իսկ կատարողները, ինչպես իրենք են հայտարարում, «թեեւ պատասխանատու են, սակայն մեղավոր չեն»: Իսկական աբսուրդի դաշտի մտածողություն է: Չէ՞ որ սահմանադրությունը հենց նրա համար է գրված, որ որեւէ մեկն իրեն ուժեղ տղայի տեղ չդնի եւ իր ուսապարկերի աջակցությամբ աջ ու ձախ չխախտի այն: Հետո էլ՝ ում համար է գաղտնիք, որ այսօր մեզանում իրավական դաշտում համատարած հանցավոր անգործություն է եւ երկակի ստանդարտներ են գործում: Նույնանման գործերից մեկի դեպքում ասվում է, որ իրավախախտին պետք է կալանավորենք, որպեսզի կարողանանք առերեսում կատարել (այդպես եղավ հերոսածին մայր Գոհարի դեպքում), իսկ մյուսի դեպքում, երբ առկա են տեսագրություններ, կատարող անձերը նույնականացված են եւ այլն, ասվում է ճիշտ հակառակը՝ պետք է նախ առերեսում կատարենք, որ կալանավորենք կամ՝ ոչ (Եռաբլուրից զոհվածների ծնողներին հեռացնելու գործը): Հենց նման դեպքերի համար են մեր օրենսդիր նախահայրերը նախատեսել եւ իրավանորմի ձեւով ՀՀ քրեական օրենսգրքում ֆիքսել, որ սահմանադրական կարգի տապալման համար խիստ պատիժ է նախատեսված, իսկ իրականում այսօր մեկ անհատը փաստորեն իր ուզած ձեւով կամայականորեն մեկնաբանում է օրենքը եւ ինչ ուզում անում է:

Անկախ ամեն ինչից, որպեսզի պետությունը շարունակի գոյություն ունենալ եւ չքայքայվի, հարկավոր է, որ անկախ դիրքից ու պաշտոնից, բոլորը խստագույն պահպանեն Սահմանադրությունը: Ինչպես նաեւ չի կարելի Ցեղասպանությունն ուրանալ, իշխանությունը յուրացնել կամ բառախաղերով լղոզել այն, քանի որ դրանք բոլորը քրեորեն պատժելի արարքներ են: Հուսանք, որ արդարությունն ու արդարադատությունը մի օր մեզանում էլ կգործեն, եւ բոլոր մեղավորները կստանան իրենց արժանի պատիժը:

10.05-11.06.2023

# «Վերադարձել ենք 1990-ականներ ու ամեն քայլափոխի լսում ենք ոստիկանական բաժանմունքում ծեծի դեպքի մասին»

*Օրերս փաստաբանական համայնքն աղմկահարույց հերթական միջադեպի մասին բարձրաձայնեց: Փաստաբան **Կարեն Ալավերդյանի** պնդմամբ՝ մեղադրյալի աթոռին է հայտնվել այն բանի համար, որ փորձել է ոստիկանությունում փրկել պաշտպանյալին մի խումբ պարեկների ու ոստիկանների բռունցքների ու ոտքերի հարվածներից: Ավելին, ըստ նրա՝ պաշտպանյալին ծեծելուց հետո ոստիկանները նաեւ իրեն են բռնության ենթարկել: Այսքանից հետո իրավապահներն իրեն ու իր պաշտպանյալին են մեղադրանք առաջադրել խուլիգանության եւ պաշտոնատար անձի ծառայողական գործունեությանը խոչընդոտելու համար: Վերջին մի քանի ամսվա ընթացքում ոստիկանական բաժանմունքում փաստաբանին բռնության ենթարկելու երկրորդ դեպքն է գրանցվում: Թեմայի վերաբերյալ «**Ազգ**»-ը զրուցել է փաստաբան **Վարազդատ Հարությունյանի** հետ:*



**- Ոստիկանության բաժանմունքում փաստաբանի նկատմամբ բռնություն գործադրելն իրավապահ համակարգի ծառայակիցների համար ասես նորմա է դարձել: Ինչի՞ հետեւանք է սա:**

- Միջադեպին լավագույն գնահատականը տվել են փաստաբանական համայնքում՝ նշելով, որ վերադարձել ենք 1990-ականներ ու ամեն քայլափոխի հանդիպում կամ լսում ենք ոստիկանական բաժանմունքում հերթական ծեծի դեպքի մասին: Ակնհայտ է, չէ՞, որ բացահայտված եւ հրապարակված դեպքերի քանակն իրական դեպքերի թվի հետ հարաբերակցության մեջ չնչին թիվ է կազմում: Կարելի է, չէ՞, նաեւ պատկերացնել, որ Սարյան փողոցում, մարդկանց ու տեսախցիկների առջեւ մեկ հարվածով անձին գետնին տապալող ոստիկանն ինչերի է ընդունակ ոստիկանական մեքենայում կամ բաժանմունքում՝ կողմնակի աչքերից հեռու: Միանշանակ է, որ տեղի ունեցողն ուղիղ թողտվության արդյունք է: Բռնարար ոստիկանները քրեական պատասխանատվության անխուսափելիության պայմաններում չեն կարող այսպիսի վարք դրսեւորել:

**-Եթե նախորդ միջադեպի մասով պատշաճ քննություն տարվեր, իրավական գործընթաց ընթանար, կկրկնվե՞ր դեպքը:**

- Նախորդ դեպքը մոտ չորս ամիս առաջ է տեղի ունեցել, երբ ոստիկանության Էրեբունու բաժնում ծեծել էին երկու փաստաբանների: Այդ դեպքով փաստաբանների պալատի ճնշման արդյունքում՝ բռնարար ոստիկանների լիազորությունները դադարեցվեցին կամ կասեցվեցին, սակայն չորս ամիս է ինչ այդ պարզ գործի նախաքննությունը չի ավարտվում եւ, ըստ երեւույթին, տեղի է ունենում այսպես ասած՝ «գործի մաշեցման» պրոցես: Սրան զուգահեռ՝ տեսնում ենք, թե ինչպես է ընդամենը մի քանի օրում ավարտվում այն քրեական վարույթի նախաքննությունը, որտեղ տուժողը վարչապետի որդին է:

**- Ոստիկանության «բարեփոխման» սոուսի մեջ է նաեւ ոստիկանների՝ անչափահասների վրա ձեռք բարձրացնելը: Մոտ մեկ տարի առաջ պարեկը Վանաձորում էր անչափահասի ծեծել, մոտ տասն օր առաջ էլ Դիլիջանի՝ քրեականի պետի մասնակցությամբ սահմռկեցնող տեսանյութը ցնցեց բոլորիս: Սա՞ ինչի մասին է խոսում:**

- Անչափահասներին ծեծելու դեպքերին իրավական գնահատական տալը նշանակում է ոչինչ չասել: Բնականաբար, անչափահասների նկատմամբ բռնություն գործադրելու հանցակազմերը համապատասխան հանցագործությունների որակյալ (ծանրացնող) դրսեւորումներից են, իսկ բարոյական առումով, իհարկե, կտրականապես մերժելի է: Եթե անգամ անչափահասը հակաօրինական վարք է դրսեւորել, ապա դրա համար հատուկ կառուցակարգեր կան, օրինակ՝ հոգեբանի աշխատանք, դաստիարակչական միջոցառումներ եւ այլն:

**- Իշխանությունն անընդհատ խոսում է Հայաստանի՝ «ժողովրդավարության բաստիոն» լինելու մասին, բայց իրողությունները հակառակի մասին են խոսում: Հիմա մենք ինչի՞ բաստիոն ենք:**

- Հայաստանում տեղի ունեցողը ժողովրդավարության եւ դեմոկրատիայի հետ որեւէ աղերս չունի: Ոչ միայն ոստիկանությունը, այլ նաեւ բոլոր պետական մարմինները այսպես կոչված ինքնավար ռեժիմով են աշխատում: Պետական մարմիններում որեւէ մեկին չի հետաքրքրում օրենքը, իրավական կարգավորումները, պետական մարմնի նպատակները. նրանք առաջնորդվում են բացառապես այդ պահին այդ հիմնարկի ղեկավարի կամ ղեկավարների անձնական դիրքորոշումներով եւ քմահաճույքներով: Բանն այն է, որ այդ պաշտոնյաները տեսնում են, թե, ինչպես, օրինակ, վարչապետը կարող է ՀՀ ինքնիշխան տարածքներն առանց իրավական համապատասխան ընթացակարգերի բանավոր պայմանավորվածությունների հիման վրա զիջել թշնամուն եւ մտածում են, որ հենց դա է վարքագծի ընդունելի կանոնը: Հետեւաբար՝ իրենք էլ իրենց ոլորտներում են սեփական հայեցողությամբ վարչարարություն անում ու տարբեր հարցեր լուծում:

**- Եթե իրավապահ համակարգի ներկայացուցիչն անչափահասի է ծեծում, հետո՝ փաստաբանի վրա ձեռք բարձրացնում, բողոքի ակցիաների ժամանակ՝ լրագրողների ոտքի տակ տալիս, ապա ՀՀ շարքային քաղաքացին ինչպե՞ս իրեն ապահով զգա:**

- Քանի մենք այսպիսի հակաժողովրդավարական ընթացքի մեջ ենք, ապա որեւէ մեկն ապահովագրված չէ իրավական կամայականություններից: Շեշտում եմ՝ որեւէ մեկը: Նախորդ շաբաթ մի հետաքրքրական բան տեղի ունեցավ, որի մասին քիչ խոսվեց: Նախկին դատավորներից մեկը, դատարանում դիմելով դատավորին, ասաց, որ «վաղը, մյուս օրը դուք էլ կարող եք նստած լինել այս աթոռին»: Ահա այս խոսքերը պետք է լսեն եւ ականջներին օղ անեն բոլոր կամակատար եւ օրինախախտ պաշտոնյաները:

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Միջազգային գիտաժողով Երեւանում



Վերջերս Երեւանում մեկնարկեց Յակով Զելդովիչի անվան 5-րդ միջազգային գիտաժողովը՝ նվիրված աստղաֆիզիկայի եւ հարակից բնագավառների արդի ձեռքբերումներին, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 80-ամյակին:

Գիտաժողովը կազմակերպել է ՀՀ ԳԱԱ ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը: Գիտաժողովին մասնակցում են ՀՀ կառավարության եւ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչներ, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, շուրջ 100 գիտնականներ Իտալիայից, Գերմանիայից, Չինաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Անգլիայից, Հնդկաստանից, Իրանից, Չեխիայից, Բելառուսից:

Գիտաժողովին մասնակցում էին նշանավոր գիտնականներ, ովքեր ներկայացրեցին գործող առաջատար դիտակներով եւ արբանյակներով ստացված վերջին արդյունքները:

Կարեւորվեց ԻԿՐԱՆԵՏ-ի՝ որպես միջազգային համագործակցության կարեւոր հարթակի դերը: Այս հեղինակավոր միջազգային գիտաժողովի անցկացումը կարեւոր քայլ է աստղաֆիզիկայի ոլորտի զարգացման համար:

Գիտնականները գիտաժողովի ընթացքում ներկայացրեցին զեկուցումներ ժամանակակից աստղաֆիզիկայի արդիական ուղղությունների վերաբերյալ,ինչպես նաեւ խոշորամասշտաբ գիտափորձերի վերջին արդյունքները:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԲ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 15.06.2023, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: